

Հ. ՅՈՎՆԱՆԻԿ Վ. ՄԸՍԾՐԵԱՆ



ՆԻԿՈԼ ԱՂՐԱԼԵԱՆԻ

ԲԱՆԱՏԻՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ ԵՒ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ


— — — — —


1948

Տպ. «ՀԱՅ ՃԵՐԱԳԱՐԱԿԱՆ»
Պետրով

*Le présent opuscule, en langue arménienne, est consacré aux:
Travaux philologiques et Bibliographie
de Mr. NIKOL AGHBALIAN (1873-1947)
présentés
par le R. P. Jean Mecerian, S. J.
Professeur à l'Université Saint Joseph de Beyrouth.*

*la Revue «AGOS»,
XXII et XXIII (1948).
«Collège Arménien»
Beyrouth, Liban.*





929 շորացութեան : 891-981.09

891.9.9(09) [Արքայական]

Մ-66

Հ. Յ. ՄԵՍԵՐԵԱՆ

ՏԵՍԱԿԱՆ 1882


29907

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆԻ

ԲԱՆԱԱԻՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԸ

Եւ Խաչեան քառ թիվ 60

A ii
80551



Արտասպուած

«ԱԿՈՍ» ի Ա. Ի. Բ քիւեն
Եւ իգ. »

Տպարան «ՀԱՅ ՃԱՌԱԲՈՒՆԻ»

Պելրու, 1948



Ապրիլ, 1987



ՆԻԿՈԼ ԱՂԲԱՏԵԱՆ

շ : 391-981.09

Ռ. Խաչի

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՎԱՀՏԱԿԸ

«Աղբալեան մեծ մտաւորական էր, բայց քիչ բան արտադրած է, քիչ բան կը թողու...» . այս գատումը յաճախ լսած եմ: Ես ալ այդ կարծիքին կը հակէի, մինչեւ որ, պատրաստելու համար բանախօսութիւն մը անոր յիշատակին նուիրուած, ձեռք զարկի ցուցակագրելու և դասաւորելու հանգուցեալ մտաւորականին գրաւոր թէ բերանացի աւանդ ձգած աշխատասիրութիւնները: Գործս աւարտածիս պէս, ուրաքարեցի գատումս: Աղբալեանի ձգած աւանդը քիչուոր է անշուշտ, ըստ մեր բաղձանքին. բայց եղածն ալ բաւարար է, որպէսզի իրաւունք և պարտականութիւն ունենանք պատուոյ տեղ մը յատկացնելու անոր հայ մատենագրութեան պատմութեան մէջ: Աղբալեանի մըտաւորական թողօնը կարծուածին չափ ալ նիհար չէ և մանաւանդընիր է. որակին աղնուութիւնը կը լրացնէ քանակին պակասը, թե պետեւ համը բերաննիս կը մնայ անյագ:

Զեռնարկիս արդիւնքը հաղորդեցի Պէյրութի հայ մտաւորականութեան 1947 նոյեմբեր 16ին, Սէն Ժօղէֆ Համալսարանի Արեւելեան Դպրութեանց ամփիթատրոնին մէջ, Հայոգիտութեան ամբիոնին Ժե. աստրեշրջանին վերաբացման առիթով: Խորագիրս էր՝ Ն. Աղբալեան՝ բանական, բննադաս. իմաստաբան: Զայն ամբողջութեամբ արտատպեցին Աղդարար և Մասիս շաբաթաթերթերը (*): Սակայն բանախօսու-

*) «Ազգարար», թիւ 264-268 (Նոյ., Դեկտ. 1947): «Մասիս», Ա. Տարի, թիւ 47-50 (Նոյ., Դեկտ. 1947): «Յուսաբեր» եւս սկսաւ արտատել զայն:

թիւնս՝ մէկ պահու համար սեղմուած և ըստ այնմ դասաւորուած՝ ուրուագիծ մըն էր միայն Ն. Ազբալեանի՝ ամբողջական մտային վաստակին։ Հիմա «Ակոս» պարբերագրքի խմբագրութեան հրաւէրին պատասխանելով, քննութեան կ'առնեմ այսու մեր հանգուցեալ բարեկամին տարած բազմազան աշխատանքին բանասիրական բաժինը։

* * *

Բանասիր բառը զանազան առումներ ունի. թարգմանութիւն յունարէն Ֆիլօլօկոս բառին, ան կը նշանակէ սկզբնաւորապէս բան՝ խօսք՝ դրականութիւն սիրող, ուսումնասէր, հետեւող ուրեմն Ազբալեանի նախասիրած Աշուղի խրատին՝ գիր սիրէ, դալամ սիրէ, դավրաց սիրէ։

Սայաթ Նովային խրատը կը համապատասխանէ ֆիլօլօկոս բառը առաջին անգամ գործածող յոյն փիլիսոփայ Պղատոնի անոր մէջ պարփակած իմաստին։ Սակայն այդ քսաներեք դարու միջոցին և մանաւանդ յետոյ տասնըիններորդ դարու ընթացքին, բանասէր բառին իմաստը մերթ ընդլայնուած և մերթ սեղմուած է, դիմաւորապէս բուն լեզուաբանական ուսումներու զարգացումէն և ուրոյն ճիւղ մը կազմելէն իվեր։ Եթէ տակաւին Վոլֆի մը (Auguste Wolf, 1759-1824) տեսութիւնը ընդգրկելով, Սալոմոն Ռէյնաք (S. Reinach, 1858-1932) կ'ըսէր թէ՝ «Բանասիրութիւնը կ'ընդգրկէ մարդկային մտքի բոլոր արտայայտութեանց ուսումնասիրութիւնը ամենուրեք և ամեն ժամանակ», ուրիշներ՝ բանասիրութիւն բառին սիրմ իմաստով կը հասկընան այն ուսումները որ անհրաժեշտ են լեզուի մը գրական խորունկ ծանօթութեան համար, այսինքն՝ այդ լեզուին գործնական և նկարագրական քերականութիւնը, բնագիրներու քննութիւնը, հնախօսութիւնը, գրական պատմութիւնը, տաղաչափութիւնը, բայց միայն նըկատի ունենալով լեզուին փաստացի կոցութիւնը, լեզուական ու ոճային դէպքերուն ցուցակագրումը և դիւրըմբոնելի դասաւորումը։ Անոր կ'օժանդակէ անշուշտ լեզուներու ծանօթութիւնը, բայց բուն լեզուաբանութիւնը (*linguistique*) այդ սեղմ իմաստէն դուրս կը մնայ։

Բանասէր բառը աւելի լայն իմաստ ալ ունի, որ հայոցս քով աւելի գործածական է, և կ'ընդգրկէ բացի վերոյիշեալ ուսումներէն նաև լեզուաբանութիւնը. այսինքն լեզուի մը ծագման, զարգացման խընդիրները, ուրիշ լեզուներու հետ ունեցած առնչութիւնը, — և տուեալ լեզուով գրուած մասնաւորապէս հին մատենագիրներու եւ գրական շարժումներու ուսումնասիրութիւնը, խղաքակրթութիւն, արուեստ եւայլի։

Այս երրորդ առումը՝ բանասէր բառին՝ միջին տեղը կը բռնէ ուրեմն նախորդ երկու ծայրագոյն առումներուն և զայն է որ նկատի ունիմ. երբ Ազբալեանը բանասիր կը կոչեմ և անոր «Բանասիրական վասակր» խորագրով կը վերնագրեմ իմ յօդուածս։ Ուստի քննութեսէս դուրս կը մնան յանձին Ազբալեանի հայկական նոր գպրութեան

մեծագոյն ներկայացուցիչներուն գիրն ու միտքը ձանչցող, ըմբռնող և անտաշորօքէն՝ յատակօրէն ըմբռնելի գարձնող դրիչն և ուսուցիչը։ — ակնարկեցի Ազբալեանի գրախօսականներուն կամ դասախօսութիւններուն նուիրուած Աւետիք Խանակեանի, Վահան Տերեանի, Հայր Յ. Տաւեանի եւ Ալյանեանի, Եղիշէ Զարենցի, Արշակ Չօպանեանի, Լեւոն Շանի և Նիւթէս դուրս են նաև բնականաբար անոր պենուրագիրանները (portraits) որոնց նիւթն եղած են Ստեփանոս Նազարեան, Աւետիք Շահսարունի, Գիւտ եպս. Միսիրարեան, Մանուկ Ասլանեան, Բարսեղ Կանաչեան և օտարներէն՝ Անտոն Չեխով։ տակաւին ուրիշներ։

Կը յապաւեմ նոյնպէս կուսակցական ըեմբասացն ու տեսաբաննը, զանազան մշակութային հաւաքոյթներու փնտուած բանախօսը։

Այս բոլոր զրութիւններն ու ճառերը գլուխ-գործոցներ են, դրական գոհարներ, ուր երեւան կու գոյ Ազբալեանի հմուտ, արուեստագէտ, պերճախօս, ոճաբան բննադատի նիստականի տաղանդը, որուն քըն-նութիւնն եւս տեղ չունի իմ յօդուածիս մէջ։

Յանձին Ազբալեանի պիտի ցուցնեմ բանասերը, նկատի առնելով յաջորդաբար անոր լեզուաբանական խուզարկութիւնները, նին նայդպրուքեան ուսումնասիրութիւնը, և Սայաթ-Նովայի նուիրած բնագըրային և մեկնողական աշխատանքը։ Իր իմաստասիրական և կրօնական տեսակէտներն ալ նկատի պիտի առնուին միմիայն այս բանասիրական վաստակին գնահատման պահանջած չափովը։

Գլուխ Ա. Լեզուի Ամսագիր Աշխատանքներ

Բաւական մեծ թուով պարբերաթերթերու հաւաքածոներ պըր-պըտեցի և ինձ կը թուի որ համաշխարհային առաջին պատերազմէն ասդին լոյս տեսած են Ազբալեանի լեզուաբանական ուսումնասիրութիւնները, զորս հիւրընկալուծ են Հանդիս Ամսօրեայ (1926 — 1932), Սիոն (1927 — 1930), Հայրենիք Ամսագիր (1927 — 1930)։ Ան հրատարակած է նաև 1937էն 1942 տարիներու ընթացքին, ի Պէյրութ, զուտ լեզուաբանական՝ 22 զրքոյկ Բանասերի Յուշագիրը վերնագրով՝ որ կը կազմեն, 228 և 175 էջոց երկու հատորիկ (երկրորդը անաւարտ)։ Մի քանի մանրուք զետեղուած են Պէյրութի Ազգարարին և Ակօսին մէջ։ Պէտք է այս ցանկին աւելցնել հեղինակին՝ Հայոց Դրականութեան Պատմութեան Ներածութիւն հատորին Ե. գլուխը՝ Հայոց լեզուն։

1. ՀԱՅ ԼԵԶՈՒԻ ՆԵՐԱԾՈՒԹԻՒՒՆՆԵՐ

Հայ լեզուի շեշտադրեանը Ազբալեանի նուիրած յօդուածա-

շարքը «Հայրենիք Ամսագիր»ի մէջ (1928 և 1929) ինձ կը թուի ըլլալ անոր՝ ամբողջութիւն մը կազմող և թերեւս ամենէն ինքնատիպ՝ հոյակապ դործը։ Այդ ինը յօդուածները քննութեան կ'առնեն յաջորդաբար, յետ ընդհանուր դիտողութիւններու, հայկական շեշտադրութեան մասին առաջարկուած տեսութիւնները բանաձեւելով իր կողմէ սրբագրուած ամբողջացուած տեսութիւնն մը, և յետոյ մի առ մի ստուգելով և ապացուցանելով զայն հոլովի, միջարկութիւններու, բընաձայն և կրկնաւոր բառերու, սովորական բառերու և պարզ խօսքերու մէջ։ Մանրամասնենք մի քիչ։

Հայկական շեշտի խնդրով զբաղած են Այտընեան, Մալխասեան և Աճառեան. օտարներէն՝ Մեյյէ և Մառ։

Այտընեան (Քերականութիւն հայկագեան լեզուի. 1885, էջ 504) կ'ըսէ թէ «Հայերէն բառ մ'որ շեշտել պէտք ըլլայ, առհասարակ վերջին վանկն է շեշտ առնող» և կը բացատրէ թէ ո՛ր բառերը շեշտ չեն առներ, և ո՛ր բառերը այլուր կը շեշտուին։

Մալխասեան, ապրելով կովկասի մէջ, ժողովուրդի մօտ, և տեսնելով թէ արեւելահայ բարբառը շեշտադրութեան տարբեր կարգ ունի, կը սահմանափակէ այս պնդումի ոլորտը և կ'ըսէ. «Բառի շեշտունին բոլոր բառերը քիչ բացառութեամբ։ Այս շեշտը գրաբարում գտնուում է բառի վերջին վանկին վրայ» (Դրաբարի հոլովումը, խոնարհումը եւ նախադիրները. 1891, էջ 6-8):

Պարզելէ առաջ Աճառեանի բռնած միջին ճամբան, որը իր կարդին կը քննադատուի Ազբակեանի կողմէ, յիշտատիենք Մեյյէի և Մառի հիմնաւորումներն ու լրացումները։

Մեյյէ՝ Ռւբուագիծ դասական հայերենի բաղդատական հերականութեան (Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique Վիէննա, Զրդ. տպդ. 1936ին, ամբողջապէս վերամշակուած, որուն էջները կը յիշեմ հոս), շեշտադրութեան ուսումնասիրութեամբ կ'ըսկոի իր առաջին գլուխը, քանի որ հնդեւրոպական բառերու ձեւը էական փոփոխութեան ենթարկուած է հայկական հողի վրայ, շեշտի շնորհիւ։ Ասոր ակնյայտ նշանն է սա իրողութիւնը թէ համեմատելով հայերէն բառերը հնդեւրոպական ուրիշ լեզուներու բառերու, ինչպէս և անոնց ենթադրական նախաձեւերու հետ, Մեյյէ նկատած է որ հայկական բառերը մէկ վանկով կարծ են օտար բառերէն. օրինակ մը. հնդեւրոպական ենթադրեալ երիերես, սահսկրիտ՝ արհարած, յունարէն՝ եֆերէ, հայերէն՝ եբեր (— բերաւ) միայն երկու վանկով, միւսներուն երեքի տեղ։

Այս երեւոյթներուն վրայ կրթնած, Մեյյէ կը յարէ. «Հնդեւրոպական բառերու կերպարանքը էական փոփոխութեանց է ենթարկըւած հայ հողի վրայ շեշտի շնորհիւ։ Պատմական շրջանէն բառական

առաջ հայերէնի մէջ հաստատուած է ուժգնութեան շեշտ մը — անկասկած զօրեղ — հնդեւրոպական բառերու վերջընթեր վանկին վըրացա : Մեր վերեւ յիշած օրինակը մէջ բերելէ յետոյ, Մեյյէ կ'ըսէթէ հայերէն եքերը ատենօք եքիե՛րես ձեւը ունեցած ըլլալու է, զօրեղ շեշտով մը երկրորդ վանկին վրայ, և այս ուժգնութիւնը՝ երկու գըլխաւոր հետեւանք . նախ՝ հնդեւրոպական բառերու վերջին վանկի ձայնաւորները սղած են, որու հետեւանքով այդ բառերը սկզբունքով վանկ մը պակաս ունին հայերէնի մէջ . յունարէն և լատիներէն՝ պատեր, հայերէն՝ հայր . յունարէն՝ պենտէ, հայերէն հինգ :

«Որով բոլոր հայերէն բառերը, պատմական շրջանի սկիզբէն իսկ, շեշտուած են վերջին վանկին վրայ, և այս շեշտագրութիւնը յարատեւած է ցարդ բարբառներու մեծագոյն մասին մէջ : Սակայն, ինչպէս կը պատահի սովորաբար երբ շեշտը կը դարնէ բառին վերջին վանկին վրայ, ան տկարացած է աստիճանաբար, և հիմա հայկական շեշտը տկար է :

«Եոր լեզուի մէջ սակայն, նկատելի է, բացի բառին վերջաւորութեան գլխաւոր շեշտէն, երկրորդական շեշտ մը, որ կը զարնէ առաջին վանկին : Այս երկրորդական շեշտը ի զօրու էր նախ քան ներքին ա-ին անկումը, որ տեղի ունեցաւ դասական լեզուին գրով հաստատուն կերպարանք տռնելէն յետոյ : Արդարեւ ա-ը կը սղի միայն երբ բառին առաջին և վերջին վանկին մէջտեղն է . միջին դարուն կիլիկեան հայերէնին մէջ դասական հաւատամ-ը նկած է հաւատամ, ինչ որ կ'ենթադրէ նախնական ձեւ մը՝ հաւատամ : »

Ն. Մառ իր Հին հայերէն լեզուի մերականութիւնը (ոռուսերէն լեզուով) Մեյյէի գրքին առաջին ապագրութեան տարին իսկ, 1903ին, և հաւանօրէն անորմէ անկախարար լոյս ընծայած է . Ան նոյնպէս լըստ էր և կարդացած հայերէն բառերու շեշտին վերջին վանկին վըրաց գրուելուն տեսութիւնը . նշմարելով սակայն այդ տեսութեան հետ անհաշտելի մի շարք երեւոյթներ, յօրինած էր իր տեսութիւնը, հիմնըւելով միանգամայն վրացերէնի վրայ, որուն քաջածանօթ էր ան : Աղբալեանի յօդուածէն կ'արտասպեմ Մառի հատուածին թարգմանութիւնը (Հայրենիք Ամսագիր, 1928 փետր. էջ 83) :

«Հին հայերէնի մէջ շեշտը գրւում էր վերջընթեր վանկի վրայ : Եթէ որեւէ ձեւ կազմելու համար բառը երկարած է մէկ կամ աւելի վանկով, ապա շեշտն եւս դրա համեմատ փոխադրւում է նոր տեղը, բայց նա այնուամենայնիւ դրւում է վերջընթեր վանկի վրայ՝ հաշւելով վերջից : »

Բայց որն է վերջընթեր վանկը . Մառ կը յարէ .

«Հասկանալի է, ասելով վերջից երկրորդ կամ վերջընթեր վանկ՝ պէտք է պատկերացնել բառի նախառոր կերպարանքը : Յետագային

վերջին վանկը շեշտ չունենալով, ոչ միայն թուլանում էր և եթէ ձայնաւորը սղելով դառնում էր ծածուկ (այսինքն չգրուող ը-ով վանկ, ինչպէս՝ ոսկ(ը)ր, գառ(ը)ն եւայլն. Ն. Ա.), այլ երբեմն բոլորովին չքանում էր, ուստի և վերջից երկրորդ վանկը դառնում էր վերջից առաջին վանկ, այսինքն՝ վերջին վանկ։ Այնուամենայնիւ հայոց շեշտաղրութեան նախաւոր տեղը — վերջընթեր վանկը — մթագնած չէ դեռ եւս գրաբար լեզուի մէջ։ դեռ աւելին՝ հայոց շեշտաղրութեան այս հիմնական դրութեամբ միայն բացատրելի են ամենից աւելի բընորոշ երեւոյթները գրաբարի քերականութեանու (Ն. Մառ, էջ 34.5)

Վրացի լեզուաբանը կը նկատէր այնուհետեւ թէ հին հայերէնի շեշտաղրութեան կարգը պահուած է Ղազախի բարբառին մէջ, որ կը շեշտէ բառերուն վերջընթեր վանկը։ բայց ատիկա արդէն գրաբարի վերջընթեր վանկը չէ։ որ դարձած էր վերջին, այլ շեշտը մի վանկ առաջ է քաշուած։ Եթէ օրինակի՞ համար, բաղամ բառին հին ձեւը բաղամի էր (համ. վրացերէն բալամի). գրաբարը կը շեշտէր վերջընթեր վանկը՝ բաղամի, ուստի բառը իր վերջին անշեշտ ձայնաւորը կորսընցընելով դարձած էր բաղամի, իսկ Ղազախցին այս նո՞ր բառի վերջընթեր վանկն է որ կը շեշտէ ըսելով բաղամի, որ հնագոյն բաղամի ձեւի վերջինէն սկսելով երրորդ վանկն է և ոչ թէ երկրորդը։

Ուրեմն դասական շրջանի հայը, որ կը շեշտէր վերջին վանկը՝ բաղամի և նոր հայը որ կը շեշտէ նախորդ վանկը՝ բաղամի, շեշտաղրութեան նոյն օրէնքին կը հետեւին, որ էր վերջընթեր վանկը շեշտել, վասնզի դասական հայուն որդեգրած բառին բուն ձեւն էր բաղամի. և նոր հայունը՝ բաղամի. հետեւցնենք ուստի Մառի եւ Աղբալեանի հետ թէ պառն և փոխուած եւ ոչ թէ տեսի կանոնը։

Ըստ էութեան սակայն Ն. Մառն եւս կ'ընդունի որ գրաբար բառերու, այսինքն Ե. ՐԴ դարուն գրի առնուած լեզուին բառերուն մէջ վերջին վանկն է շեշտուած, որոնք երբեմն վերջընթեր էին։ Բայց անկ'աւելցնէ նորութիւն մը. այսինքն թէ սղած վանկերը բոլորովին մըթագնած չէին հին հայերէնի մէջ, և այդ հանգամանքով կարելի է բացատրել գրաբարի քերականութեան շատ բնորոշ երեւոյթները։

Եղբակացնենք Աղբալեանի հետ։ ԱԱմփոփելով զիտունների մտածումը կարող ենք ասել, թէ նրանց կարծիքով հնագոյն հայերէնի մէջ շեշտը վերջընթեր վանկի վրայ էր. զրա հետեւանքով բառերը կորցըրին իրենց վերջին վանկերը և Ե. դարում՝ երբ գրի առնուեց գրաբար լեզուն՝ մեր բառերը շեշտուած էին վերջին վանկի վրայ։ Յետագային հայոց բառերը երկրորդական շեշտ ունեցան. (Մէյէ). իսկ սղած հին վանկերը բոլորովին չմթագնեցին (Մառ)։ (Հայրենիք ամսագիր, 1948 փետրուար էջ 84)։

Աղբալեան կը կատարէ իսկոյն ճշղում մը Մեյյէի յայտնած տես-

սութեան երկրորդական ժեւզի մասին, փաստելով շնորհիւ օրինակներու թէ նախ այդ շեշտին աղղեցութիւնը չի տարածուիր բովանդակ հայ լեզուին վրայ, քանի որ, եթէ արեւմտեան բարբառներու մէջ նաւատամը կ'ըլլայ նաւտամ և քագաւորը՝ բագւոր, Ղարաբաղի մէջ անոնք կը դառնան՝ նրւատամ և բժաւեր. երկրորդ. այդ շեշտը զոյութիւն ունէր հայ լեզուի գրի առնուելէն առաջ իսկ, քանի որ ատկէ առաջ արդէն նինգիսունը, ըստ Մեյյէի խոստովանութեան, դարձած էր լիսուն, ինչպէս յետ զրով հաստատուելուն նաւատամը դարձաւ տեղտեղ նաւտամ. Աղբալեան կը յանգի հոս մի կարեւոր եղբակացութեան և Երկրորդական ժեւը գործուն է, եւ նախագրական տրջանում. նա ոչ քեզ լեզուի, այլ Հայոց լեզուի նիմնական երեւոյթներից մեկն է»:

Ի՞նչպէս քննել այդ նիմնական երեւոյթը: Այտընեան զրած էր ից ռժննական քերականութեանց ճակատին, թէ ռներկան անցածով լուսաւորելու էն. ռնոյնքան և աւելի ճիշդ է. կը յարէ Աղբալեան, եթէ ասենք թէ անցածը ներկայով պէտք է լուսաւորել: Հոս պիտանի կը զդամ մեր հանգուցեալ բանասէրին արտայայտած բանաձեւը հինի և նորի առնչութեան մասին, որ իրեն ուղի ցուցնող ջահերէն մին էր իր բոլոր ուսումնասիրութիւններուն մէջ. արտապել նոյնութեամբ.

«Պատմական գիտութիւնները ուրիշ հնար չունին անցածը հասկանալու և վերակոչելու քան ճանաչել և օգտագործել ներկան: Լեզուն պատմական երեւոյթ է. նրա անցեալը հասկանալու համար պէտք է դիմենք նրա ներկային, բարբառների ծայնաշրջման օրէնքները մենք պէտք է նախ ուսումնասիրենք և ապա կիրարկենք հին լեզուի վրայ՝ տեսնելու համար, թէ արդեօք այդ օրէնքները չե՞ն գործած նաև հեռաւոր անցեալում և չի՞ կարելի բառերի և ձիւերի հոլովոյթը նրանց միջոցով պարզել, այդպէս նաև շեշտադրութեան երեւոյթի քննութեան ժամանակ: Կենդանի բարբառների շեշտադրութիւնը կարող է մեզ հիմքեր տալ զբարար լեզուի շեշտադրութեան կարգը հասկանալու համար»:

Աղբալեան կը տարուի ուրեմն մանր քննութեան ենթարկելու Հ. Աճառեանի կարծիքները Հայոց կենդանի բարբառներու շեշտադրութեան մասին, քանի որ ան ամեն բանասէրներէն աւելի ուսումնասիրած է այդ ճիւղը արդի բարբառներու դասաւորման առնչութեամբ: Խիստ վճիռով մը կ'ըսկսի Աղբալեան իր քննութիւնը. ռթւում է թէ շեշտադրութեան երեւոյթները նրա ուշադրութիւնը չեն գրաւած այն չափով, որին արժանի էին: Իր կարծիքները շփոթ են, հակասական և տեսութիւնները կարօտ են վերստուգման: Աղբալեանի փաստարկութիւնը մէջբերելէ առաջ յիշատակենք Աճառեանի տեսութիւնը:

— Փրոֆ. Աճառեան հայ լեզուի շեշտադրութեան խնդիրը ուսումնասիրած է նախ 1899ին «Քննութիւն Ղարաբաղի բարբառին» մակագըրեալ յօդուածաշարքով ռԱրարատակի մէջ (յետոյ արտատպուած): Նոյն

խնդիրը լոլոր բարբառներուն համար ամփոփ կերպով քննած է իր Փարիզի աւարտական ճառին (Classification des dialectes arméniens, 1909), զոր ընդլայնելով լոյս ընծայած է հայերէն լեզուով աշխինեան Ազգագրական ժողովածութին մէջ, Ը. հատոր, 1911, «Հայ բարբառագիտութիւն».— Ուրուագիծ եւ դասաւորութիւնն իայ բարբառների, բարբառագիտական Խորհեսով։

Աճառեան իր ամբողջական տեսութիւնը հայկական շեշտի մասին սեղմօրէն բանաձեւած է այս վերջին գրքին մէջ, և զանազան բարբառներու քննութեան առիթով, լրացումներ կատարած է։ Աւստի այս գրքին պիտի ընենք մեր մէջբերումները։ Սակայն նոսխաւ պէս յարմար կը համարենք յիշեցնել հայադդի լեզուաբանին՝ առաջարկած հայ բարբառներու դասաւորումն ու կոչումները, որոնց վրայ հիմնուած է իր բանաձեւած շեշտաղրութեան օրէնքը։

Աճառեան սխալ և անյարմար կը գտնէր, իր գրած առենին ամեն տեղ ընդունուած և պարածուած բաժանումը հայերէն բարբառներու երկու ճիւղի հետեւեալ անուններով՝ արեւելեան կամ ուսահայ բարբառներ, և, արեւմտեան կամ տանկահայ բարբառներ։ Ան այս տեսութիւնները դեռ բաւական յարմար հնչող կը նկատէր այն ատենուան գրական լեզուներուն համար, քանի որ առաջինին կեդրոնը Թիֆլիսն էր, իսկ երկրորդինը՝ Կ. Պոլիս։ Սակայն բուն բարբառներուն համար կ'առաջարկէր կոչումներ, որ աւելի ճիշդ ըլլային աշխարհագրականօրէն և արտայայտէին միանգամայն անոնց տեսակը որոշող գլխաւոր յատկանիշները։ Ուրեմն մեծարոյ փրոֆէսէօրը կ'առաջարկէր հետեւեալ դասաւորումը, զոր կ'արտատպենք նոյնութեամբ, էջ 35 էն։

Ա. Ում նիւղ։— այս անունով կը հասկնանք արեւելեան կամ ուսահայ կոչուած բարբառներուն ամբողջութիւնը։

Բ. Կը նիւղ։— այս անունով կը հասկնանք արեւմտեան կամ տաճկահայ կոչուած բարբառներուն ամբողջութիւնը։

Ում ճիւղին պատկանող բարբառներուն մէջ ներգոյական հոլովը, ինչպէս և ներկայ ու անկատար ժամանակները կը շինուին ում մասնիկով։ ասիկա նոյն բարբառներուն հիմնական յատկանիշն է, ուստի և նոյն անունով կրնան կոչուիլ։ Իսկ Կը ճիւղին պատկանող բարբառները ներգոյական հոլով չունին, ում մասնիկը չեն ճանչնար և ներկայ ու անկատար ժամանակները կը կազմեն։ Կը մասնիկով։ ասիկա ալ իրենց հիմնական յատկանիշն է, ուստի և նոյն անունով կոչեցինք։

(Գ.) բայց այս երկուքէն դուրս կայ նաև երրորդ ճիւղ մը, որուն պատկանող բարբառները ոչ ում ունին և ոչ կը այլ ներկայ ու անկատար ժամանակները կը կազմեն անորոշ դերբայի կամ աներեւոյթի միջոցով և եմ էական բային յարադրութեամբ։ Մեր մէջ բալ-

բառներու այս ճիւղը առհասարակ զանազանուած չէ և կը կցուի Աւմ ճիւղին։ Մենք կ'առաջարկենք հոս Ել նիւղ անունը։

Այս հիման վրայ, ահաւասիկ Աճառեանի բարբառներուն աշխարհագրական դասաւորումը։

Ա. Աւմ նիւղ. — Երեւան, Թիֆլիս, Ղարաբաղ, Շամախի, Աստրաստան, Ջուղա, Ագուլիս։

Բ. Կը նիւղ. — Կարին, Մուշ, Վան, Տիգրանակերտ, Խարբերդ-Երզնկա, Շապին-Գարահիսար, Տրապիզոն, Համշէն, Մալաթիա, Կիւլիկիա, Ախրիս, Արտրկիր, Ակն, Սերաստիա, Երդոկիա, Զմիւռնիա, Նիկոմիդիա, Պոլիս, Ռոբիս, Աւտրիա-Հռւնդարիա։

Գ. Ել նիւղ. — Մարազա, Խոյ, Արդուին։

Արտատպենք հիմա Աճառեանի շեշտադրուկան բանաձեւը։

«Շեշտի կողմէ Երեւանի բարբառը խոշոր նորութիւն մը ունի։ Մինչեռ հին հայերէնը և Կը ճիւղին բոլոր բարբառները առանց բացառութեան՝ շեշտը վերջավանկին վրայ կը դնեն։ Երեւանի բարբառը վերջընթեր վանկին վրայ կը շեշտէ։ Շեշտադրութեան այս ձեւը աւելի ուժեղ չափով գոյութիւն ունի նաև Ղարաբաղի, Ագուլիսի և Տփղիսի բարբառներուն մէջ և կ'երեւայ թէ ամբողջ Աւմ ճիւղին հասարակաց է։ Ուրիշ տեղ (Քննուրիւն Ղարաբաղի բարբառին, էջ 185 արտատպումին) ցոյց տուած ենք թէ շեշտադրութեան այս եղանակը ձևացած է կովկասնեան լեզուներու ազդեցութեամբ և հետեւաբար հիւսիսէն ծագելով՝ հետզհետէ աւելի հարաւ տարածուած է։» (էջ 40-41)։

Նոյն զրքին մէջ ասդին-անդին, զանազան բարբառներու առիթով մանրամանօրէն կը յիշատակէ։ Աճառեան հոս յայտնած սեղմումները՝ համար շեշտադրութեան ընդհանուր կանոնին (վերջին վանկին վըրայ), «սեղմում» հասարակաց դարձած Աւմ նիւղի գրեթէ բոլոր բարբառներուն և նշմարուած նոյն իսկ Կը ճիւղին մէջ՝ Տրապիզոնի և Համշէնի համար։ Եւ այս սեղմումները, ըսենք այնքան տարածուած բացառութիւնները կը մեկնաբանէ հարեւան ոչ-հայ կամ յետագային հայտցած ժողովուրդներու լեզուներուն ազդեցութեամբ։

Մանրամաննենք քիչ մըն ալ Աճառեանի ամբողջական տեսութեան ստուարաթիւ բացառութիւնները։ Ահա Աւմ ճիւղին կարեւորակոյն և տարածուն կեդրոնները Երեւան, Թիֆլիս, Ագուլիս, Ղարաբաղ գանձակ, Լոռի չեն շեշտեր վերջին վանկին վրայ։ Չեն ըսեր գութա՞ն, մանգա՞լ, հապտ գո՞ւրան, մա՞նգաղ. չեն ըսեր հացի՞ց, հացո՞վ, հապտ հա՞ցից, հա՞ցով. փոխանակ գնացի՞, մնացի՞ ըսելու, կ'ըսեն՝ զնա՞ցի, մնա՞ցի։ Սակայն Աճառեան հաստատապէս համոզուած ըլլալով, նախորդ բանասէրներուն նման, որ գրաբարի շեշտին տեղը եղած է վերջին վանկը, և փաստօրէն նշմարելով համատարած շեղում Աւմ ճիւղի բարբառներուն մէջ, կ'ըսէ թէ այս շեղումը ըլլալու չէ հին ու բնիկ,

այլ՝ եկամուտ և համեմատաբար նոր երեւոյթ։ Այդ շեղումին, փոփոխութեան պատճառը կրնայ ըլլալ միմիայն օտար լեզուներու ազդեցութիւնը։

Արդ, այն շրջանները ուր գոյութիւն ունի շեղումը՝ Արարատան դաշտը (Երեւան), Արցախը (Ղարաբաղ), Դողթն (Ագուլիս), Սիւնիք (Զանգեզուր), Գուգարքը և Տաշիրքը (Լոռի), Գարդմանը (Ղազախ) և Եզերական Տփղիսը (Թիֆլիս) սահմանակից են կամ սահմանակիցներու միջոցով մերձակից Կովկասեան լեզուներ խօսող հողամասերու և այդ լեզուները վերջընթեր վանկին վրայ կը դնեն շեշտը։

Ուստի վերջընթեր վանկի, շեշտադրութեան եղանակը այդ լեզուներէն անցած է հայ բարբառներուն, չհիւսիսէն ծագելով՝ հետզհետէ աւելի հարաւ տարածուած է ինչպէս կ'ըսէր Աճառեան։

Նոյն լեզուաբանը նշմարելով յետագային նման շեղում մը Արնիւղին պատկանող երկու բարբառի մէջ ալ, կը դիմէր հոն եւս օտար լեզուի ազդեցութեան։ Տրապիզոնի և Համշէնի բարբառներն են անոնք։ Հարկ է յիշել Աճառեանի բանաձեւումը նոյնութեամբ։

«(Համշէնի) բարբառին մէջ ուրիշ նշանաւոր երեւոյթ մ'է նաեւ շեշտը։ Ինչպէս Տրապիզոնի, նոյնպէս և Համշէնի բարբառին մէջ շեշտը ըստ օրինի վերջին վանկին վրայ է, բայց արագ խօսակցութեան մէջ շատ անդամ կը պատահի որ երկու բարբառներուն մէջ ալ շեշտը բառին առաջին վանկին վրայ անցնի։ Ասիկա Պոնտոսի բնիկ ժողովուրդին Լազերու լեզուին ազդեցութեամբ է։ Լազերէնը կը շեշտէ առաջին վանկին վրայ։ Թէեւ շատ տեղ Լազերը իրենց մայրենի լեզուն կորսնցուցած են և թուրքերէն կը խօսին, բայց թուրքերէնը կը շեշտեն իրենց նախկին շեշտով, այսպէսով լազերէնի շեշտը անցած է թուրքերէնի և ասկէ ալ հայերէնի անցնելու վրայ է։ (Հայ բարբառագիտութիւն եւայլն, էջ 190—191)։

Այ նիւղին շեշտադրութեան վրայ դիտողութիւն չէ ըրած Աճառեան։ Այս է Աճառեանի զանազան առիթներով յայտնած, և սրբադրած կամ ամբողջացուցած շեշտադրական տեսութեան ամփոփումը, զոր դիտումնաւոր կերպով երկարօրէն պարզեցինք, որպէսզի հանգուցեալ բանասէր։ Ն. Աղբալեանին քննադատութիւնը և կառուցումը ըլլան դիւրըմբռնելի և գնահատուին ըստ իրենց արժանւոյն։

* * *

Աղբալեան Աճառեանի տեսութեան քննադատութիւնը կտտարած է գլխաւորաբար իր յօդուածաշարքի Գ. հատուածին մէջ (Հայրենիք Ամսագիր, 1928 Մարտ, էջ 67—75)։ Վերջինը յիշատակածա՛ կը նիւղին պատկանող Տրապիզոնի և Համշէնի բարբառներով կ'ըսկաի, կը շա-

բունակէ նոյն ճիւղին ուրիշ բարբառներով և կ'անցնի յետոյ Ում նիւղին ընդարձակագոյն բարբառներուն:

«Եսրամուխ լինելով սակայն Հ. Աճառեանի կարծիքի մէջ, մենք նկատում ենք մի շարք տնյարիր պնդումներ», այսպէս կ'ըսկսի Աղբալեան:

Պանտոսի երկու բարբառները: Աճառեան կը խոստովանէր թէ այդ շրջանի Հայերը արագ խօսակցութեան մէջ շատ անգամ առաջին վահակին վրայ կը դնեն շեշտը, ըսել է թէ ո'չ միւտ։ Ուրեմն Աղբալեան կը յարէ։ «Շեշտադրութեան այս եղանակը արմատացած չէ, այլ համեմատաբար նոր է սկսած։ Նա ոչ թէ անցած է հայերէնին և հաստատուած է, այլ ռանցնելու վրայ է»։ Մենք ուրեմն վկայ ենք երկու հայ բարբառների շեշտադրութեան հոլովոյթին, նրա փոփոխման և հասկանալի է, որ այդ եղանակը գործադրում է ոչ ամեն անգամ անխըտիր, այլ ռշատ անգամ և միմիայն ճարագ խօսակցութեան մէջ»։

Աղբալեան դիտել կուտայ թէ ռշատ տարօրինակ երեւոյթ է և Աճառեանի հնարած՝ այդ երկու բարբառներուն շեշտադրութեան փոփոխման եղանակը, որ տեղի կ'ունենայ եղեր ո'չ թէ բուն լազերեն լեզուի, հապա լազերուն խօսած բուրքերէնի ազդեցութեան տակ։ Ահա Աճառեանի իսկ նախադասութիւնը.

«Լազերէնի շեշտը անցած է թուրքերէնի և ասկէ ալ հայերէնի անցնելու վրայ է»։ Նշելէ յետոյ թէ թրքերէն բառի շեշտը սովորաբար վերջին վանկի վրայ է և անշուշտ կային Պոնտոսի այն հայաբընակ վայրերուն մէջ բուն թուրքեր, որ խօսէին իրենց մայրենի լեզուն բնիկ և հարազատ շեշտադրութեամբ, այսինքն բառերու վերջին վանկը շեշտելով, Աղբալեան անտառիկելի պատճառաբանութեամբ կը հետապնդէ Աճառեանի տեսակէտը։ Օգտակար կը նկատեմ մէջբերել այդ հետապնդումը նոյնութեամբ։ Երկայն է թէեւ, բայց պիտի ըւլայ միանգամայն նմոյշ մը Աղբալեանի գրելու կերպին։

«Պոնտոսի շրջանում այսպիսով երեք ժողովուրդ ապրում են իրար մօտ։ Թուրքեր, որ բառերի շեշտը դնում են վերջին վանկի վըրայ։ Հայեր — Տրապիզոնցի և Համշէնցի — որոնց լեզում ռշատ օրինի վերջին վանկի վրայ է» և լազեր, որ ռշատ տեղ» թրքախօս են, ուրիշ տեղեր պահած են մայրենի լեզուն, բայց թէ՛ թրքախօս և թէ՛ մայրենախօս լազերը շեշտում են բառերի առաջին վանկը։ Հայերի և թուրքերի բնիկ աւանդական շեշտը նոյն վանկերին է զարկում — այսինքն՝ վերջին։

«Ինչո՞ւ համար փոխանակ հայերը թուրքերին նեցուկ ունենալով՝ պահելու իրենց բնիկ ու հարազատ շեշտադրութեան եղանակը, թըրքախօս լազերի ազդեցութեան տակ փոխում են իրենց շեշտելու կերպը։ Միթէ այդ ընդարձակ շրջանում միմիայն լազափոխ թուրքեպը»

թէնն է տարածուած . մի՞թէ թուրքերէնին հարազատ՝ շեշտադրութեամբ խօսող բուն թուրքեր չկա՞ն այն կողմերը : Մի՞թէ Տրապիզոնի և Համշէնի բոլոր հայերը թէ՛ գիւղ, թէ՛ քաղաք, թէ՛ մեծ թէ փոքր, թէ՛ կին թէ՛ տղամարդ միմիայն Լազերի խօսած թուրքերէնն են լսում . թէ՛ կան տեղեր, ուր նրանք լսում են և բուն թուրքերէն իր բնիկ շեշտով որ նման է հայերէնի աւանդական շեշտադրութեան : Այս դէպքում ինչո՞ւ փոխում են նրանք իրենց շեշտադրութեան եղանակը և զարկում են բառերի առաջին վանկին աշատ անգամ և ռուրագ խօսակցութեան մէջ :

«Բայց դեռ աւելին կայ : «Թէեւ շատ տեղ լազերը իրենց մայրենի լեզուն կորսնցուցած են և թուրքերէն կը խօսին, բայց թուրքերէնը կը շեշտեն իրենց նախկին շեշտով» գրում է Հ. Աճառեան :

«Ռւրեմն շեշտելու եղանակն աւելի կայուն երեւոյթ է քան բուն խսկ լեզուն . . . մէկն աւելի շուտ է կորչում քան միւսը : Շատ տեղեր լազերը կորցրած են իրենց մայրենի լեզուն, բայց թուրքերէնը շեշտում են «իրենց նախկին շեշտով» . իբր խօսող՝ նրանք թուրք են . իբր շեշտող՝ — լազ :

«Արդ՝ այս յատկութիւնը միմիայն լազերի՞ն է յատուկ . արդեօք այսպէս չե՞ն նաև միւս ազգերն ու ցեղերը : Ինչո՞ւ համար հայը, որ դարեր շարունակ ռըստ օրինի» շեշտած է բառերի վերջին վանկերը և դարեր շարունակ ապրած է թուրքերի հետ, որ նոյնպէս շեշտում են վերջին վանկերը, սկսած է իր հին և աւանդական շեշտադրութեան եղանակը փոխել : Ինչո՞ւ թուրքերը պահում են իրենց շեշտելու եղանակը և միայն հայերն են փոխում : Բոլոր լազերը թուրքացած չեն, այլ նրանց մի մասը միայն, թէեւ աշատ տեղ » : Այս թուրքացած լազերի շեշտափոխ թուրքերէնը այն անտիճան գորաւոր աղդեցութիւն ունի, որ հայերին ստիպում է աշատ անգամ փոխել իրենց շեշտելու հին եղանակը . իսկ հայերի աւանդական շեշտադրութիւնն այնքան ուժ չունի, որ կարողանայ դիմանալ այդ աղդեցութեան, չնայած որ մի հոծ բազմութիւն բուն թուրքերի, որ ապրում են իր մօտ, որոնց հետ նոյնպէս նա շփում ունի՝ շեշտում են հայերի աւանդական եղանակով : Լազը կարողանում է իր բնիկ շեշտադրութիւնը պահել մինչեւ իսկ թրքախօս դառնալուց յետոյ, իսկ հայը հայախօս մնալով՝ փոխում է իր շեշտադրութիւնը թրքախօս լազերի աղդեցութեան տակ :

Աղքալեան իրաւունք ունէր եղբափակելու ստոպէս . «Զեմ կարծում, որ մէկը բանաւոր և բաւարար համարէ Հ. Աճառեանի բացատրութիւնը մեր երկու բարբառների շեշտադրութեան մասին : Այստեղ մի թիւրիմացութիւն կամ թերիմացութիւն կայ :» (Հայրենիք Ամս. 1928 Մարտ, էջ 69-70):

Կը նիւղի մասին . . . Աճառեան բացարձակ կերպով ըստ էր թէ

այս ճիւղին բոլոր բարբառները, դրաբարին պէս, շեշտը կը դնեն վերջին վանկին վրայ։ Կարնոյ բարբառին առիթով հետաքրքր քրական երեւոյթ մը մատնանշած էր ան։

«Կարնոյ բարբառը, ինչպէս կը ճիւղին պատկանող բոլոր միւս բարբառները, շեշտը կը դնէ վերջին վանկին վրայ։ Ատկայն կարնոյ բարբառը շեշտը առանձնապէս բնորոշող առոգանութիւն մը ունի, որ շատ ախորժելի տպաւորութիւն կը թողու։ Ասոր գիտական բացտարութիւնը կը դժուարիմ տալ, բայց կը թուի թէ հետեւեալն է։ Կարնոյ շեշտը միւս բարբառներուն շեշտէն աւելի բարձր է, հետեւեաբար անշեշտ վանկին ու շեշտեալ վանկին աստիճանաչափը աւելի մեծ է, միւնոյն ժամանակ արտասանութիւնը աւելի հանդարտ և երկարցուած ըլլալով՝ վայրէջքի ժամանակ ձայնը աւելի բազմաթիւ խազերէ կ'անցնի և գրեթէ երգ մը կը ձեւացնէ» (Հայ Բարբառագիտութիւն, էջ 108)։

Ուրեմն ըստ Աճառեանի կարնեցիները կ'ըսեն։ գուրա'ն, եկեղեցի՛, վարձարա'ն, և տյլն, և քա'ն, ցի՛, բա'ն վանկերը աւելի բարձր հնչումով կ'արտասանուին քան նախորդները։

Ահաւասիկ այս կէտին շուրջ ալ Աղբալեանի անառարկելի քըննադատութիւնը։

«Արդ՝ Հ. Աճառեանի ասելով բառերի վերջին վանկն է, որ շեշտը ուում է կարնոյ բարբառում։ Ամեն մի բառ վերջանում է իր վերջին վանկով։ Էետեւապէս կարնոյ բարբառի մէջ բառերը վերջանում են շեշտուած վանկերով։ Եթէ այդ վերջին վանկն է իրօք, որ շեշտէ առնում, ապա այլեւս չկայ և չի կարող լինել ոչ մի «վայրէջք» և ոչ ձայնի «բազմաթիւ խազերէ» անցում»։ Քանի որ շեշտուած վանկը վերջինն է և այլեւս տեղ չկայ ո՛չ իջնելու, ո՛չ անցնելու։ Եթէ կը վերջինն է և այլեւս տեղ չկայ ո՛չ իջնելու, ո՛չ անցնելու։ Եթէ կը վերջինն է առաջիկ գեռ երկու վանկ ունինք արտասանելու։ Բայց Հ. չեւ բառի վերջը գեռ երկու վանկ ունինք արտասանելու։ Բայց Հ. Աճառեան պնդում է, թէ կարնոյ բարբառն իբր կը ճիւղի բարբառ, բառերի վերջին վանկն է շեշտում, եթէ այդպէս է՝ «վայրէջք» լինել չի կարող»։

«Կարծում եմ պարզ է, որ Հ. Աճառեանի կարծիքները մեր կենդանի բարբառների շեշտադրութեան մասին ռշութ են, հակասական և վերաստուգման կարօտ։» (Հայր. Ամս. նոյն տեղը, էջ 70)։

Աղբալեան մաղթանք կը յայտնէ ո՞ր այս կարեւոր խնդիրը հետազօտութեան նիւթ դառնայ լիորհ։ Հայտատանի մէջ՝ ուր կ'ապրին հոծ զանգուածներ, որ կը խօսին կը ճիւղի բարբառներ։ «Այնակ իրար մօտ ապրում են Սասնոյ բարձր լեռների, Մոկս ու Շատախի

խորին ձորերի և Մուշ ու Բագրեսանդի դաշտերի հաղարաւոր բնակիչներ։ Քանի զեռ բոլորովին խաթարուած չեն նրանց բարբառները այն խառնարանում, որ Հայաստան է կոչւում՝ պէտք է շտապել պարզելու շեշտադրութեան խնդիրը։» (էջ 70)

Հանգուցեալ բանասէրը կը յիշատակէ իր անձամբ կատարած քանի մը փորձերը յօդուածաշարքը գրած ատենը Եգիպտոս գտնուող Հայերու մօտ՝ որոնք ծագումով էին Տրապիզոնցի, Կարնեցի, Խարբերդի եղէգ գիւղէն, Մշոյ Արտշ գիւղէն, բոլորն ալ կը ճիւղին պատկանող, և կը նշմարէ որ բոլորն ալ վերջընթեր վանկին վրայ կը շեշտեն։ Սիսալ է ուրեմն Աճառեանի բացարձակ պնդումը թէ կը ճիւղին բոլոր բարբառները վերջին վանկին վրայ կը դնեն շեշտը։

Ում նիւղին համար. — Աճառեան յիշատակած էր շեղումները իր բանաձեւած կանսնին և անոնց պատճառ կը վերագրէր, ինչպէս ըսինք տրդէն, կովկասեան լեզունկերուն ազդեցութիւնը։ Աղբալեան հոն եւս բարակ մաղէ կ'անցնէ հայ լեզուաբանին տեսութիւնը, որմէ դժբաղդաբար քիչ ցորեն կ'անցնի մաղին տակը։

Կովկասեան լեզուներ ըսելով կ'իմացուին վրացերէնը իր բարբառներով և կովկասեան շղթայի լեռնաբնակ ցեղերու լեզուները, ինչ պէս օսերէնը, ինդուշերէնը, Լեզգիներու և Զէչէններու լեզուն ևայլն։

Ճիշդ է որ վրացիները կը շեշտեն Ում ճիւղի բարբառներուն նըստան, ըսելով կա՛րի (գուռ), ծղա՛լի (ջուր), ծա՛լի (հարս), կա՛ցի (մարդ), ևայլն։ Եւ կովկասաբնակ բազմատեսակ ցեղերէն վրացիք միայն տեւական շփման մէջ դանուած են Հայոց հետ տնտեսական, քաղաքական և մշակութային մարզերու մէջ։ Բայց վրացիք կը բնակին Հայաստանի հիւսիս-արևեմաեան սահմաններուն վրայ և անմիջապէս կից են Գուգարքին։ Գուլով միւս լեռնականներուն, որոնց լեզուն իր շեշտին տեղը պարտադրած կը համարուի, հայ հողերէն բաժնուած են կուր գետի ընդարձակ հովիտով, որ կ'երկարի մինչեւ կոսպից ծովը. այդ ընդարձակ դաշտը ճախճախուտ և անմշակ էր հին ատեն, Ռուսաց տիրապետութեան ժամանակ միայն դարձաւ մասամբ մարդաբնակ։ Բայց Հայոց շփումը այդ վայրերու բնակիչներուն հետ չէ եղած լեզուական կամ մշակութային։ անոնք կը յարձակէին մերձակայ հայ կեդրոններու վրայ և գերելէ գերփելէ յետոյ կը քաշուէին իրենց լեռներն ու ձորերը։

Արդ Ում ճիւղին բարբառները տարածուած են Արաստանի սահմաններէն մինչեւ Ատրպատական, բռնելով Արարատեան դաշտը և Շարուրը մինչեւ հին Զուղա, և անցնելով Արաքուը՝ մինչեւ Ղարաբաղ։ Այս ընդարձակ տարածութեան վրայ կը դանուին գիւղեր որոնց ազգաբնակչութիւնը տեղահան չէ եղած և անշարժ մնացած կը համարուի, աւելի հին քան Հայոց գիրն ու գրականութիւնը՝ Սիւնիքի, Ար-

տախի, Գողթնի լեռներուն մէջ. հոն կան նաև Հայոց քաղաքական և մտաւորական կեդրոնները՝ Արարատիան դաշտին մէջ:

Միւս կողմանէ նկատի առնենք որ Հայաստանի հողին վրայ չկան ո՛չ վրացական և ո՛չ լեռնական ցեղերու գաղութներ: Ոչ իսկ հատակատ գիւղեր կան, մանաւանդ Սիւնիք և Արցախ: Լեռնականներուն լեզուն իմացող հազիւ թէ մէկ երկու մարդ գտնուէին Վայոց ձոր, Սիւնիք, Արցախ, Տաշիրք և Այրարատ: շատեր այդ ազգերու անունը լսած են, բայց աչքով տեսած չեն ո՛չ վրացի, ո՛չ ինդուչ, ո՛չ օս և ասոնց նմաններ: գուցէ կռուած էին անոնց դէմ, բայց ո՞ւրկէ ուր գիտնալ անոնց լեզուն, մանաւանդ Սիւնիքի, Արցախի և Գողթնի մութ ձորերուն և անտառներուն մէջ: Դրեթէ նոյն վիճակն էր վերջերս տակաւին, կային թէեւ երկաթուղի և խճուղի:

Այսպէս ըլլալով ազգաբնակչական շփումի տուեալները, միթէ տարօրինակ չէ՞ Աճառեանի մեկնութիւնը: Ի՞նչպէս կտրելի է որ Սիւնիքի պատգանաբարոյ վայրենագոյն և ճիւաղաբարոյ (Կորիւն) շըրջաններուն մէջ, Ա. Մեսրոպի յողոքներուն հետ գրաբարը լսող ու խօսող, երգող և հետեւաբար վերջին վանկին վրայ շեշտ դնող Սիւնիքի ժողովուրդը,— եթէ ճիշդ է վերջին վանկի շեշտին վարկածը—, կարողացած չըլլայ պահելու իր աւանդական շեշտը և ենթարկուի կովկասեան ցեղերու շեշտադրութեան եղանակին. ցեղերու, որոնց լեզուն կը լսէր ան հազուագիւտօրէն և ոչ ամենքն ու ամեն տեղ. ցեղերու, որ Հայաստան կուգային մեծ մասամբ իբր աւարառուներ:

Աւելին կայ. քանի որ Երեւանի բարբառն իսկ ըստ Աճառեանի փոխած է շեշտին տեղը, ըսել է թէ Արարատեան դաշտը, քաղաքական և մտաւորական կեդրոն, չէ կարողացած ո՛չ իր ոստանիկ լեզուին շեշտը պահել, ո՛չ նպաստել համացեղ ժողովուրդներու շեշտադրութեան պահպանման. թէեւ անոնք աւելի յաճախ կը շփուէին իրարու հետ քանի թէ օտարներու: Եւ ասոր փոխարէն կ'ենթադրուի թէ լեռնաբնակ խառնիճաղանճ ցեղեր, երբեմն երեւալով մեր երկրի մէջ, իրենց շեշտադրութեան եղանակը պարտադրեր են մեզ՝ Գանձակէն և Պարտաւէն մինչեւ Գողթն, և ստիպեր են որ մայր ու մանուկ իրենց մայրենի բարբառը շեշտադրեն լեռնականի պէս: Պոնտոսի Լազերը մինչեւ իսկ մայրենի լեզունին կորսնցնելով՝ պահեր են իրենց աւանդական շեշտադրութեան եղանակը, իսկ Հայերը հայ մնալով՝ փոխեր են իրենց շեշտելու կերպը:

Աճառեան և իր նմանները այն աստիճան առաջ գացած են որ, իրենց անհիմն տեսութիւնները պաշտպանելու համար՝ այսինքն օտար լեզուի ազգեցութեամբ շեշտադրութեան փոփոխութիւնը, ենթադրած են որ Արցախի, Սիւնիքի և Գողթնի բնակիչները, մեծազանգուած ցեղերէ բաղկացած, հայեր չեն, այլ ճարշացնել լեռնականներ, որոնք ըն-

դարձակ տարածութեանց վրայ ցըռուած՝ ամենէն շատը 1000 տարուայ մէջ այնպէս հայացած են, որ ոչինչ պահած են իրենց մայրենի լեզուէն՝ բացի իրենց շեշտելու եղանակը։ Մինչդեռ ըստ նոյն տեսաբաններուն, Ուդիացի չորս-հինգ գիւղ (Նիժ, Վարդաշէն ևայլն, Նուխիի շրջանին մէջ), թառած կովկասեան լեռներու հարաւային ոստերուն և Հայոց հետ քրիստոնեայ դարձած՝ 1500 տարիէ աւելի ապրեր են այլակրօն և այլաբարբառ լեռնցիներու մէջ և դարերը ճեղքելով՝ անմոռաց պահեր են իրենց մայրենի լեզուն։

Ահաւասիկ այս մասին Ա. Մեյյէի խօսքը որ հիմնուած է Աճառեանի հետազօտութեանց վրայ. «Յատկանշտկան է որ հարաւային կովկասեան լեզուները վերջընթեր վանկը կը շեշտեն և թէ վաղուց Ղարաբաղի և Ագուլիսի հայ բարբառները, որ հայացած կովկասեան բընակչութեանց բարբառներն են, վերջընթեր վանկի շեշտով փոխանցեցին գասական հայերէնին վերջին վանկին շեշտը։ Ամենէն հաւանականը սա է թէ շեշտին՝ վերջընթեր վանկին վրայ՝ նախագրական հաստատումը արդիւնք է մեծ մասամբ հայացած բնիկ ազգաբընակչութեանց ազգեցութեան, — որոնք, կովկասեան լեզու խօսող այսօրուան բնակիչներուն նման, վերջընթերին վրայ կը դնեն շեշտը. արդէն վերջընթերը ամենէն յաճախակի շեշտուող վանկն է մեզ ծանօթ լեզուներու մէջ.» (Esquisse d'une grammaire comparée de l'Arménien classique, Տրդ տպ. 1936, էջ 23).

Աղբալեանի հետ հարցնենք հիմա Աճառեանի, Մեյյէի և անոնցմէ առաջ Հիւրշմանի թէ ո՞ր տեղէ գիտեն որ հայացած բնիկները կը շեշտէին լեռնական ցեղերու նման։ Այս բոլոր օժանդակ տեսութիւնները կը յօրինեն այն պատճառով որ միանգամ ընդ միշտ համոզուած են թէ գըրաբարի շեշտը բառերու վերջին վանկին կը զանրէր և ուրեմն վերջընթեր վանկին շեշտադրութիւնը եկամուտ է և ձեւացած է օտար ազգեցութեան տակ։

Աղբալեան կը հարցնէր տակաւին. «Եւ չգիտես, թէ ի՞նչ հիման վրայ հնդեւրոպական ուրիշ լեզուներ կարող էին շեշտել վերջընթեր վանկը, իսկ մեր գրաբարը չէր կարող. ինչո՞ւ յունարէնը կարող էր շարժուն շեշտ ունենալ, իսկ գրաբարը — ո՛չ ու»

Ցարդ ամփոփած պատճառաբանութեանց վրայ հիմնուելով Աղբալեան իրաւունք ունէր վճռելու թէ Հայոց հին ու նոր լեզուի շեշտը վերջին վանկին վրայ չէ եղած և չէ և թէ մեր արդի բարբառներու շեշտադրութեան եղանակը բնիկ է և հին օրերէն կուգայ, գուցէ Ուրաբտական ժամանակներէ և հաստատուն մնացած է այնպէս որ ժողովրդական երգի երաժշտական շեշտն իսկ բառերու շեշտին կը հետեւի։

Տանում են, ապէ զան, տանս' ւմ են,
ինձ իմ եարից հանում են։

Հարկ է հոս արտադրել Աղբալեանի եղբակացութիւնը, ուր երեւան կու գայ միեւնոյն ատեն իր ուղեցոյց սկզբունքներէն մին, նոր հայուն մէջ հինին վերապրիլը:

«Ոչ մէկ հիմք կայ ենթադրելու, թէ գրաբար խօսող մեր նախահայրերը ուրիշ շեշտադրութիւն ունէին քան այսօրուան մեր բարբառները: Եթէ կան բարբառներ (ինչ որ տարակուսական է) որ բառերի վերջին վանկն են շեշտում՝ — ապա նրանք են շեղած աւանդական ճամբից, գուցէ թուրքերէնի աղղեցութեան տակ, որ ինչպէս տեսանք, բառերի վերջին վանկն է շեշտում: Վերջընթեր և ուրիշ վանկների շեշտադրութեան եղանակը մեր բնիկ շեշտադրութեան ձեւն է: Թէ հին հայը, որ խօսում է գրաբար և թէ այսօրուան Հայերը, որ խօսում են տարբեր բարբառներ՝ շեշտի տնսակէտով հարազատ ժառանգորդ են մեր հեռաւոր նախահայրերիւ (Հայրենիք Ամս. նոյն տեղը էջ 74.74):

Աղբալեան քանիցս փաստած է թէ բազմաթիւ մարզերու մէջ այսօրուան հայը հարազատ ժառանգորդն է: Իր նախահայրերուն: Հոս երախտապարտ ենք իրեն որ ձեռքովը վերցուց մեր լեզուի հետազատութեան հոսանքին առջեւ ինկած վերջին վանկի շեշտադրութեան ծանր ժայռը, ըստ իր տսացուածին. հիմա հետազօտութիւնը կրնայ ազատ ելք առնել: Եւ իրօք Աղբալեան բացուած առազաստներով հետապնդած է իր խուղարկութիւնը շեշտադրութեան ծովուն վրայ:

* * *

Եւ ահա Աղբալեան կը քննէ մի առ մի հոլովներու և բայերու ձեւերուն կազմութիւնը և շեշտադրութեան օրէնքի միջոցով երեւան կը հանէ սղած կամ անհետացած ձայնաւորներ (սղած և անհետացած նոյն բանը չեն, սղումը անհետացման առաջին քայլն է, որ միշտ վախճանին հասած չէ): Մեր այբուբէնին ը զիրը մեծ դեր կը խաղայ: Շեշտի միջոցով կը բացատրէ Աղբալեան հոլովներու մէջ կարգ մը բառերու կրկնակ ձեւերը, որ գոյութիւն ունին գրաբարի մէջ և տարբեր կազմութիւն կը մատնանշեն նաև դասական լեզուի և բարբառներու մէջ, որ պահած են ինչ որ բնական ձեւն էր նախազրական շրջանին: Մեր բանասէրը կը հետապնդէ շեշտին տեղը միջարկութեանց մէջ, բնածայն և կրկնաւոր բառերու մէջ, որ նոյնպէս շեշտին և անոր պատճառած սղումներուն կամ անհետացումներուն հետեւանքով կրկնած ձեւեր կ'ըստանան նորագոյն երանգաւոր իմաստով: Կը շարունակէ իր խուղարկութիւնը պարզ խօսքերու մէջ, պարբերութիւններու և երգերու մէջ:

Աւազ, յօդուածի մը հանգամանքը չի ներեր որ ներկայացնեմ այս բոլորը՝ համեմուած Աղբալեանի յօդուածաշարքին մէջ հոգեբա-

նական՝ լաւ զիտողի ասութիւններով և բացատրութիւններով։ Եւ այս պատճառաբանութիւններուն մէջ կը յինուի մեծ լեզուաբաններու, մասնաւորապէս Ա. Մելյէի հանձարեղ գրութիւններուն վրայ։ Այս յօդուածաշարքին մէջ հաստատած իր կառուցումը Աղբալեան կիրարկած է այլուր և նոր արդիւնքներ ձեռք անցուցած ձեւերու կազմութեան և կարգ մը բառերու ստուգաբանութեան մասին։

Համարնք իսկոյն ներկայ յօդուածաշարքին ընդհանուր եղբակացութեան։

«Մեր ընդարձակ հետազոտութեան իրր եղբակացութիւն կարող ենք ասել, որ նայոց լեզուի ժեօր կայուն չեղած եւ չեւ Նա կախուած է արտաբերութեան տարագներից։ Այս տարագներն են, որ կայուն ելեւէջ ունին։ Լեզուական զանգուածները ժեօւում են այդ տարագների նամեմատ։»

Կցենք նաև հետեւեալ բացատրութիւնը։ «Շեշաական այս կացութիւնը - վաղնջական է։ Միայն մեր լեզուն չէ, որ այդպէս է եղած և այդպէս է այսօր։ Հնդեւրոպական նախալեզուի շեշար շարժուն է եղած։ Այդպէս է եղած նաև սանսկրիտ և նախագերման լեզուի շեշար։ Այդպէս է այսօր լեթական եւ սլաւ մի քանի լեզուների շեշար։ Առանց ապացոյցներ բերելու կարող եմ ասել, որ մեր շեշաազրութիւնը նման է սլաւականին։ — Ռուսերէն իմացողները կարող են սառւգել ասածս։» (Հայրենիք Ամս. 1929 մարտ, էջ 165)։

Ընթերցողին ուշադրութիւնը կը հրաւիրեմ ընդգծած տողերուս վրայ։ Աղբալեան տապալեց լեզուաբաններուն սխալ զետեղած և այսպիսով յառաջխաղացքը արգիլող վերջին վանկի շեշտագրութեան ժայռը։ բայց ո՞ւր փոխադրեց զայն։ վերջընթեր վանկի՞ն, կամ անոր նախորդի՞ն, կամ արդեօք երբեք վերջին վանկին։

Ոչ, կայունը ժեօր չելեւէջը։ Ելեւէջն իր կարգին որու տեղ չունի ինք իրմէ, նապա զայն կը ստանայ արտաբերութեան տարագնեն։ Այս է Աղբալեանի եղբակացութեան իմաստը։ իր վերջին յօդուածին նախորդ էջերը պատրաստած էին զայն լաւ ըմբռնելու։ Բազմաթիւ օրինակներ ներկայացնելէ յետոյ, ըստ էր (նոյն տեղը, էջ 160)։

ռեւստի ասել թէ մի բառ այս ինչ շեշտն ունի՝ իսկապէս նշանակում է ասել, թէ նրա այս ինչ ձեւը այս ինչ շեշտն ունի։ և ուրիշ ոչինչ։ Այդ նոյն բառը մի ուրիշ ձեւի մէջ կարող է տարբիր շեշտ ունենալ և ոչ ոք կարող է ասել թէ այս նոր շեշտը նոյն բառինը չէ։ Ասում ենք, «Խօսի՛ր»։ բայց նաև «Խօսե՛ցի»։ Ո՞րն է «Խօսել» բայց շեշտը։ — Ե՛ւ մէկը և՛ միւսը։ միայն թէ մէկը մի՛ ձեւի շեշտն է, միւսը՝ միւս ձեւի։ Բառերը եւ ձեւերը որու ժեօտ չունին, նրանք ժեօտ առնում նալած իրենց ձեւին ու տեղին խօսի մէջ։» (Արտաբերութեան տարազը բառին ձեւն է և զայն պարունակող խօսքը)։

Ընդգծած բանաձեւնիս հայ շեշտադրութեան ուսկեայ կանոնն է, զոր Նիկոլ Աղբալեան շատ յաջող կերպով արտայայտած է և փաստած։ Կը ցաւինք որ Ա. Մեյյէի հայերէնի բաղդատական թերականութեան վերաքննութեան ատեն Աղբալեանի տեսութիւնը նկատի չէ առնուած։ Աճառեանի կարծիքները արդէն հինցած էին այն ժամանակ։ Բայց արդեօք ինք Աճառեան, վերջին տարիներու հրատարակած լեզուարանական և մանաւանդ բարբառագիտական աշխատանքներուն մէջ, նկատի առած է Աղբալեանի խորունկ հետազոտութիւնը, չենք դիտեր, ձեռքի տակ չունենալով զանոնք ամբողջովին։ անհաւանական է որ Երեւանի մէջ Աճառեան Հայրենիք Ամսագիրը ձեռքի տակ ունեցած ըլլայ և կամ կարելիութիւնը զայն յիշելու իր անունովը։

Աղբալեան, վերջին բանաձեւին առիթով, հարց կու տար թէ ինչո՞ւ բառերը շեշտ կ'առնեն և թէ ինչո՞ւ անոնց շեշտը շարժուն է։ Այս կարեւոր կէտը, — որուն խնդիրը կ'ըսէ ան—, պիտի ուսումնասիրենք յաջորդ ենթահատուածին մէջ։

2. ԱՂԲԱԼԵԱՆԻ ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ՄԵԹՈՏԸ

Հսի թէ շեշտի գոյութեան և շարժականութեան պատճառը քըննելու կը ձեռնարկէ ն։ Աղբալեան իր հետազոտութեան վերջին յօդուածին մէջ և ասոր համար կը տարուի ուսումնասիրելու ընդհանուր առմամբ լեզուի, խօսքի ծագման հարցը։ Նոյն խնդրոյ անդրադարձած է այլուր՝ բառերու կազմութեան, իմաստառութեան և ձեւին ու իմաստին կրած հոլովոյթին առիթներով։ Հոն երեւան կու զայ Աղբալեանի լեզուարանական մեխոաը, իր յատկանշական գերազանցութեամբ, մերթ եւս տկարութեամբ։

Ահաւասիկ մեր բանասէրին տեսակէտը լեզուի ծագման մասին։

Ակարծում եմ ոչ ոք կարող է հակածառել, եթէ ասեմ, որ մարդու մէջ անասունը աւելի հին է քան ասունը։ Կարելի է հաստատապէս պնդել, որ մեր մէջն եղած ռմարդը մշակոյթի արդիւնք է և համեմատաբոր նոր երեւոյթ է։ Այն կենդանին, որ յետազային մարդ դարձաւ, անշուշտ իր ներքին աշխարհն արտայայտում էր զանազան ձայներով։ Մինչեւ իսկ շունը, որ շուն է, հաշելու զանազան կերպերունի, որ մեր ժողովուրդը տարբերում է և որակում յատուկ բառերով։ ռմարդահաշուազ (զայլահաշ), ռլուսնահաշ։ Երբ Փայտով կամ քարով զարկում ենք շանը, նա մի ոտը վեր քաշած փախչում է և ռկալանչում։ նա ցրտից ռվանդը էն և այլն։

ԱԱրդ՝ մարդն եւս, երբ կենդանի էր և անասուն, իր ներքին աշխարհն անշուշտ այս կարգի անյօդ ձայներով էր արտաբերում։ Կենդանական ձայները սակայն, թէեւ յօդաւոր շեն, բայց կշույթ ունին։ Շան հաշոցի մի կշույթ կայ, ինչպէս աքաղաղի կանչի մէջ։ Նրանց անյօդ ձայները իրենց հատածները ունին, իրենց վերին ու ստորին

խազիրը, իրենց շնչտաւորն ու անշնչտը։ Մարդանասունի այդ խառըն ձայներն էին, որ յետագային սրարզուելով դարձան տրոհելի հընշիւններ և իրենց խմբումներով առաջ բերին յօդաւոր բառեր։ Հին կշոյթները փոփոխութեան ենթարկուեցին, բայց մնացին կշոյթ։ Ինչպէս մեր ողնաշարի վարի ողները գնալով տափակցան, ու փոքրացան, բայց այդ հանգամանքն արգելք չէ, որ նրանք մեր երբեմնի պոչը նկատուին։ թէեւ կարճացած՝ բայց և այնպէս՝ պո՛չ, այնպէս էլ կենդանական մեր վաղեմի կշոյթը թէեւ փոփոխուեց, բայց մնաց կշոյթ։ Մեր խօսելն, անշուշտ, ոչ շան հաջոց է, ոչ առիւծի մռնչոց, բայց նրանց նման մեր խօսքը շարունակում է կշոյթ ունենալ։ Մի ժամանակ՝ անասնական խառն ու անորոշ ձայներ էին, որ կշոյթով արտաքերում էր մարդու բերանը։ հիմա յօդաւոր ձայների որոշ խըմբումներ են, որ արտաքերում է նոյն բերանը նոյնպէս կշոյթով։ կշոյթը մի ձեւ է, որի մէջ ժամանակն ու մշակոյթը լցնում են տարբեր բովանդակութիւն։ Փոխուած է մարդու մարմնի համաչափութիւնը։ մեծցած է գանկի պատեանը, նրբացած են նեարդն ու ոսկորը, մշակուած է ձայնական դործարանը, փոխուած են կրծքի վանդակը և թոքերի տարողութիւնը։ սրանց զուգահեռ փոխուած են ձայները և բազմացած կշոյթի երանգները։ Սանդուած է մարդկային լեզուն, որ ազնուացած կենդանու բերանից է դուրս գալիս։ բայց իր հէջումը, կենդանական երեւոյթ է և կշոյթի ենթակայ։ Այսպիսով արտաքերական կշոյթներն աւելի հին են քան լեզուն։ Լեզուն յարմարած է կշոյթին, որ տիեզերական երեւոյթ է։ նա վարում է և՛ աստղերը երկնքում, և՛ զարկը մեր երակի, և՛ ելեւէջը մեր շնչառութեան։» (Հայրենիք Ամս. 1929 մարտ, էջ 160 161)։

Զծանրանանք առժամաբար այս ընդարձակ մեկնաբանութեան խախուտ հիմերուն վրայ և մեմերնիս պահենք մի բան քել լեզուն ինքնին յօդաւոր ձայներու որու խմբում է, զոր բերանը կ'արտայերէ կըռոյթով.՝ քել հնչումը կենդանական երեւոյթ է ինքնին եւ ենքակայ է կըռոյթի։ Յիշենք իսկոյն Ազբալեանի՝ հօս արտագրած մէջքերումիս յաջորդող հատուածը ֆրանսացի մասնագէտի մը հեղինակութեան վրայ կոթնած։ ընդգծումները մեզմէ են։

«Արտաքերութիւնն այսպիսով կշոյթ ունի երդի նման։ Նախնական լեզուն մի երդ է եղած և այդ յատկութիւնն իսպառ չէ կորած։ Մեր խօսքը երդ է, թէեւ ոչ շատ գունագեղ, բայց բաւական բազմազան կշոյթով։ ռկարելի է ասել, գրում է Դը Լակոռւա, որ նախնական լեզուն երածուական զօրեղ է ուներ։ Խօսի երածուրիւնը զօրեղապէս մատնանուած էր այնիւղ։ Խոկ մի ուրիշ աեղ նա յարում է։ «Մարդիկ երգած են իրենց զգացումներն աւելի առաջ, քան դարձած են ընդունակ խօսելու իրենց գաղափարները։ Մեր նախնական լեզուն եւ

Երածութիւնը միեւնոյն արտայայտութեան տարբերացումներն են։ Այս արտայայտութիւնը նախ բան դառնար նաղարդակցութիւն, եղած է բացականչութիւն։ (Henri Delacroix, *Le langage et la Pensée* 1924, էջ 116, 118)։ Եւ մենք տեսնում ենք, — կը շարունակէ Աղբալեան որ հետեւեալ գաղափարն ալ նոյն տեղէն առած է —, թէ ինչպէս բուռն կը քերի ազգեցութեան տակ մարդկային լիզուն դառնում է որոշապէս իրաժշտական և արտաբերութիւնը ենթարկւում է նկատելի կշռոյթի։ Բայց սովորական տրամադրութեան ժամանակ եւս մեր լեզուն երաժշտական է և կշռոյթ ունի, իթէ ոչ այնպէս ցայտուն, որ ամենքը նկատեն։» (Հայրենիք Ամս. նոյն տեղը էջ 161)։

Նաև յաջող կերպով արտայայտուած է հոս կեռոյթին, այսինքն ժետին դերն ու շարժական տեղը թէ բառին, թէ խօսքին մէջ, կամ արտայայտութեան տարադին մէջ, ինչպէս ըստնք նախապէս Աղբալեանին հետ։

* * *

Հիմա յիշատակենք Աղբալեանի պիտութիւնը լեզուի զարգացման մասին։

«Մեր բառերն ու քերականական ձեւերը իրար վրայ դիզուած ու ծանրացած տարբեր խաւերի կոյտեր են, որ մի տեսակ լեզուազիտական պիղումների կարիք ունին՝ իրենց կերպարանքը լոյս աշխարհ բերելու համար։ Որեւէ հնագոյն մի ձեւ նորոգուել, նորից մաշուել, նորից կտրատուել և այդ վերջին ձեւով հասել է Ս. Մեսրոպին կամ մինչեւ մեր օրերը։» (Հայրենիք Ամս. 1928, յունիս, էջ 87)։ Այս ալ Աղբալեանի ուղեցոյց սկզբունքներէն մին է, որու վրայ կ'արժէ յապաշիւ մի քիչ։

Իրօք կեանք մը կ'ապրին բառերը, ինչպէս լեզուն ընդհանրապէս, բայց որքան դանդաղ (*)։ Այդ կեանքին գլխաւոր հանգրուաններն են

Ծանօթ. — Աղբալեանի եւ իմ՝ գրողիս հոս արտայայտած տեսութեան դիմ առարկութիւն պիտի բերուի թերեւս Խորհրդային Հայաստանի մէջ այս վերջին բանընինգ տարիներուն ընթացքին կատարուած արագ այլակերպումը հայ լեզուին զանազան մարզերուն մէջ՝ ուղղագրութիւն, բառամբեր, ոճաբանութիւն, շարադառութիւն եւ ամբողջական փոփոխութիւն մտածելակերպի եւ աօխարհայեացքի։ Պատասխանենք մէկ խօսքով որ մեր տեսութիւնը կը պահէ իր ամբողջ ուժը, վասնզի այդ այլակերպումները արդիւնք չենականոն զարգացման, այլ բռնազբուիկ խաթարում՝ պատշաճանիքի տակ իրազործուած։ Այս բացառութիւնն իսկ՝ իր ծանօթ պարագաներով՝ կը փասէ բնականոն հոլովոյրի՝ լեղաւորման՝ համար հարկաւոր եղող երկար ժամանականիցոցի անհրաժեշտութեան ընդհանուր օրինը։

որ ուղենչելու կը աքնին լիզուարանները։ Դժուար՝ յաճախ անկարելի գործ է աաիկա։ բայց այդ կեանքին գոյութիւնը իրողութիւն մըն է։ կը նախընտրեմ հրամցնել ընթեցողիս նիւթիս վերաբերող՝ Աղբալիանի մէկ ուրիշ հատուածը, որով կ'ըսկոէր իր «Դիտողութիւններ Հայոց լեզուի մասին» յօդուածաշարքը։ ան Աղբալիանի դրչէն ելած լաւաղոյն էջերէն մին է։

«Մեր մարմինը մենք բերում ենք անյիշելի դարերից։

«Այսօրուան գեղադէմ տիկինը եւ բարեկազմ պարոնը սերում են նին այրաբնակ եւ ծառաբնակ կենդանակէրազ զոյգից։ Նիւտոնի նաննարը իբր կարողական զօրութիւն արդէն նոտած էր բարի որջանի մարդու զլիսի մէջ, մէկը միւսի բնական զարգացումն է։

«Մարդկային մտածումը գործում էր եւ այն ժամանակ, երբ կենդանաձեւ մարդնառաջին անգամ անողորկ կայծարն սկսեց իբր զէնք գործածել

«Նոյն մտածումն էր, որ կապուեց այս ու այն ձայնախմբին եւ ըստղծեց բառեր ու լեզու։ Մեր այսօրուան յօդաւոր լեզուն իր տարերքն առած է կենդանաձեւ մարդու անորու ձայներից։

«Լեզուն այլ բան չէ, բան ձայնական նշանների մի նամակարգ, որ արտայայտում է մտեր, զգացումներ ու կամք։ Նա մտաւորական նիզի արդիւնք է. եւ նեռաւոր սերունդների մտաւորական աշխատանքը խտացած է այսօրուան լեզուի մէջ, ինչպէս մեր մարմնի եւ նոգեկան կարողութեանց մէջ խտացած է անհամար սերունդների բաղաբակրական նիզը։

«Ամեն մի նոր սերունդ փոփոխում է լեզուն՝ ձգտելով հաւատարիմ մնալ աւանդաբար ստացածին։ Ոչ ոք կարող է տեսնել մազի կամ եղունգի երկարանալը, թէեւ ամենքը կարող են նկատել թէ մազն ու եղունգը երկարացած են։ Երեւայրի ընթացէր յանախ մեզ չի երեւում, բայց արդիւնքը դիւրին է տեսնել։

«Մարդկային աշբն ու ականջը սահման չունին. Կարի բրիոնները պէտք է որու բանակ ունենաթ, որ ձայն համարուին եւ երանգները պէտք է որու զօրութեան հասնին, որ զոյն նկատուին։

«Բայց այս չի նշանակում, որ նկատելի ասինանների հասնելու նամար ձայնն ու երանգը աննկատելի ասինաններով չեն անցած։ Այդպէս է եւ լեզուն. նա փոխւում է ամեն օր, ամեն ժամ, ամեն տիղ. բայց աննըմար չափով, աննկատ, մինչեւ տարիներ յետոյ նկատում ենք, որ լեզուները տարբեր են արդէն։» (Հայրենիք Ամս. 1928, փետր. էջ 79):

Նոյնպէս մէկդի գնենք աստամաբար ռգեղաղէմ տիկինին և բարեկազմ պարոնին» նախածնողներուն հանգամանքը, ինչպէս ըրբնք քիչ առաջ լեզուի ծագման մասին Աղբալիանի զետեղած խախուտ հիմերունկատմամբ։ Ան շատ յաջող կերպով և պատկերայից ոճով արտայատած է արտագրած հատուածիս մէջ, լեզուի մը ինչպէս եւ զայն կազմող բառերուն, կրկնենք ասութիւնը՝ արտաբերութեան տարագներուն՝ աննըմար ձեւաւորումն ու այլակերպումը։

Երկու պարզ օրինակով Աղբալեան շօշափելի կը դարձնէ իր պարզած տեսութիւնը, զոր կ'որդեգրենք հաճոյքով. առանց մոռնալու նախածնողներու մասին ըրած վերտապահութիւնս արուն պիտի անդրաւդառնամ քիչ յետոյ:

Ե. դարուն ունէինք աւ երկբարբառը, զոր հիմա կ'արտասանենք մաքուր օ, սակայն ԺԲ. դարուն գրիչները որդեգրեցին արդէն Յոյներուն օ տառը. ըսել է թէ աւր կ'արտասանուէր արդէն. յոյն տառին հնչումով, (աւր=օր, հաւր=հօր). բայց ե՞րբ և ի՞նչպէս աւը դարձաւ օ, Ե. դարէն մինչեւ ԺԲ. դար տեւող ժամանակամիջոցին, ո'չ ոք կտրող է ըսել: Այսուհանդերձ մատնանշածս հոլովոյթը քանի մը դարուխնդիր է, գիր ու գրականութիւն վայելող կեանքերու տեւողութեան մէջ:

Նոյնպէս գրութեանց լեզուի մասին: Ե. դարուն սկիզբը նորագիւա զրերը արձանագրեցին և հետեւաբար կայուն, անկորուստ մեզ փոխանցեցին այն ատենուան լեզուին կաղապարը՝ հոլովում, խոնարհում, խնդրառութեան ձեւերը և շարադասութեան կարգը, լեզուական մտածելակերպը, գոնէ ընտըովի որդեգրածնին, որ ատակ նկատուեցաւ այն ատեն յոյն, տսորի և հրեայ լեզուներով արտայայտուած կրօնական, իմաստասիրական, պատմական և այլաղան մշակութային գաղափարներն ու աշխարհայեցքները, նոր կրօնին բերած նորանոր տեսութիւնները: Դարերու ընթացքին նոյն՝ Հայոց լեզուով գրուած են Եղնիկի «Եղծ Աղանդոց»ը, Նարեկացւոյն «Աղբերգութեան Մատենական միջնադարի պատմութիւն»ը: Այսուամենայնիւ, միայն սա՛ յիշատակած գրքերուս միջեւ, ի՞նչ տարրերութիւն լեզուի և մտածութեան: Թըւական կրող այս գրութիւնները և ուրիշներ արձանագրած են նոյն պէս հայ լեզուի հոլովոյթին յաջորդական փուլերը: սակայն այս կարճատեւ դարերու ժամանակամիջոցին մէջ իսկ անպատասխան կը նիան յաճախ: կամ անստոյգ այդ հոլովոյթին ե՞րբն ու ի՞նչպէսը:

Հապա երբ բառերն ու ասութիւնները ապրած են կրկնակ և տասնեակ հազարաւոր տարիներու կեանք մը. հոլովոյթ մը, ակնյայտ կ'իրեւի իսկոյն թէ ո՞րքան դժուար յաճախ: անկարելի: գործ է փորձել ուրուագիծը բառերու կենսագրութեան:

Աղբալեան փորձած է այդ գործը կարգ մը հայ բառերու համար, որոնց մասին պիտի խօսիմ իր տեղին: Հոս յիշատակենք իր մեթուտին գերազանցութեան փաստերը: Ենթադրելով իրը հիմ վերև յիշածըս հոլովոյթի տեսութիւնը՝ գաղափարներու արտայայտութեան տարագներուն նկատմամբ, ինչպէս բացատրեցինք Ծարդ, բաղդատական լեզուաբանութեան օրէնքները գործի կը լծէ, հայկական բոլոր արդի բարբառներու մէջ հնագոյն վերապրուկները կ'օգտագործէ, հայոց

մերձակայ ժողովուրդներու լեզուներն ալ օգնութեան կը կանչէ . սա՝ առաջին հանգրուանն է խուղարկութեան : Յետոյ կը փորձէ ստացած արդիւնքը ստուգել կամ մեկնաբանել ընկերաբանական, կրօնական, ծիսային և ժողովրդային խորհրդածութիւններով : Ինձ կը թուի որ ամենէն աւելի այս վերջին հանգրուանն է որ կը կազմէ իր մեթոտին յատկանշական տարրը՝ միանգամայն առաւելութիւնը և խոցելի կողմը : Քանի մը օրինակներով փաստեմ այս երանգաւոր գնահատականս :

Երեք բառի ստուգաբանութիւն և մէկ արտասանութեան մանկական երեւսյթ քննութեան պիտի առնեմ ներկայիս . կողոփոց, պատել, հարազատ բառերը և բլուատուրիւնը :

* * *

Կողոփոց բառը նոր բառարանները կը դնեն իրը համապատասխան ֆրանսերէն *rotule* և *hochet* բառերուն . առաջինը կը նշանակէ ծունկի ոսկոր, թրքերէն տիզ դափաղը . երկրորդը՝ ընդհանուր տումամբ խաղալիք, որ կը նշանակէ թէ՛ ակռայ հանող տղուն ձեռքը տրուած կարծր առարկայ մը՝ ակռաշփելիք . թէ՛ վէգ՝ տղոց խաղի ոսկոր, թրքերէն աշըդ : Մալխասեանց կարճ բայց լաւ կը բացատրէ . 1. Ոսկորի փոսցրած գլուխ, որի մէջ մանում է այլ ոսկոր : 2. Այդալու վէգ : Հստ Մալխասեանցի սակայն հազուագէպէ է բառը :

Այս բառի մասին ի պաշտօնէ խօսած է Հայր Հացունի «Դաստիարակութիւնը հին հայոց բով» գրքին մէջ (Վենետիկ, 1923), յատկացը նելով անոր երկու էջ՝ 282—283 և զայն զետեղելով հին ժամանակներուն հայ տղոց խաղալիքներուն մէջ : Փրոֆ. Հ. Աճառեան իր «Հայերեն Արմատական բառարան»ին մէջ կ'ամփոփէ միայն Հացունիի տուեալները : Թեպետեւ լոյս ընծայած է Աղբալեանի յիշելիքս յօդուածէն վերջ իր Գ. հատորը որ կը պարունակէ մեր քննում բառը և միայն 1935ին է . հատորը, լրացումներով, երկուքին մէջ ալ Աճառեան կ'անդիտանայ Աղբալեանի ուսումնասիրութիւնը, տպուած Հայրենիկ Ամսագրի մէջ 1927ի մարտի պրակին մէջ, էջ 56-60 :

Մեր բանասէրը կ'ընդունի Հացունիի հետ թէ կողոփոց բառին մէջ կայ կողոփի արմատը : Այս արմատին զանազան ձեւերուն՝ կոլոփ, կոլոպ և կոռոփի իմաստներն ու գործածութիւնները գրաբարի և բարբառներու մէջ կը մանրամասնէ, յիշատակելով յունաբէն համապատասխանը հին թարգմանութեանց մէջ, և կը հասնի հետեւեալ եղբակացութեան .

«Այսպիսով մենք ստանում ենք կողոփի բառի բուն իմաստի բոլոր ճիւղաւորումները, կողոփի — նախապէս նշանակում էր գտնկ, գլուխ . ուստի՝ կողոփոցի — գանկի խաղ, «կեֆալէ», զլուխ, գանկը խելքի ա-

մանն է, նրա առուփը. ուստի՝ կողով կամ կոլոփ — կողով. տուփ։ Գանկը կամ գլուխը կլոր են, ուստի կողով — զունդ, գնդակ, «կոլոփօն»։ Խուխը գնդակածեւ է վայր ընկնում, ուստի՝ մի կոլոփ թքուք մի կոռոփի խուխ։ Գոմշի կուն գնդածեւ է — ուստի կոռոփի, կոռոփել։ Նկատենք նաև, որ գունդ բառն ինքը նշանակում է զլուխ։ նա կունդ բառի մի տարրերակն է, որ նշանակում է գլուխ և հանդիպում է Խորենացու պատմութեան մէջ։ «կունդ Արամազդ» գրում է նա, (Ա., ԼԲ) այսինքն՝ գլուխ Արամազդ։ ինչպէս այսօր ասում են գաւառներում «գլուխ գինի» առ, այսինքն՝ լաւագոյն, ամենալաւ, առաջնակարգ գինի։ Այդ բառն ապրում է ժողովրդի բերանում։ ասում են. «կնդով անել», այսինքն գլխով անել, համաձայնութեան նշան տալ գըլխով։ «կնդել», որ է «կունդել», այսինքն գլխով տակից խուզել, գըլխին մազ չթողնել։ «կունդ ու կծիկ», այսինքն՝ անդամալոյծ։ Զեւի կողմից նոյնպէս գունդ եւ կունդ նոյն բառերն են, նկատելով որ գ և կ լծորդ են բոլոր դիրքերում։ բառի սկիզբը՝ կուգամ — զուքամ (Թիֆլիս). բառի միջին՝ ընկեր — հընգեր (Երեւան)։ բառի վերջին՝ կնիկ — կնէյգ (Ղարաբաղ)։ Այսպիսով կողոփոցքը գնդախտղ թարգմանենք թէ գանկախտղ՝ մենք նոյն բանն ասած կը լինենք. քանի որ «կոլոփը» գունդ է, իսկ «գունդը»՝ կունդ, այսինքն՝ զլուխ, գանկ։ (Հայրենիք Ամս. 1927 մարտ, էջ 57—58):

Ո՞ւրկէ կուգայ կողոփոցք բառը. փոխառութիւն յունարէն կողոփօն բառէն, բայց աղաւաղուած և հայկական ածանցով հայացած, ինչպէս համամիտ էր ընդունելու Հացունի (Դասիարակութիւնը հին հայոց ժուկ, էջ 282—3), — թէ^o բնիկ հայ բառ։ Աղբալեան կը միտի ըսելու թէ խաղը և բառը փոխառութիւն չեն. խաղը համամարդկային է, ինչպէս պիտի ապացուցանէ մեր ընկելիք մէջքերումը, իսկ բառը՝ հնդեւրոպական ժառանգութիւն, հայ միջավայրի մէջ փոփոխուած։ Աղբալեան կը մատնանշէ կողոփի արմատին, ինչպէս նաև յօդուածին վերջը անոր զուգահեռներուն ածանցեալ ձեւերը՝ կողոփիել, կողոպել, ուրկէ կղպել, նախ կողովի մէջ դնել՝ և անկէ տուփի և ուրեմն փականքի, կղպանէի տակ դնել. — տակաւին կողոպուտ՝ և առոր մերձակայ իմաստով՝ կապուտ, կապտել, դիակապուտ և այլն։ Այս յիշածներուս առաջին շարքին յոյն և ոռւս համապատասխաններն առ կը թուէ։

Այս բոլորը պիտի ընէր ոեւէ հմուտ լեզուաբան, Աղբալեանէն առաելի գիտնականօրէն, ճշգրտօրէն։ Սակայն հոս կ'ըսկսի ցայտումը մեր հանգուցեալ բանասէ՛րին մեթստին գերազանցութեան՝ բարբառներու ընդարձակ ծանօթութիւն, ընկերաբանական հետաքրքրութիւն, որոնց կը միանան մտքին ճկունութիւնը, արուեստագէտի թռիչքը և սուր հոտառութիւնն ու կուանումը, Փրանսերէն լեզուով պիտի ըսէի *artiste* և *intuitif*, իրե՛ն տամ խօսքը.

«Բայց սա կողոփոշքը ի՞նչ տարօրինակ խաղ է, որի անունը գանկ է և գլուխ»:

«Բննութեան առնենք մի քանի ոճեր, որ դործ է ածում մեր ժողովուրդը՝ առանց անդրադառնալու իր տաածի բուն իմաստին»: «Տարան, մարդու գլուխը կերանց ասում է նա, այսինքն՝ մարդուն տարան սպանեցին»: «Անց որ տեսնում եմ» դուք իմ գլուխը պիտի ուտէք, այսինքն՝ մահուանս պատճառ պիտի դառնաք: «Դլուխը սըխառորեցին», այսինքն՝ սպանեցին»: «Դլխակեր», այսինքն՝ մէկի մահուան պատճառ: «Դլուխն ազը դնել», «Գլուխը խաշել», այսինքն՝ սպանել: «Դլխիս միսը կերաւ», այսինքն՝ ձանձրացրեց: (Եւ այլն, և այլն. տե՛ս Ս. Վ. Ամատունի՝ Հայոց բառ ու բան, էջ 136, 139, 143.) Մեր քարի տատերը ձկան գլուխը տան փոքրերին են տալիս ուտելու, ասելով՝ «Ա՛ռ կեր, որ դո՛ւն իմ գլուխն ուտես, ո՛չ թէ ես քունը», այսինքն՝ որ դո՛ւ ինձանից շատ ապրես:

«Ի՞նչ խօսքեր են սրանք և ո՞ր դարերից են գալիս: Սրանք փոխարերութիւններ չեն: սրանք մարդակերութեան շրջանի մնացորդներ են: Դուք տեսնում էք, որ մարդու գլուխն ուտում են, խաշում են, աղն են դնում, որ չհոտի, սխտոր են ցանում վրան: Հետաքրքրական է յատկապէս ագլխիս միսը կերաւ բացատրութիւնը, որ ձանձրոյթ է նշանակում: Անշուշտ մի ձեռք կամ մի ոտք ուտելն աւելի արագ կատարուող դործ էր, քան մի գլուխ ուտելը: Ոչխարի գլուխը կարգին ուտելը մի վարպետութիւն է. որ խաշի (քեալլա փաչա) սիրահարները դիտեն: Բազմաթիւ մանր մկաններ կան գանկի խոռոչների մէջ որ պէտք է խնամքով հանել: Խսկապէս մի երկար և ձանձրալի աշխատանք: Ահա թէ ինչու գլխիս միսն ուտելը՝ նշանակում է ձանձրացնել: Գուցէ մեր այսօրուան մամիկների նման՝ մարդակերութեան շրջանի հասակաւորները մարդու գլուխը տալիս էին երեխաններին, որ իրենց փոքրիկ մատներով աւելի լաւ կարող էին գանկը մաքրել իր մկաններից: Մարդու միսը լափելուց յետոյ բնական է, որ ոսկորը նետում էին մի կողմ. նետում էին և գանկերը, որ դառնում էին մեծի և փոքրի խաղալիք: Կուտակուած եռանդը սպառում էին թաւալելով գանկերը ոտով կամ փայտով, հին օրերի ֆուտբոլն ու մականախաղը:

«Ժամանակները փոխուեցին. մարդակերութեան շրջանն անցաւ. բարքերը մեղմացան, Այլեւս «կունդ» չէին խաղում կամ «կողոփ» թաւալում: «կունդը» դարձաւ գունդ կամ գնդակ, գանկախաղը՝ գըն դակախաղ, բայց բառերը գեռ պահում են այդ խաղերի բարբարոս ծագման հետքը, իսկ ոճերը գեռ խօսում են այդ շրջանի մասին» (Հայրենիք Ամսագիր 1927 մարտ էջ 58—59):

«Նթերցողը համոզուեցաւ անշուշտ ինձի պէս թէ ո՞րքան թելադ-

րիչ է այս հոյակապ էջը։ Նոյն յօդուածի շարունակութեան մէջ վերեւ յիշածս երկրորդ խումբին՝ կողոպուտ, կապուտ բառերուն՝ նախորդներուն հետ ունեցած արմատական և գործածական աղերսները բացատրելէ յետոյ, կը ճառէ հետեւեալ կերպով։

«Սովորաբար ռկողոպուտ» և «կապուտ» բառերն իրար հետն են գործ ածւում իրր ռկապուտ ։ Կողոպուտ» և երկուսն էլ թալան իմաստով։ Մեր ժողովուրդն այս գաղափարներն արտայայտում է թալանել և պլոկել բառերով։ բայց նա ունի և հին «կողոպուտ» բառը, սակայն յատուկ առումով։ «Կողոպուտ» նշանակում է մեռածի հագուստը, որ շատ տեղեր տալիս են տէրտէրին։ այդ նրա օրինական բաժինն է, ինչպէս մատաղ արած ոչխարի էրին (առջեւի աջ ոտքը թիսկով միասին)։ Տեղ-տեղ կողոպուտը տալիս են ժամկոչին, մի քանի տեղ էլ, մանաւանդ քաղաքներում, մեռածի դիակը լուացողին։ Այդ իմաստով է յօրինուած դիակապուտ բառը, որ նշանակում է մեռները պլոկող, թալանող։ Ժողովրդի այսօրուան ռկողոպուտը և հին ռդիակապուտ» բառի բազադրիչ ռկապուտը նորից մօտեցնում են այդ երկու գաղափարներն իրար, բայց այս անգամ ոչ թէ պարզ թալանի իմաստով, այլ իրր դիակի պլոկում։ Եթէ ասեմ որ ռկապուտ» բառը ևս կշռում եմ լուս։ Հարված բառի հետ, որ ծագում է Հարված (բռնել, ճանկել, չանթել, իւրացնել) և նշանակում է գերի, այն ժամանակ բոլոր տարերքը պատրաստ կը լինին ռկապուտ» և «կողոպուտ» բառերի բուն և հնագոյն իմաստը հասկանալու համար։

«Կապուտ» բառի արմատն է ռկապուտ։ Իրր արմատ՝ նտ բազմանիշ է. նշանակում է և՛ կապ, և՛ կապած։ Ալեզուն կապ ա», այսինքն՝ է. նշանակում է և՛ կապ, և՛ կապուտ է լեզուն։ «Զին կապ ա՞ թէ բաց», այսինքն, ձին կապած է՞ ոչ։ Այս մտքով ռկապուտ» նշանակում է մի խումբ կապածներ, այսինքն՝ դերիներ։ Ուրեմն «կապուտ-կողոպուտ»՝ նշանակում է դերիներ և գլուխներ։ Թշնամիների գլուխները կտրել տանելը հին կենցաղի մի սովորութիւն էր։ Արշաւանքի գնացողները բերում էին դերիներ, այսինքն՝ կապածներ և թշնամիների գլուխներ, այսինքն՝ «կապուտ» և «կողոպուտ»։ Բարքերի մեղմացումով գերիները շատացան, իսկ սպանուածների գլուխների փոխարէն սկըս սան առնել նրանց զէնքը և հագուստը պլոկել, որով «կողոպուտ» ըսկըսաւ նշանակել մեռած մարդու հագուստ։ ռկապուտի և ռկողոպուտի գաղափարները իրր նոյնամանակ գործողութեանց գաղափարներ՝ սերտօրէն կապուեցին իրար և խառնուեցին, տալով «կապուտ-կողոպուտ» բացատրութիւնը իրր ալբն-թուշան։ Գրերի գիւտը հանդիպում է մեր զոյգ բառերի իմաստաբանական (sémanie) զարգացման այդ աստիճանին։ Ժողովուրդը սակայն պահած է «կողոպուտ»ի հին իմաստներից մէկը և անիծելիս դեռ ասում է։ «Կողոպուտ» տէր-

տէրը տանից իսկ ռկապուտուը մերկացնելու իմաստ է ստացել և նոյնացել բռնութեամբ պոկելու գաղափարին հետ, տալով մեր կապտել բայը, որ կապուտ-ել է և հիմանշանակում է խլել, սեփականել անիրաւաբար (նոյն տեղը, էջ 60)

Աղբալեան կը փակէ իր յօդուածը սա խորհրդածութեամբ. «Ահա թէ ինչ կոմաններ (զիգզագ) է տալիս ժողովուրդի ստեղծադործ միտքը և թէ ինչ՝ նորանոր իմաստներ է լցնում պատմութիւնը հին բառերի ամանների մէջ»:

Լեզուաբան խուզարկուն ալ՝ օժտուած Աղբալեանի վարպետ բը-րիչով կը պեղէ և երեւան կը հանէ դարերու կոյտին տակ ծածկուած զանազան ընկերաբանական հոլովոյթներու հետքերը։ Աղբալեան կատարած է այդ պեղումը կարգ մը բառերու համար. զանոնք պիտի թուենք իրենց տեղին։ Երանի՛ թէ աւելի բազմաթիւ ըլլային իր այդ տեսակ երկերը։ Ո՞րքան մեծ օգուտներ պիտի քաղէին ասոնցմէ հայ գրողները, տալու համար իրենց գործածած բառերուն ճշգրտագոյն առումներ։ ո՞րքան համեղ հիւթեղ պիտի ըլլար իրենց ոճը, ըլլալու տեղ անորոշ, տարտամ և ուռուցիկ, ինչպէս կը պատահի յաճախ, մանաւանդ երբ կը պակսի արդէն գրաբարի բաւարար ծանօթութիւնը։ Եւրոպացի դրագէտները դասական լեզուներու ուսւմով կ'ըմպեն իրենց լեզուներուն ակնազրիւթներուն ջուրերը։ այդպէսով անոնք դիւրութեամբ գիտեն իրենց լեզուին արտայայտութեան տարազներուն իրական ձեւն ու վայելչութիւնը, արժեցնելու համար զանոնք տեղն ու տեղին, պատեհ պարագային։

* * *

Առնենք հիմա միւս երկու բառերը որոնք առիթ պիտի ընծայեն արդարացնելու մեր՝ վերեւ երկիցս ըրած՝ վերապահումները։ Սկսինք պատել բառով։

Սիոն ամսագրի մէջ (1927, էջ 126—128) նոյնարմատ պատել, պատօն բառերը կը վերլուծէ։ Նախ կը հաստատէ թէ հայ գրերու գիւտէն առաջ այս բառերը անցած են հետեւեալ փուլերէն։

Պատելը, — * պա՛րաշտել, * պա՛րշտել (հմտ. ամբարշտել), պա՛շտել։

Պատօնը, — * պարաշտաման, * պարշտաման, պաշտաման, * պաշտաւան, պա՛շտաւն, որ է այսօրուան պաշտօնը։

Պատել և պարտել ձեւերը, ըստ Աղբալեանի, գաւառական տարբերութիւններ են միեւնոյն բառի, առաջին ձեւն աւելի մաշուած քան երկրորդը։

Պատօն բառի նախնական իմաստն եղած է պատող։ Իր կաղմու-

թեամբ ան նման է գործօն բառին, որ կը նշանակէ գործող։ Ժամանակի ընթացքին պաշտօն բառը ննթարկուած է իմաստաբանական (sémantique) զարգացման և ստացած է այսօրուան նշանակութիւնը, որ ոչ թէ պաշտող կը նշանակէ, այլ ծառայութիւն։ «Թանձրացեալը դարձած է վերացական, ինչ որ բառերի իմաստաբանական զարգացման ուղին է»։

Յետոյ կը ջանայ ապացուցանել թէ այդ բառերուն պատ արմատը կը սերի պատ և յատ նախարմատներէն, որոնց առաջինը կը նշանակէ թէ կամաւ, թէ ուրց, ուրցան, բոլորտիք. երկրորդը՝ թէ զոհ, մասաղ, թէ հաւտութիւն, ողոխում. մերժակից գաղափարներ որոնք ամփոփուած են պատարագ բառին մէջ։ Որով պար-յատ եղած է պատ։

Եւ ահա Աղբալեան, հաւտատարիմ իր մեթոտին, վերոյիշեալ ըստուգաբանութեանց վերստուգում և մեկնաբանութիւն կը փնտոէ ծիսային-կրօնական մարզի մէջ, յիշելով թէ, երբ մատաղ կ'ընեն, մատաղցու ոչխարը կամ դառը երեք անգամ պտոյտ կ'ընեն (աւելի ճիշդ կ'ընէին ատենոք դաւառներու մէջ) եկեղեցիին կամ այն անձին շուրջը, որուն անունով կը մատուցանեն զոհը։ Յետոյ օրհնած աղ կը կերցնեն զոհին, զայն կը մորթին, և միսը կը բաժնեն եփած դրացիներուն, երբ տան մէջ ըլլայ ժիսկ հում՝ ուխտաւորներուն, ուխտատեղիներուն մէջ։ Աղբալեան կը յիշեցնէ գեղջուկ ասութիւնները որ առնչութիւն ունին զոհաբերումին հետ։ «Յե մատաղ, գլխովըդ պտիտ գամ»։ այսինքն՝ քեզ մատաղ ըլլամ, շուրջդ դառնամ, զոհի ոչխարի նման։ Երկրորդ արմատին կապակցութեամբ, ժողովուրդը կ'ըսէ։ «Թողին» ուրացան իրանց պաշտօն պատարագը», այսինքն՝ զոհ ու նուէր։

Հարազատ բառն է մեր քննելիք երրորդ բառը որուն հետաքըրքըրական յօդուած մը նուիրած է Աղբալեան «Հանդէս Ամսօրեայշի մէջ (1927, էջ 406)։ հայր և զատ (պարսկերէն զատէ կամ հայերէն զատուած) բառերէն կը ծագեցնէ հարազատը և զայն կը յայտարարէ համազօր հայրածինի, հօրմէ ծնած, հօր զաւակ։ Բայց Աղբալեան կը յարէ թէ սա՛ մի անհեթեթ և անիմաստ մտածում է, հայրը չի ծնիր, իսկապէս մայրն է ծնունդ տուողը՝ ծնողը։ այսուհանդերձ հայը կ'ըսէ ծնողներ հօր և մօր համար միանգամայն։ Արդէն ուրիշ լեզուներ ալ նոյնպէս կ'արտայայնուին։

Կրկին Աղբալեան ծագումը կը փնտոէ այդ արտայայտութեան, այդ մտածելակերպին, նախապատմական ժամանակներու մի որոշ շըրջանին մէջ՝ ուր խառնակեցութեան հետեւանքով միակ անկասկածելի ծնողը մայրն էր և ճիւղագրութիւնը կը հաշուուէր մայրական գծով։ Մայրի խանութեան կարդուսարքին ժամանակաշրջանն է ասիկա և ընկերային կազմի այն վիճակը, որմէ յետոյ միայն տիրական դարձած

Է Խմեր հասկացած ձեւով ընկերային կարգը՝ ընտանիքը և հետեւարար հայրական գծով ճիւղագրութիւնը՝ հայրիւսանութիւնը; ուր հայրը մօր նման կը համարուի ծնող; Ազգագրական տարօրինակ . սովորութիւն մըն ալ օգնութեան կը կանչէ իբր կապ իմաստի փոխանցման և արդարացում ծնող բառի այր մարդուն համար ալ գործածուելուն; Կավաղա կը կռչուի այդ սովորութիւնը կամ ծէսը, որ մինչեւ այսօր պահուած է եղեր տեղ տեղ. երկունքի ցաւով բռնուած կնոջ մօա այր մարդը կը գալարուի և ճիչ ու հառաչ կը հանէ եղեր՝ ձեւացնելով թէ ինքն և մասնակից է ծննդաբերութեան ցաւերուն. այսպէսով կ'արդարանան եղեր՝ ծիսապէս՝ ծնող, հայրածին, հարազատ բառերը, Ազբալեան կ'եզրակացնէ ուրեմն թէ հարազատ շատ հին բառ է, որը իմաստաբանական զարգացումով կը գործածուի նաև քրոջ և եղբօր համար, ընկերոջ մտքի համար:

* * *

Շքեղ է Ազբալեանի կառուցումը նոյնպէս այս երկու վերջին բառերու մասին՝ պատել, հարազատ և ան կանգնուած է նոյն բազմազան ատաղձներով՝ լեզուաբանական, ընկերային, ծիսային, և այլն: Բայց քիչ մը մօտէն նայինք, ճեղքեր կը նշմարուի այս գեղեցիկ շնչքերուն վրայ:

Պատել բառին շուրջ կառուցուած շնչքը կը խարխլի, երբ նկատենք թէ Ազբալեանի առաջարկած ստուգաբանութիւնը հեռու է համոզիչ ըլլալէ: Քանի մը մեծ լեզուաբաններու օրինակին հետեւելով, Աճառեան (Հայերէն Արմատական Բառարան, հատ. Ե. էջ 838—839) զայն կը բերէ պսրի—ըստ իրանական ձեւէն, որ կը նշանակէ պաշտամունք, երկրպագութիւն, և կաղմուած է պարի մասնիկով որա արմատէն. բուն իմաստն է աշուրջ կանգնիլ; ուրեմն ո'չ ոթէ շուրջ և զոհա ինչպէս կ'հնթագրէր Ազբալեան: Մեր բանասէրը կրնար ուրիշ շնչք մը կառուցանել իր ընտիր մեթոսով ճշգրտագոյն ստուգաբանութեան վրայ հիմնուած:

Հարազատ բառի մասին Ազբալեանի տեսութիւնը ծանօթ է Աճառեանին որ զպյն կը դասէ անընդունելիներու կարգին (Հայ Արմ. Բառ. հատ Դ: էջ 171—3), և Միւլլէրի, Հիւրշմանի, Մառի հետ մեր քըննած բառը կը սերէ պահլաւերէն ձեւէ մը՝ հադազատ, զոր կաղմած հն հատիա (միտսին) և զատա (ծնեալ): Ուրեմն բառը կը նշանակէ բուն համածնունդ, ծննդակից, զուգածնունդ, ինչ որ արդէն հայկական հարազատ բառին առաջին՝ հարազատ իմաստն է, զոր թիւրած է քիչուկ մը Ազբալեան իր հմայիչ կառուցումը հիմնաւորելու համար. ուրովինետեւ հարազատ բառին բուն առաջին իմաստը չէ ահայրածին, հօր ծնած, հօր զպյակն ինչպէս կ'ըսէ Ազբալեան տրոհելով բառը հար-

աշղատ և հարմայր, — այլ՝ «Նոյն հօրից եւ մօրից ծնված, արիւնակից: Հկու. Խօրբ» ինչպէս կ'ըսէ Մալխասեանց և այս առաջին իմաստին տակ կուտայ իբր գործածութեան օրինակ՝ հարազատ ելքայրեւ: Ծնողների հարազատ զաւակներ: Ինչ որ կը համտադատասխանէ բառին պարսկական արմատին արոհման, ինչպէս ըսինք վերը: Ուրեմքն բառին ամենահարազատ իմաստառումն իսկ, փոխարերական իմաստներ ընդունելէ առաջ, կը մերժէ Աղբալեանի առաջարկած աըրբոհումն ու ստուգաբանութիւնը:

Աւելցնենք որ Աղբալեանի ոգեկոչած օժանդակ փաստերը՝ պատմական հիմերը՝ ընդհանուր խառնակեցութիւն, ուրկէ մայր-իշխանութիւն, յետոյ ալ կավագայի համատարած ծաւալում, տեղի տալու համար իվերջոյ հայր-իշխանութեան, քանի մը գիտնականներու վարկածներ են: Կար ատեն մը՝ անցեալ դարուն՝ ուր ոեւէ վայրենի ցեղի մօտ նշմարուած մի տարօրինակ սովորութիւն կամ քաղաքակիրթ ժողովուրդները պժգացնող վարօւելակերպ կը նկատուէին վերապրուկը նախնական մարդկութեան, վերագրուելու տեղ իրենց աւելի ընական պատճառին՝ անկումի, խաթարումի, ենթադրելով որ այդ սովորութիւնը կամ վարուելակերպը յաւ՝ անաչառօրէն դիտուած և քընուած էին, մէկդի դնելով կէս-գիտնական ճամբորդներու և այցելուներու հապճեպով հաւաքած հետաքրքրութիւն շարժելիք՝ բայց չափազանցուած, նոյն իսկ կեղծուած դրուագները:

Առնենք վերեւ յիշուած տեսութեան երկու հիմերը՝ ընդհանուր խառնակեցութիւն և հետեւաբար մայրիշխանութիւն, որու մէջ ալ տակաւին հարկ էր զանազանել երկու կէտեր՝ արիւնակցութիւն և իշխանութիւն, այսինքն՝ իշխողի, հրամայողի, տիրապետողի հեղինակութիւն, որոնք անձշտօրէն յաճախ շփոթուած են իրարու հետ:

Այս զանազանութիւնը ընելէ յետոյ, Խաչիկ Սամուէլեան՝ այլուր գրածները կը կրկնէր իր՝ «Հին Հայաստանի Կուլտուրական աշխատասիրութեան մէջ».

«Մատրիարխատը ինքնին մի համատարած երեւոյթ է ժողովուրդների կուլտուրական պատմութեան մէջ, սկսած ամենահին ալեւոր դարերից մինչեւ արդի վայրենի ցեղերը: Լինելով այդքան համատարած, նա միեւնոյն ժամանակ չի ներկայացնուած միօրինակութիւն, միուրոյն քնոյթ: Ընդհակառակն, իր բազմապիսութեամբ, իր բազմերանգ երեւոյթներով. զանազան երկրներին ու ժողովուրդներին յատուկ բնութագծերով, նոտ տալիս է գամմաների այնպիսի հսկայական դիապազոն, որ ազգագրագէտին շատ յաճախ դնում է դժուար կացութեան մէջ, որպէսզի այդ երեւոյթների հիման վրայ հնարաւոր լինէր համագրութեան բերելու մատրիարխատի բնորսչ և յար ու նման դիմերը:» (Ա. հատոր, 1931, էջ 221).

Օրինակներ առաջ կը բերէ և Գ. հատորին մէջ, 1941, էջ 7—16, մայրիշխանութեանք քայքայուելով հայրիշխանութեան տիրապետումին պատճառ կը մատնանշէ տնտեսական ձեւերի դարգացումը, ըստ Մարքսի տեսութեան, և կ'եզրակացնէ ինկելսի հետեւեալ խօսքով. «Մայրական իրաւունքի տապալումը կանացի սեռի համաշխարհային պարտութիւնն էր: Տղամարդն իր ձեռքն առաւ նաև տան զեկավարութիւնը. կինն ստորացուեց, ստրկացուեց. դարձաւ լոկ նրա ցանկութիւնների ստրկուհին և երեխայ ծննլու գործիք»:

Եւ ըստ Սամուէլեանի, յիշած էջերուս մէջ, այդ մայրիշխանութեան երեւան գալուն պատճառը Նէոլիթի շրջանին գոյութիւն ունեցող սոցիալ-տնտեսական պայմաններն են, որ մայրը կեղրոն դարձուցած են՝ ամեն տեսակէտով. այս երկրորդ հանդրուանն է, որմէ առաջ կար անշուշտ տոտեմական շրջանի կատարեալ խառնակեցութիւնը, ըստ նոյն հեղինակին:

Հոս պիտի յիշատակեմ այդ երկրորդ շրջանին վերաբերող Ամուսուէլեանի հատուածը, որ ապահովաբար Աղբալեանի գրութեան աղբիւրն է:

«... Բայց ինչո՞ւ ծնող էր համարւում միայն մայրը և ոչ հայրն էլ միասին, կամ ինչո՞ւ աղդակցական ծագումը համարւում էր մօրական գծով: Այսուղ դեր են խաղում տնտեսական հանգամանքները:

«Այն հիմնական դերը, որ վիճակում է խաղալ կնոջը երկրագործական աշխատանքներում, տալիս են նրան որոշ անկախութիւն և ինքնուրոյնութիւն իր կեանքի, իր գործունէութեան մէջ, տալիս է տնտեսական գերակշռութիւն այր մարդու վրայ: Վերջինս, շարունակելով տակաւին որսորդութեան պատճառով իր թափառիկ կեանքը, կամ անասունների ընտելացման հետեւանքով վաչկատուն կենցաղը հօտեր արածելու համար, հարկաւ միայն անցողիկ, դիպուածական կապեր էր պահպանում կանանց հետ, որոնք իրենց նստակեաց նոր կենցաղի շնորհիւ գամուած էին մնում իրենց օջախին և մշակած հողամասին:

«Այս տեսակ անցողիկ սեռական յարաբերութիւններից ծնուած երեխաները ճանաչում էին միայն իրենց մօրը, սնւում և մեծանում էին միայն իրենց մօր հոգատարութեամբ: Խսկապէս անհնարին էր որոշել մօր համար, թէ ո՞ւմից է նա յղացել, որպէսզի հաստատուէր, թէ ո՞վ էր երեխայի խսկական հայրը: Ուստի մայրը դառնում էր այն կեստրոնը, որի շուրջն էր գոյանում կազմակերպւում ու պահպանում ընտանեկան կեանքը եղբայրներով, որդիներով ու թոռներով: Մօր աշխատանքներով էր կուտակւում կենսամթերքի պաշարը իր որդիների ու եղբայրների գոյութեան համար: (նոյն գիրքը. Ա. հատ. էջ 219):

Աղբալեանի յիշատակած կուլաղայի սովորոյթն ալ արձանագըր-

ուած է նոյնպէս Սամուէլեանի կողմէ, էջ 246։ Ընտանեկան կեանքի և հետեւաբար տնտեսական դրութեան՝ երրորդ շրջանին է որ տեղի ունի եղեր հայրիշխանութիւնը և այդ ատեն է միայն կազմուեր ուրեմն, հարազա՞ հայրածին բառը ըստ Աղքալեանի ստուգաբանութեան։

Ահաւասիկ հիմա ցարդ յայտնուած մեկնաբանութեանց համար գիտական ճշգում մը, որուն ամփոփումը թարգմանաբար կը հաղորդեմ շատ լուրջ աշխատանքէ մը՝ «Կրօններու բաղդատական ուսումնասիրութիւնը» Հանրի Փինառ Տը Պուլէյի (Henri Pinard de la Boullaye, *L'étude comparée des Religions*, 2 հատոր, Յրդ տպգր. 1929ին և ցանկերու հատորը 1931ին, Բ. հատ. էջ 212—4)։

«Ժ. Ֆ. Մադ Լեննըն և Լ. Հ. Մորկըն, թէեւ իրարմէ նշանակելի տարբերութիւններով, մարդկային ընկերութեանց սկզբնաւորութեան կը տեղաւորէին անսանձ խառնակեցութիւն մը, յետոյ ռխմբային ամուսնութիւնը։ Խումբի մը բոլոր այրերը յարաբերութեան կատարեալ ազատութիւն վայելած են եղեր, նոյն խումբին կանանց հետ և փոխադարձաբար։ Ո՞չ սեռային նախանձը՝ որ այնքան շեշտըւած է բարձրագոյն անասուններու մօտ, — ո՞չ այն իրողութիւնները զորս կը հայթայթէին իրենց նկատողութեան առածներէն տարբեր, և ըստ զուգադէպ նշաններու մատնանշումին՝ հնագոյն եղող ընկերութիւններ, — ո՞չ հեղինակութիւնը Դարվինի, ըստ որում ամուսնութեան կոշտագոյն ձեւերը աւելի ուշ ծագում առած են եղեր, երբ մարդ՝ մտաւորական կարողութիւններովը յառաջդիմած ըլլալով՝ բնազդներուն կողմէ յետադիմեր է եղեր. — այս բոլորը կ'ըսեմ, չէին մտահոգիր վերոյիշեալ տեսաբանները։ Ըստ անոնց ըսածին, դանդաղաբար և բազմաթիւ աստիճաններէ անցնելով մարդիկը կրցեր են հասնիլ միակնութեան։

«Արդ՝ երբ ազգագրական վաւերագրերու թիւը լայնօրէն ճոխացաւ, տեսնուեցաւ որ միակնութիւնը կանոն էր աւելի յաճախօրէն աստորնագոյն կոչուած քաղաքակրթութեանց մէջ քան Շրաբճրագոյն յորջորջուածներուն; և թէ շարք մը սովորոյթներ, զորս կը ներկայացնէին իրր վերապրուկը անասնական խառնակեցութեան տիրապետող շրջանին, միակնութիւնը կ'ենթադրեն իրր բնականոն կարգուսարք։ Փրոֆ. Ե. Ա. Վեսթերմարք որ այս նիւթին նուիրեց ամենաընդարձակ հետազոտութիւնը, (Westermarck: «The history of Human Marriage» 2 հատոր, թարգմանուած դերմաներէնի և ֆրանսերէնի), կը գրէ։

ԱԱ.յն ենթադրութիւնը, ըստ որում խառնակեցութիւնը կը կազմէ ընդհանուր հանգրուան մը մարդկութեան պատմութեան մէջ, ոչ միայն մաս չի կազմեր գիտնականօրէն՝ ընդունելի ենթադրութեանց շարքին, հապա մին է ամենէն աւելի անդիտնական ենթադ.

բութեանց, որ առաջ քշուած են ընկերաբանական հայեցողութեանց ամբողջական կալուածին մէջ: Եւ ուրիշ տեղ մը՝ «Իրականօրէն ամենաստորին եղող ցեղերու մէջ չէ, ոչ մէկ. կերպով, որ սեռային յարաբերութիւնները խառնակնցութեան կը մօտենան. պիտի ստուգենք որ անոնցմէ շատեր, ստուարագոյն մասը, ամբողջովին կամ գըրեթէ ամբողջովին միակին են»:

Հեղինակը յիշելէ յետոյ նոյն կերպով արտայայտուող ամերիկացի, անգղիացի, գերմանացի ազդագրագէտներու մատենագրութեանց ցանկը և էջերը, ապացուցաննելու համար թէ նախնական մարդկային ընտանեկան կազմին վերոյիշեալ յատկանիշները մեզ նախատեսել կու այսն ընկերային կազմակերպութեան ամենահնագոյն վիճակը, կը շարունակէ Փրոֆ. Ա. Մ. Տոզզեր (A. M. Tozzer), վստահօրէն.

«Անպաշտպանելի են գմարդկային վոհմակինց տեսութիւնը և այն հաւաստիացումը թէ այդ վոհմակը կ'առաջնորդուի բիրտ ամենամեծ ուժով օժտուած առանձնական այր մարդուն կողմէ: Անհատին ֆիզիքական աննշանութիւնը չղիմանար այս կացութեան: Նոյնքան հեշտ է տկարներուն համար միացեալ ուժով ընդդիմանալ անհատին ֆիզիքական արժեքին: Ասիկա անգամ մը եւս կը հակազրէ իրարու՝ անասնական և մարդկային ընկերութեանց միջեւ գոյութիւն ունեցող տարբերութիւնները: Անասուններու մէջ, ֆիզիքապէս հզօրագոյններն են որ ընդհանրապէս կը պարտադրեն իրենց կամքը իրենց տեսակին պատկանողներուն. իսկ մարդոց մէջ, մտաւորապէս լաւագոյն օժտըւածները կ'ըլլան զեկավարները: Վարելու միտումը գոյութիւն ունի երկու կողմն ալ. սակայն տարբեր են ընտրելիութեան շափանիշները (այսինքն զեկավարի գիրքին հասնելու մէկ կողմէն անասուններու տեսակին մէջ, միւս կողմէն մարդոց):»

Կրօններու բաղդաական ուսումնասիրութեան քաջահմուտ հեղինակը, ապացուցաննելէ յետոյ տակաւին խելքին և ձեռներէցութեան դերը հնագոյն ժամանակներու տիրապետողներու մօտ, կ'եղրափակէ յիշատակած վերջին ազդագրագէտին: Տոզզերի հետ: «Ամերիկեան Ընկերութեանց մօտ բոնակալ ըսուածը գոյութիւն չունի», (*Dans les sociétés les plus rudimentaires le despote est inconnu*): Ամերիկեան Ընկերաբանական Դպրոցին երեսուն տարուան հետազոտութեանց արդիւնքն է, 1925ին, թէ Շնեւիցէ (սեռային) սանձի բացակայութիւնը նախնական (յետամնաց) ժողովուրդներու մօտ եւրոպական ազատախօսութիւն մըն եւ:

Անշուշտ կան տակաւին խառնակեցութեան և մայրիշխանութեան կարգերուն մէջ նախնական ընդհանուր մարդկութեան ապրած ըլլալուն ահսութիւնը ընդունողներ, բայց Պախոֆէնի 1861ին հրապարակնետած ենթադրութենէն ի վեր շատ բան պարզուած է և մեծ ազգաւ

դրագէտ ընկերաբաններ հերքած են անհիմն ընդհանրացումները։ Մայրիշխանութիւն ունեցող ցեղերու այժմեան սահմանները որոշած են մի քանի շրջաններ միայն կան Ամիրիկէի, հարաւային Ամերիկայի և Աւստրալիոյ մէջ, երկիրներ որ Հայոցս մասին եղրակացութիւններ արտօնելու ոեւիցէ իրաւասութիւն չեն շնորհեր։ Եւ ընդհակառակը ապացուցուած է որ հնդեւրոպական և սեմական լեզուներ խօսող ժողովուրդներուն մօտ մայրիշխանութեան հետք չկայ։ այսպէս կ'արտայայտուին Մեյյէ, Հիրտ, Լակրանժ և ուրիշ իրական մասնագէտներ։

* * *

Աղբալեան վերոյիշեալ հերքածս տեսութիւնները իւրացուցած էր հաւանօրէն երիտասարդութեան տարիքին՝ մտքին կազմաւորման շըրջանին, երբ տակաւին բնական գիտութեանց և դարվինական սիսդեմով ընդհանրական հոլովոյթին՝ կարգ մը գիտնական շրջանակներու մէջ տիրապետող մտայնութեան յաղթանակի տարիներն էին։ Մեքենական պատճառաբանութենէն ոչուրա ոչ մէկ բան չէին ընդունիր, հոգին կը մերժէին որովհեաեւ զայն չէին շօշափեր իրենց գործիքներով և մտային դործողութիւնները կը նկատէին իրր ծորումը ուղեղային քջիջներուն։ Անոնց յետին միտքն էր ժխտումը Գերբնականի, Նախախնամութեան, Կրօնի։ Ինք Աղբալեան շատ լաւ բնորոշեց այդ շրջանը, նրբ ըսաւ, իր մահէն քանի մը ամիս առաջ Լեւոն Շանսին նուիրուած գրական-դեղաբուեստական երեկոյթի մը պահուն։ Այս աշխարհիմացութիւնը քաղքենի դասի իմացական կառուցումն էր, որ աղասապրում էր մարդուն Վերինի խնամքից և դնում էր նըրան գոյութեան պայքարի մէջ բնութեան և իր նմանի հանդէպ։

Կարծես թէ Աղբալեան եւս իւրացուցած էր այդ աշխարհիմացութիւնը և մասնագէտ չըլլալով հնախօսական և ընկերաբանական ճիւղերու, իր յարատեւ և բազմակողմանի ընթերցանութիւններէն կը քաղէր նոյն ուղղութեամբ հետաքրքրական վարկածներ ու դրուագներ՝ հաճելի իր համայնագիտական մտքին։ Անոնցմով կը համեմէր մինչև կեանքին վախճանը իր խօսակցութիւնները, բանախօսութիւնները, գրութիւնները։

Այս կարգի հետաքրքրական դրուագներու Աղբալեանի մտքին վըրայ բանեցուցած ձզողութեան յատկանշական նմոյշ մըն է հԲանասէրի Յուշագիրնին ԺԲ. պրակը 1938 թ. լոյս տեսած (Ա. հատոր, էջ 205—227)։ անոր նիւթն է։ Տեսութիւն համատարած թլուատութեան։ Սա՝ ձայներու արտաբերութեան այն մանկական երեւոյթն է որու մասին խոստացայ ճառել։

Թլուատ կը կոչուին այն երախաները որ կ-ն կ'արտասանեն զ.

այսպէս տակ-ի տեղ տաս, կէս՝ տէս, ականջ՝ ատանջ, Մակար՝ Մատար. ո՛ւր որ ըլլայ այս հնչիւնը, բառին մէջտեղը, սկիզբը, կամ վերջը։ Աղբալեան դիտել կու տայ թէ այս երեւոյթը հայկական չէ։ լեզուարաններ և փորձառական հոգեբանութեան մասնագէտներ քննած են եւրոպացի տղոց արտասանութիւնը։ արտատպում մը բաւ է Տըլակուայի գըրքէն զոր Աղբալեան ուրիշ առիթով եւս յիշած է, ինչպէս ըսինք արդէն։ Սորպոնի փրոֆէսէօրը մանրամասնօրէն կ'ուսումնասիրէ երախային լեզու ելլելուն ընթացքը, զանազան հնչումներուն արտաքերման և իւրացման ժամանակադրութիւնը։ կը հանի թլուատութեան որու մասին կը գրէ։ «Արդէն երեխայից մօտ ձայն մը ուրիշ ձայնի մը տեղ արտաքերելուն մէջ սիստեմ կայ, տեսակ մը յարատեւող կանոն մէկ ձայնը միւսէն զանազանող տարբերութեան մէջ։ Երախաները յաճախ և կ'ըսնն փոխանակ կ-ի։ Պատճառն այն է որ այս երկու ձայները կ'արտաքերուին, երբ լեզուն լիովին կ'ընդհատէ շունչին ելքը, բայց մէկ պարագայի մէջ իր ծայրով, միւս պարագային մէջ իր կոնակով (վերի երեսով)։ Երեխայ մը որ կ'ըսէ և փոխանակ կ-ի, պիտի ըսէ զ փոխան գ-ի»։ (H. Delacroix, *Le langage et la Pensée*, էջ 202)։ Ընթերցողս գիտէ որ հոս յիշուած տառերը իրենց հին արտասանութեամբ կ'ենթադրուին, ըստ գիտական տառադարձութեան կանոններուն։ տ=է, կ=k, դ=d և զ=g։

Ուրեմն Տըլակուա զէպքը միայն կ'արձանագրէ հոս։ ուրիշներ արտաքերութեան գործիքներուն աստիճանական զարգացումը նկատի կ'առնեն, և լեզուարաններ կը վնտուն այդ ձայններուն լծորդութեան կապը հնագոյն ժամանակներու մէջ։

Աղբալեան իր կարգին հարց կու տայ թէ ի՞նչ է այս երեւոյթին պատճառը։ արդեօք ակա՞նջն է թիրի։ որ չի զանազաններ կ և ս ձայնները, թէ՞ բերանն է թիրի, որ անկարող է կ արտաքերել։ Դիտել կու տայ որ ինչ ալ ըլլայ պատճառը, երեւոյթը համատարած է։ սակայն, կը յաւելու Աղբալեան, ան զարաւողի է, սովորական չէ։ Բայց ի՞նչ է, կ'ըսէ Աղբալեան, այս անսովոր երեւոյթին բնոյթը։ ան նորակազմութի՞ւն մըն է թէ առհաւութիւն մը։

Տեսաբանը, յանձին Աղբալեանի, կ'ըսկսի իր դերը, և ներկայ խնդրոյ շուրջ հաւաքած լեզուարանական տուեալներուն հիման վրայ զորս պիտի մատնանշնենք իրենց տեղը—, կը կառուցանէ նախնական մարդուն համատարած թլուատութեան տեսութիւնը։ այս պատճառով է որ, մի քիչ չափազանցելով, համատարած կոչած էր երախաներու մօտ թլուատութեան պարագան։ Ըսել կ'ուզէր որ ամեն ազգի երախաներու մօտ ալ կը պատահի։ Աղբալեանի պատասխանը կրնայ դասուիլ իր գրութեանց յատկանշական էջերուն մէջ։ ուստի զայն մէջ կը բերեմ հոս նոյնութեամբ, «Բանասերի Յուշպիրաէն, ԺԲ, էջ 215-217։

«Երեխաներ կան, որ ծնւռում են բաւական նկատելի պոչով։ Գիտութեան համար այդ երեւոյթն առհաւական է։ Երբեմնի համատարած պոչն է, որ բացառաբար երեւում է այդ մանուկին վրայ։ Նրա պոչը ոչ թէ մարգարէական երեւոյթ է, որ գուշակում է ապագան, այլ մի առհաւական երեւոյթ է, որ յիշեցնում է վաղեմի անցեալը։ Մանուկն իր պոչով ոչ թէ մարդկութիւն տանում է դէպի մի նոր վիճակ, դէպի պոչաւոր մարդկութիւնը, այլ հին պոչաւոր մարդակերպ անասունի յետին շառաւիղն է նա։ Արդ՝ ի՞նչպէս դնահատենք թլուատութիւնը։ Դա մի արկած է թէ մի հետք։ մարդիկ գնում են դէպի համատարած թլուատութիւն և թլուատ երեխան գալիք մարդկութեան մի վաղահաս պտո՞ւղն է թէ՝ մի հին թլուատ մարդկութեան վերջին նմուշը։ Ես ասում եմ։ Թլուատութիւնը արկած չէ։ Նա օրգանական թերութիւն է, նա զուգահեռն է հին պոչի։ Նա հին վիճակի վերերեւումն է և ոչ-դալիք միջակի մը գուշակ։ Մի ժամանակ ամենին եղած են թլուատ, ինչպէս ամէնքը՝ պոչաւոր։ այսօր մի ժանի երեխայ ծնւռում են թլուատ ինչպէս մի քանիսն են պոչաւոր։ ծնւռում։ Դա մի «թերութիւն» է մեր աշքին, բայց իրօք հին վիճակի մի ապստամբ մնացորդն է, ինչպէս ազգապղծութիւնը կամ ոճիրը, որ առհաւական են։

«Թլուատ երեխաներն անարգել արտաքերռում են և և անկարող են կը ճանաչել և արտաքերել. սա նշան է, որ իր արտաքերական գործարանի մէջ և-ն աւելի կայուն յարմարութիւն ունի քան կը։ Ժամանակի ընթացքին թլուատութիւնը սովորաբար վերանում է։ Ի՞նչն է պատճառը այս երեւոյթի։ Արդեօք երեխայի բերնի մէջ մի թերի կար, որ լրանում է և բերանը յարմարութիւն է ձեռք բերում կ արտաքերելու, թէ՝ լսողութեան ջղի մէջն էր թերին, որ ուղեղի վրայ կ-ի ձայնական զրոշմ չէր ստեղծում, ուստի երբ կենդրոնը շարժում էր ձայնածին կամ ձայնարար նեարդերը՝ իրը արդիւնք ստացւում էր և ոչ կ, որովհետեւ կենդրոնը կ.ի դրոշմ չէր ստացած։ Ինչ և լինի այս երեւոյթի պատճառը, մենք մեր առջեւ ունինք ձայնարար կամ ձայնածին մի կառուցուածք, որ անկարող է կ յօրինել և արտաքերել։ Այդ կառուցուածքը հին է, առհաւական և երբեմն եղած է համատարած։ Թլուատ երեխան աշխարհ է գալիս վաղեմի մարդու արտաքերական այն կառուցուածքով, որ անկարող էր կ յօրինել, ինչպէս պոչաւոր երեխան այն մարդկութեան հեռաւոր մէկ նմուշն է, որ պոչ ունէր։ Եւ ինչպէս երեխայի պոչն արագօրէն անփոփուում է — կարճ ժամանակի մէջ անցնելով այն հոլովոյթը, որ հազարաւոր դարեր է տեւած, այնպէս և թլուատ երեխան արագօրէն ձեռք է բերում կ արտաքերելու յարմարութիւնը։

«Այն հանգամանքը, որ թլուատ երեխային կ.ի արտաքե-

բութիւնն է պակասում և ոչ թէ ա-ի՝ ինձ բերում է այն Աղքակացութեան, որ և արտաքերելու ունակութիւնն աւելի հին է, քան կը արտաքերելու յարմարութիւնը։ Մարդու բերանը նախ և է արտաքերուծ և ապա միայն կը Տան աւելի հին ձայն է, քան կ-ը։ Մարդու մէջ ինչ որ նոր է՝ աւելի շուտ ենթակայ է կորուստի քան ինչ որ հին է։ Մարդու եսն աւելի նոր է քան իր մարմինը, ուստի երբ խաթարում է ես-ը (խենթը, խելադարը) մնում է անրան անասունը, որ շարունակում է խժոհի և ապրել, որովհետեւ մարդը շատ աւելի երկար զարեր խժոհած ու տպրած է, քան մտածած, զգացած ու կամեցած։ Այդպէս նաև մարդն ատամով է կրծում ու կտրում միսը, երբ դանակ չունի։ Այ բերանը ջրին ընկած է խմում՝ երբ բաժակ չկայ, որովհետեւ մշակոյթն աւելի նոր երթուոյթ է քան կրծող ու խմող մարդը։ Մարդու մէջ անասունն անհամեմատ հին է, քան ռմարդն ու ռմարդկայինը և երբ կորչում է ռմարդկայինը՝ մնում է անասունը։ Այսպէս ուրեմն՝ ես կարծում եմ; որ Տ. Ն. աւելի հին է քան կ-ը և որ նախ քան կ-ի երեւումը՝ Տ-ը համատարած մի ձայն էր։

Այս բոլորը՝ համեղ ոճող ընդլայնուած ապացոյցն է Աղքալեսնի նոյն գրքոյին մէջ բանաձեւած թեզին (*thèse*)։

«Գիտութիւնն ասում է, թէ այսօրուան բանական մարդը հազարաւոր դաշեր առաջ եղած է մի անբան անասուն։ իր նստաեղի մանր ոսկորները, որ մի մատնաշփ կցուածք են, երբեմն կազմած են մի կանգընաշփ պոչ։ Պոչը շխցած է, բայց հետքը մնացած է։ Հինը, չի մեռնում, սկօղւում է։ Այդպիսի մի հին մնացորդ եմ համարում ես բլուատութիւնը։»

Պարզած անսութեան վրայ հիմնուելով Աղքալեսն կը շարունակէ իր կառուցումը։ լեզուարանական և պատմական խիստ կարեւոր եղքակացութիւն մը կը բանաձեւէ հնագոյն ցեղերու լեզուական առընչութեանց և անոնց թափառման ու գաղթականական ուղիներու և կայաններու նկատմամբ։ Այս կէտը կը յապաղենք առժամարար, քըննելու համար այժմ վերջնականապէս իր մեթոտին ամենախոր հիմնը։ Թը՝ լեզուարանական մարդէն անդին՝ իմաստափրութեան հատկապ ունին։

Թէ պատմական ժամանակաշրջաններուն մէջ, հետեւարար ըստուգուած հանգամանքով, մարդկային ծնողներ ի՞նչ քուով պոչաւոր երախաններ տրտադրած են եւ մանաւանդ ո՞ր աստիճան անոնց նստաեղիին ցուցադրած նարօրինակ երեւոյթը պոչ կոչուելու արժանի է, սա բնախօսական—բժշկական ինդիր մըն է որ իմ հմտութեանս մարդէն դուրս կը մնայ։ Հայ բժիշկ մը ինձ կ'ըսէր թէ երախայի նստափեղին վրայ կրնան պատահիլ առ առաւելն մսի, մկանի, եթէ կ'ուղէք դմակի նման դիզումներ, լնդլայնումներ։ սակայն ասկէ չհետեւիր որ

ատոնք ըլլան իրական պոչեր, այսինքն պոչի գործիական պատօնքը կատարեն: Կը վախնամ որ հապճեպով դատողներ նկարագրած ըլլան սոյն հետաքրքրական վարկածը մեր բանասէրին կարդացած ազգագրական մէկ կամ միւս գրքին մէջ:

Աւելի կարեւոր է ըստ իս մարդկային մարմնոյն կենդանակերպ զոյգէ մը սերելուն հարցը: Տարվինի յայտնած գաղափարները՝ ռարանս-ֆորմիզմի վարդապետութիւնը և զայն հիմնաւորող դէպքերը մաղէ անցուած են և հիմա մեծագոյն գիտուններ կտպիկին խօսքը ընելէ կը խորշին, անոր մարմնէն մարդկային մարմնոյն փոխանցումը անկարելի գտնելով: Այսպէս Եանքելեվիչ, Քասովից, Պօնիէ և ուրիշներ որ դանազան լեզուներով մատնանշած են «La crise du Darwinisme»: Անոնք աւելի հիմնօրէն կը քննեն խնդիրը. մարդկային մարմնոյն աւելի մերձագոյն, թեպետեւ տակաւին չգտնուած, թերեւս ալ երբեք չգտնուելիք՝ միջնորդներ կը փնտուն՝ մարդակերպ կենդանիներ: Օրէ օր առաջ կ'երթայ նոլովոյթի-տեսութիւնը, բայց միշտ ֆիզիքական սահմաններու մէջ: Հաւատացեալ գիտուններ կը համարձակին նոյնիսկ ըսելու որ ան աւելի վայելուչ է Արարչագործութեան ընդհանուր տընտեսութեան: Ըստ կ'ուզեմ թէ մարդկային մարմնոյն ալ կենդանակերպ զոյգէ մը սերելուն նկասմամբ սկզբունքային դժուարութիւն չունիմ. կ'ըսպասեմ որ գիտութիւնը զայն ապացուցանէ փաստացիօրէն. ինչ որ տակաւին չէ կատարուած անվիճելի կերպով. թերեւս ալ միշտ պիտի մնայ հմայիչ, բայց հաւանական միայն՝ ենթադրութիւն մը, տիսութիւն մը:

Սակայն անընդունելի կը դտնեմ Աղբալեանի սա վճիռը զոր քանիցս կրկնած է իր զրութիւններուն մէջ. «Գիտութիւնն ասում է քե այսօրուան բանական մարդը նազարաւոր դարեր սուած եղած է մի անբան անասուն:»

Մեր հանդուցեալ բանասէրը ո՛չ մի տեղ չէ բացատրած թէ ինչպէս անբան անասունը կրնայ դառնալ մարդ բանական, եթէ զոյութիւն չունենայ արտաքին միջամտութիւն մը, եթէ Գերագոյն Ոյժ մը՝ այն ալ Բանական; չդնէ բանականութիւն անբան անասունին մէջ:

Երախան, մսի ոսկորի կտոր մը աշխարհ եկած օրը, անժապիտ, անասուն՝ անբան եթէ կ'ուզէք. բառին արմատական իմաստով, այսինքն չխօսող, քանի մը շաբաթէն կը ժպտի արդէն սեւեռելով աչքերը մօրը աչքերուն. քանի մը ամիս յետոյ կը ճշայ, ճիգեր կ'ընէ լեզուին կապերը քակելու. վերջապէս լեզու կ'ելլէ, բայց դեռ թոթով է, թլուատ է: Խնդիր չէ, արգէն խօսուն է, ասուն է, վասնզի բանական է: Ժպտիլ փորձող երեխային մէջ կար արդէն բանականութիւն. մօրը արգանդին մէջ իսկ ան ունէր բանականութիւն՝ այսինքն իմացական կարողութեամբ օժառւած հոգի, որ՝ կարենալ գործելու

համար՝ պէտք ունի լոյս տեսած, կաթ ծծած, ժողով ու համբոյր վայելած, լեզու ելած մարմնոյ օժանդակութեան։

Վաւերացնենք մեր տեսակէտը Աղբալիսնի ծանօթ Հանրի Տըլակրուայի գիտնական տարազով մը : Սոյն հոգերանին մէկ ուրիշ զրքէն կ'առնեմ հետեւհալ տողերը, որ կ'եղբափակեն երախաներուն լեզու ելլելուն, խօսիլ սորվելուն վրայ ճառող զլուխը։

ԱԱյսպէս է խօսքին առաջին փուլը, այսպէս նախալեզուական խօսքը, որ է շահագործումը սկզբնական հարստութեան մը (այսինքն ունեւորութեան մը), արտասանական կարողութեան և այս կարողութիւնը լսուած ձայներու կաղապարին համեմատ ծոելու ձեւելու վարպետութեան։ և այս բոլորը՝ լեզուական շահագրգութեան և նշանի նախադացման հրահանգին տակ (ձայնը գաղափարի նշան է)։

«Կը կրկնենք՝ խօսքը նշանի վրայ կը կոթնի։ Կը կրկնենք՝ խօսքը խօսքէն կը ծագի, որ է ընտրութիւն մը (sélection) նախապէս անորոշ՝ բերանային—կոկորդային շարժուձեւերու մէջէն, — որ է միատարր և խստամբեր կազմակերպումը առարկայի մը գերազանցապէս հարուստ և կարող յանհունս բառեր հայթայթելու։

«Նշանը իր կարգին կը կոթնի տրամաբանական յարաբերութեանց վրայ։ Անոր գործածութեան նախապայմանն է գործողութեան և տիեզերքի ընթերցումը (այսինքն կարդալ հասկնալ զիտնալը), որ է բանի սկսող իմացականութիւնը։» (Henri Delacroix, *L'enfant et le Langage*, 1934, էջ 70)։

Այս է պարագան նորածին երախային։ Նոյնն էր պարագան հանուր մարդկութեան, երբ ան տակաւին մէջն էր իր խանձարուրին։ Վերոյիշեալ գերապահումը աչքի առջեւ ունենալով կրկին կարդանք Աղբալիսնի Հայոց լեզուի մասին գրած դիտողութիւններուն յառաջարանին սկզբնաւորութիւնը։ պիտի համոզուինք թէ մեր հանդուցեալ բանասէրը որքան աւելի իմաստունորէն և պերճօրէն արտայայտուած էր այդ պատկերալից տողերուն մէջ։

«Մեր մարմինը մենք բերում ենք անյիշելի դարերից։

«Այսօրուան գեղադէմ տիկինը եւ բարեկազմ պարոնը սերում են նին այրտքնակ եւ ծառաբնակ կենդանակերպ զոյգից։ Նիւտոնի հանճար իբր կարողական զօրութիւն արդեն նստած էր քարի երջանի մարզու գլխի մէջ, մեկը միւսի բնական զարգացումն է։

«Մարդկային մտածումը գործում էր եւ այն ժամանակ, երբ կենդանածեւ մարդն առաջին անգամ անողորկ կայծարն սկսեց իբր զենք գործ ածել։

«Նոյն մտածումն էր, որ կապուեց այս ու այն ձայնախմբին եւ ըստեղեց բառեր ու լեզու։ Մեր այսօրուան յօդաւոր լեզուն իր տարերքն առած է կենդանածեւ մարդու անորու ձայներից։

«Լեզուն այլ բան չէ, բան ձայնական նշանների մի համակարգ, որ

արտայայտում է մտեր, զգացումներ ու կամք։ Նա մտաւորական նիզի արդիւնք է. Եւ հեռաւոր սերունդների մտաւորական աշխատանքը խուզած է այսօրուան լեզուի մեջ, ինչպես մեր մարմնի եւ հոգեկան կարողութեանց մեջ խուզած է անհամար սերունդների բաղաբակրական նիզը։» (Հայրենիք Ամս. 1928, փետր. էջ 79):

Թէ Հայոց լեզուն ի՞նչ դարաւոր ուղիներու և միջավայրերու խըտացում կը ներկայացնէր, երբ Սուրբ Մեսրոպ արձանացուց զայն գրի միջոցով ե. դարուն սկիղը, և թէ գրաւոր ժամանակներու մէջ իսկ անոր ցուցադրած պատկերը ի՞նչ ենթադրութիւններ կը ներշնչէ իր անցեալի մասին, այս հարցումներուն պարտի պատասխանել լեզուաբանը։ Թէ այս մասին ի՞նչ է Նիկոլ Աղբալեանի կարծիքը, այլ խօսքով՝ լեզուաբանական ո՞ր դպրոցին կը պատկանի մեր հանգուցեալ բանասէրը. պիտի ըսենք յաջորդ ենթահատուածին մէջ։

3. ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԽՆԴԻՐԸ

Քանի որ Հայոց լեզուն է մեր նկատողութեան կեղրոնք, ըսենք թէ այս մասին երկու խնդրոյ շուրջ կը դառնայ գիտուններու հետազօտութիւնը, աւելի ճիշդը նոյն խնդիրը երկու երես ունի.

ա. — Մեր գրաբար լեզույն հանգամանիք.

բ. — Մեր ռակիկ լեզույն առնչութիւնը գրաբարի հետ։

Այս բազմակողմանի բարդ խնդրոյն լուծման համար, ինչպէս գիտեն մեր ընթերցողները, երկու որոշ դպրոց կայ՝ հնդեւրոպականացանը և յարերաբաննը։ Յիշեցինք այս երկու Դպրոցներուն վարդապետութիւնները, կարենալ բնորոշելու համար այս մասին մեր հանգուցեալ լեզուաբանին տեսակէտը։

* * *

Անցեալ դարերու առաջին կիսուն հայկացեան լեզույն գիտական ուսումնասիրութիւնը ուղիղ ճամբու վրայ դրուած էր Պետերմանի, Վինտըշմոնի և Բօպպի համեմատական քերականութեանց լոյս տեսնելովը։ Հիւրշմանի վերտապահուած էր վերջնականապէս հաստատելու որ իրօք հայերէնը հնդեւրոպական լեզու մըն է և կը կազմէ առանձին՝ ինքնուրոյն ճիւղ մը հնդեւրուպական լեզուներու ընտանիքին մէջ։

Մեյյէ իր գրչով ճշգրտօրէն բնորոշած է իր ուսուցչին և անոր յաջորդող գիտնականներուն, մանաւանդ իր և Աճառեանի դերը, = (վերջինս եղած է աշակերտը թէ Հիւրշմանի թէ Մեյյէի) —, հայ լեզուին գիտական հետազօտութեան զարգացման մէջ (տես Revue des

Etudes Arméniennes, հատ. VIII, 1928. էջ 253—256): Կը նախընտրեմ յիշատակել Աղբալեանի գնահատանքը այս մասին։

«Լեզուախոյզների նոր սերունդը, որին պատկանում էր Հ. Հիւրցման և որ յայտնի է ռոր քերականներա անունով, խիստ կանոնաներ մշակեց լեզուական համեմատութեանց համար, վերաքննեց նախորդ սերունդների աշխատանքը, շատ բան մերժեց, որ կատարուած չէր գիտական նոր պահանջների համաձայն և հնչաբանութիւնը դարձրեց հաստատուն հիմքը լեզուարանութեան։ Այդպիսի մի հիմք Հ. Հիւրցման խորարկեց և հայկաբանութեան համար, մշակելով հնչական կշիռների մի ցանկ, ուր կարելի էր տեսնել թէ ենթադրական նախալեզուի այս ինչ ձայնը ի՞նչ կերպարանք է ստացած Հայոց լեզուի մէջ։ Այդցանկը մինչեւ այսօր շարունակում է առաջնորդել հայագէտներին իրենց հետախուզական աշխատանքի մէջ։ Նա կազմում է հայագիտութեան այրութէնը։ Հ. Հիւրցմանի տաղանդաւոր հետեւորդները Փրանսացի Ա. Մէյէ և մերազգի Հ. Աճառեան ուրիշ եւրապացի գիտունների հետ միասին շարունակեցին նոյն հիմքերով հետախուզել մեր լեզուն և մի անգամ ևս հաստատեցին իրենց վարպետի այն համոզումը թէ հայերէնը հնդեւրոպական լեզու է և անկախ մի ժառանգումը է հնդեւրոպական նախալեզուի։ Այս քննութեանց խտացումն եղան երկու հոյակապ գործեր։ մէկը Ա. Մէյէի Ռւրուագիծը հայերէնի համեմատական քերականութեան, միւսը Հ. Աճառեանի Հայոց լեզուի Արմատական բառարանը։ Այս երկու գործերը հայերէնի հետախուզութեան հիմնաքարերն են։ Եթէ մէկը կամենում է հնդեւրոպական լեզուաքննութեան ուղիներով ընթանալ, պէտք է իւրացնէ այդ երկու գրքերի նիւթն ու ոգին, այլտպէս չի կարող հընդեւրոպական լեզուագիտութեան տեսակէտից գիտապէս պիտանի արգիւնքի հասնել։ (Ն. Աղբալեանի «Պատմութիւն Հայոց Գրականութեան Ներածութիւն», էջ 112)։

Հարկ չկայ հաս մանրամասնութեանց մէջ մտնելու ցուցնելու համար թէ ըստ այս դպրոցին ի՞նչ են, հնդեւրոպական միւս ճիւղերուն նկատմամբ, հայերէնին բնորոշիչ յատկութիւնները։ Անհրաժեշտ է արձանագրել երկու դիտողութիւն։

Վերոյիշեալ գիտունները, նշմարելով հայերէնին վրայ բազմաթիւ շեղումներ ենթադրեալ հնդեւրոպական նախալեզուին ձայնական դըրութենէն, ինչպէս ձեւական երեւոյթներ և մանաւանդ բազմաթիւ բառեր (հայկական բառագանձին գրեթէ վեց եօթերորդը) չեն մեկնուած ցարդ նախորդ տեսութեամբ։ Կ'ենթագրեն որ ատոնք արդիւնք են եկուոր Հայ — Արմէններուն լեզուին վրայ փոխադարձած հակազդեցութիւնը բնիկ ժողովուրդներուն կողմէ իրենց նախկին լեզուները կորսնցնելու ընթացքին։ Սնբախաւի մթին յարատեւութիւն կոչուած

լուծումն է ասիկա . *substratի ինչպէս կ'ըսեն այն գիտնականները*,
(տե՛ս Մէյէի յիշած յօդուածս՝ *Revue des Etudes Arméniennes*, VIII,
էջ 255):

Երկրորդ դիտողութիւնը ռամկօրենին կամ հայ բարբառներուն հա-
մար է: Մեյյէ բացէ ի բաց կ'ըսէ թէ ահայերէնը (Ե. դարուն գրա-
բարը) բարբառներ (*dialectes*) չունի. իր սկզբնաւորութեան (Ե. դա-
րուն) ան ծանօթացուած է միակ ձեւով, և արդի խօսելակերպերը
չեն պարունակեր ոչ մի գիծ որ ենթադրել տայ թէ Ե. դարուն Յ. Ք.
գոյութիւն ունէին բարբառներ՝ նշանակելի կերպով, (*gravement կ'ը-
սէ ան*), տարբերող իրարմէ:» (A. Meillet, «*Esquisse ևայլն» էջ 9.)
տես նաև էջ 59 ենթախաւին համար): Նոյնպէս կը խորհի Հայր Մա-
րիէս (L. Mariès, «*L'arménien Classique pour lui-même*, ի հանդէ-
սին՝ *Revue de l'Orient Chrétien*, V (XXV), 1925—1926, էջ 389):
Հարկ է նաև յիշատակել Աճառեանի վկայութիւնը. «Այսպիսով վեր-
ջին անգամ հաստատում է այն միտքը, թէ Ե. դարում կամ նրա-
նից առաջ էլ, Հայաստանում խօսւում էր մի հայերէն, որի ներկա-
յացուցիչն էր գրաբարը: Բարբառների այնպիսի սուր տարբերութիւն
ինչպէս նկատում ենք այժմ մեջ մէջ, չկային. եղածները մանր բա-
նիր էին: Հետեւաբար զուր է ոմանց այն ննթադրութիւնը թէ հին
հայերէն և գրաբար իրարից տարբեր բաներ են կամ թէ գրաբարք
հին հայերէնի զանազան՝ բարբառներից մէկն է . միայն: — Այս կար-
ծիքը ունէր նաև իմ ուսուցիչ հանգուցեալ հայագէտ Հիւրշման, և
նոյն կարծիքին է դարձեալ հայագէտ Մէյէ:» (Աճառեան՝ «Հայ բար-
բառների ծագման ծամանակը», վերցուած՝ հեղինակին «Հայոց լեզուի
պատմութիւն» գրքէն և տպուած «Սիոն»ի մէջ 1940, էջ 311):*

* * *

Հնդեւրոպական հոյտկապ, ամուր կառուցումին դէմ կը կանգնի
այժմ յաբերաբան տեսութիւնը, որուն հիմնադիրն է Ն. Մառ: Անոր
անձն հւս հաճելի է ինձ ներկայացնել Աղբալեանի գրչով.

Ան. Մառ մեր Ք. Պատկանեանի աշակերտն է և իրքեւ հայագէտ
բանասէր մեծ հրախտիք ունի մեր հին գրականութեան և լեզուի հե-
տազոտութեան մէջ: Լինելով միաժամանակ հմուտ վրացագէտ՝ նա իր
հետազոտութեան աշխատանքները հայ և վրաց գրականութեան մա-
սին կատարած է զուգընթաց: Խնքն է, որ հիմնած ու վարտծ է ռԲնա-
գիրներ և հետազոտութիւններ հայ-վրացական բանասիրութեանց
անունը կրող նշանաւոր շարքը, ուր լոյս տեսած են մի քանի մե-
ծարժէք հայ բնագիրներ Ն. Աղոնցի, Յ. Մանանդեանի և այլոց հե-
տազոտութեամբ՝ միասին Աւելի մեծ է իր բերած նպասար վրաց բա-

նասիրութեան։ Իր ծովածաւալ հմտութեամբ և բազմաթիւ լեզուների գիտութեամբ, իր անօրինակ ջանասիրութեամբ և մանրակրկիտ խըղճմբութեամբ նա մի նշանաւոր գիտուն էր. իսկ իր զօրաւոր իմացականութեամբ և յանդուդն յղացումներով մի հեղինակաւոր առաջնորդ բանասիրութեան մէջ։ Իր հետաքրքրութիւնը սակայն միմիայն բանասիրական չէր — այլ լեզուաբանական, իսկ իր բանասիրութիւնը լսկ գրական երկերով չէր սահմանափակւում, այլ ընդգրկում էր նաև պատմութիւնն ու հնագիտութիւնը և ոչ միայն այն ազդերի, որոնց լեզուն ու գրականութիւնն էր իր հետազօտութեան գլխաւոր առարկան, այլ և այն միջավայրի, ուր երեւցած ապրած էին այդ գրականութիւնն ու լեզուները։ Նա հմուտ էր բիւզանդական, պարսկական, ասորական և արաբական լեզուների և գրականութեանց։ Դեռ ուսանողական շրջանին նա որոշեց վրաց լեզուի դիրքը, որ մինչ այդ մի առեղծուած էր և յայտնեց այն միտքը թէ նա ցեղակից է սեմիտական լեզուներին։ Տարիների ընթացքին միշտ քննութեան առնելով այլալեզու գրականութիւններ իր համեմատական հետազօտութեանց համար՝ նա տստիճանաբար բանասիրութիւնից անցաւ լեզուաբանութեան և յղացաւ իր տեսութիւնը յաբեթական լեզուների մասին և այնուհետեւ խորացաւ այս նոր գիտամասի մէջ։ Դառնալով հիմնադիրը լեզուաբանական մի նոր գիտութեան — յարեթաբանութեան։ (Ն. Աղբալեան՝ «Պատմութիւն...», էջ 114—115):

Ն. Մառ, երբ հրատարակեց 1903ին «Հայոց հին գրականութեան լեզուի հերականութիւնը» (ռուսերէն), այս կարծիքն ունէր թէ հայ լեզուն խառն լեզուի մի օրինակ է ուր հնդեւրոպական բառամթերքն ու լեզուական ձեւերը խառնուած են մի ուրիշ լեզուի բառամթերքին ու ձեւերուն և որ այդ ռուրիշ լեզուն շօշափման կէտեր ունի Վրաց լեզուի հետ։ Բայն տարի յիտոյ տարբեր տեսակէտ յայտնեց, որովհետեւ մինչ այդ կառուցած էր իր նոր գրութիւնը՝ յաբեթականը, ըստ որում, լեզուներու ընդհանուր զարգացման մէջ, կայ լեզուախումբ մը։ Նախնագոյն դիրքի մէջ մնացած, և որուն այլ տեղեր ընկերույթին և զուցէ կրիմայական պարագաներու տակ կրած այլակերպումին, աստիճանական բարձրացումին վիճակն են հնդեւրոպական կոչուածները։

Այդ յաբեթական լեզուները՝ — սա՛ պարզ անուանակոչում մընէ, քանի որ նոյն նահապետի միւս երկու որդիներուն անունները գործածուած են արդէն՝ Սեմական, Քամական լեզուներ —, Ասիոյ Փամիրեան լեռներէն մինչեւ Ատլանտեան ովկիանոս մէկ կողմէն և իյաշաղական միւս կողմէն, կը խօսուին եղեր ատենօք և ասիկա նախնդեւրոպական շրջանն է եղեր, որուն յաջորդած է հնդեւրոպականի զարգացած գիճակը։

Դալով հայոց լեզուին նկատմամբ Մառի կարծիքին, նոյնութիւն չկայ զանազան ժամանակներու մէջ յայտնած տեսակէտներուն միջեւ, որովհետեւ անոր ընդհանուր տեսութիւնը միշտ լինելութեան մէջ էր:

Նախապէս՝ մեկնելով այն կէտէն թէ Հայերը արեւմուտքէն զաղթած են դէպի Հայաստան և թէ մեր երկրին նախկին քնակիչները լիալդեր էին, Ն. Մառ կը հետեւցնէր թէ այս վերջինները յաբերական լեզու խօսած ըլլալու են և հայերէնը այդ Խալդեան լեզուն է, որ շըփուելով ներգաղթողներուն (Հայոց) հնդեւրոպական լեզուին հետ, նոր տարրեր ստացած է և կերպով մը հնդեւրոպականացած: Եւ ըստ նոյն հեղինակին, մեր աշխարհաբարը բնիկ տեղացիներուն Արամիկներուն լեզուն է, ուրկէ կու գայ իր անունը ռամկօրէն, որ պահած է քերականական ձեւեր և բազմաթիւ բառեր, զուգահեռաբար գրաբարին և ասկէ աւելի հին ըլլալով ինք: Երկուքն ալ իրարու խառնուած են հետզհետէ:

Բայց երբ Մառ կանգնեց իր ընդհանուր տեսութիւնը լեզուներու ընթացքի մասին, նկատելով յաբերականը անոնց զարգացման նախորդ ասինանը, վերջին դնելով հնդեւրոպականը, այն ատեն աշխարհաբարը աւելի մօտէն կապած՝ կը թուի գրաբարին: Ըստ այն ատեն որ վրացերէնիր, հարաւային կովկասի լեզուներուն հետ, կը կազմէ մի ընտանիք, որ մի ճիւղն է յաբեթական լեզուին, որուն երկրորդ ճիւղըն է Հայաստանի հարաւային կողմը գերիշխող մի ուրիշ խումբ՝ Անմականը: Հայկական լեզուն ալ այդ երկու աշխարհապրական հողամասներուն լեզուն միացնող՝ հայկական շերտն է, ինքն ալ ստիպողաբար յաբերական:

Մառի նոր տեսութիւնը լոււ կ'ամփոփէ Աղբալեան հետեւեալ տողերուն մէջ. և Այս անգամ մեր լեզուն նրան (Մառի) երեւում է ոչ թէ մի խառնուրդ, այլ մի ամբողջութիւն, մի յաբեթական հին լեզու, որ իր հնդեւրոպացման կէս ճամբին է մնացած: ունի բառամթերք ու ձեւեր, որ յաբեթական վիճակի ժառանգութիւնն են և վերապրումը: Այսպիսով կարելի է մեկնել, օրինակ. թէ ինչո՞ւ մեր հնչիւնների թիւն ու որակը նոյն է վրացերէնի հետ, որ յապեթական լեզու է և ինչո՞ւ բազմաթիւ բառեր նոյն արմատն ունին հայ և վրաց լեզուների մէջ. ա (Նոյն գիրքը, էջ 117): Եւ աշխարհաբարն ալ ուրեմն, ըստ Մառի վերջին տեսութեան գրաբարին հետ վերջընթեր աստիճանի վրայ՝ կէս ճամբան մնացած լեզու է:

Եզրակացնենք ըսելով որ ըստ առաջին Դպրոցին՝ հայերէնը հընդեւրոպական լեզու մըն է, որը, Հայոց պատկանելիք հողին վրայ ոտք կոխելով, տեղական-ասիական տարրեր ստանձնած է. — մինչ, ըստ երկրորդ Դպրոցին վերջին տեսութեան, ան տեղական-ասիական (յաբեթական) լեզու մըն է, որուն կը միանան՝ պարտադրուած՝ կարգ մը հնդեւրոպական քերականական ձեւեր և նոր բառեր:

Ընթերցողներս գիտեն թէ Վրացի մհծ գիտնականը ձարերու օրով սկսած էր իր տեսութեանց մշակումը, բայց Խորհրդային Ռուսաստանի մէջ իր տեսութիւնը ստուգաւ պաշտօնական հանգամանք և կը համարուի մարքսիստական, գլխաւորապէս այն պատճառով որ Մառի տեսակէտները ներդաշնակ են կ. Մարքսի տեսութեան, որ մարդկային մշ ոկոյթը կը նկատէ տնտեսական յարաբերութեանց վերնաշէնք:

* * *

Յաճախ մեր հանգուցեալ բանասէրին խօսքերն իսկ մէջբերելով պարզեցի երկու Դպրոցներուն վարդապետութիւնները, օգտուելով նաև Մէյէի, Աճառեանի, Ղափանցեանի, Տաշեանի հմտալից երկերէն: Տեղն է հիմա պատասխանելու թէ ո՞ր դպրոցին կը պատկանէր Աղբալեան:

Նախ պէտք է խոստովանիլ որ մեր հանգուցեալին կը պակսէր, մեթոտիկ պատրաստութենէ զատ, գոհացուցիչ ծանօթութիւնը հին լեզուներու (յունարէն, սանսկրիտ, լատիներէն, հիթիթերէն և այլն), որ պէսզի կարենար վստահօրէն նետուիլ ասպարէզ, ենթադրելով իսկ որ իր նկարագիրն ալ արտօնած ըլլար խորացած մնալու ձեռնարկուած նիւթի մը մէջ: Ինք իր կարգին ունէր առաւելութիւն մը՝ գլխաւորապէս եւրոպացի գիտնականներուն վրայ, կովկասեան մի քանի լեզուներու՝ գլխաւորապէս վրացերէնի հետ, կատարեալ ծանօթութիւնը կարեւորագոյն հայ բարբառներուն: Այտքնեան հիմնած է հայ բարբառագիտութիւնը, ուրիշներ մշակած են մասնագիտօրէն այս կամ այն բարբառը. Աճառեան ամբողջացուցած, խորացուցած և դասաւորած է հայ բարբառագիտութիւնը: Աղբալեան, նախորդներուն հմուտ հիման վրայ, գիտէր հայ բարբառներուն առանձնայատկութիւնները՝ մէջը սպազողի պէս, արուեստագէտի՝ բանաստեղծի պէս: Նոր բարբառներու օժանդակութեամբ կը լուսաբանէր անցեալը, հինը, և մեր հին լեզուն՝ գրաբարը շատ լաւ գիտէր:

Բայց ուր որ հինին համար ուրիշներ կատարած էին խուզարկութեան, հմտութեան տքնութան աշխատանքը. ինչ համադրական ուժով, հմայիչ ոնով և յստակօրէն Աղբալեան կը ներկայացնէր ստացուած եղբակացութիւնները:

Մեր հոս քննութեան առած խնդրոյն նկատմամբ, յաճախակի ակնարկութիւններ կան, որոնք երբեմն կը թուին իսկ, եթէ ոչ հակասական, գոնէ այլազան: Անցողակի կերպով այս նիւթի մասին քանիցս գաղափար յայտնած ատեն՝ անդրադառնալու խոստումով, տարուած կը թուի մերթ ընդ մերթ չափազանցութեան, ուսումնասիրած կէտին ներշնչած հետաքրքրութեան և կամ առթած գիւտինք՝ նորութեան

հետեւանքով : Քանի մը մէջբերումներ ընեմ նախորդ երկերէն, վերջինը յիշատակելէ առաջ : Ընդգծումները ինձմէ են :

«Անյիշատակ պայքարների մէջ, ճակատելով բազմազան լեզուների դէմ, տոկալով պատմական բախտի չար հարուածներին՝ ընկճըւած է հնագոյն հայերէնի վես կերպարանքը, որ այսօրուան բարբառների մէջ հասած է յետին անշըքութեան՝ նրանց տէր ու պահապան գեղջուկի նման : Սակայն ինչպէս տէր այնպէս եւ իր լեզուն նաւատարիմ բայց նկատն զարմն են մեծազօր Հատերի եւ Ուրարտացի անվեհեր ուազմիկների եւ նրանց մեծագոր բարբառի խուլ արձագանզն և . որ դեռ ինչում է մեր գրաբարի եւ աշխարհաբարի մէջ . . .» : (Հայրենիք Ամսագիր 1928 յունիս, էջ 87):

«...Զեմ ուզում փաստերից առաջ անցնել, բայց յուսով եմ ժամանակին հազարաւոր փաստեր բերելու, որոնք պիտի հաստատեն թէ հայերենն ու վրացերենը մի օատ հին հնդեւրոպական լեզուի բարբառներ են : Դարեր ու դարեր ապրելով Հայաստանի եւ Վրաստանի մթին ձորերում, խորին փոփոխութեանց ենթարկուելով անջատօրէն և շատ ուշ գրի առնուելով, ն րանք այսօր թւում են անհունապէս տարբեր լեզուներ : Առայժմ դոհանում եմ այս յայտարարութեամբ :» (Հայրենիք Ամս. 1928 դեկտ. էջ 139):

«Հայոց լեզուն հնդեւրոպական է իր լրութեամբ, այսինքն իր բոլոր բարբառներով . բայց այդ բարբառները միօրինակ հոլովոյթ չեն ունեցած . մէկն իր նախնական միջակ դան պահած է անփոփոխ, միւս մը փոխած է լիրկ տի : Այդպէս են և միւս ձայները, որ այսօր ըստեղծում են բարբառական տարբերութիւններ : Բարբառներ եղած են եւ նախագրական երջանում եւ ապրած են ուրոյն կեանքով . ինչպէս մեր այսօրուան բարբառները : Նրանցից մէկը գրի առնուած է Եղարում, միւսները մնացած են անգիր : բայց աւելի կամ նուազ չափով ազդած են գրաբար լեզուի վրայ : Հեղինակ ու թարգմանիչ, գըրիչ և տուն տուող սովորած են գրաբար լեզուն, բայց չեն մոռացած մայրենի բարբառը և լսելով օրինակ՝ ընտանի գրած են՝ ընդանի կամ հակառակը :» («Բանասէրի Յութագիրը», պրակ 7, 1937, էջ 59—60):

«Մերողական ցուցում . միեւնոյն բառի միեւնոյն հոլովոյթի տարատեսակ կերպարանքները ապացոյց են հին և տարբեր բարբառների գոյութեան : Աւանդուած ձեւերի հիման վրայ կարելի է վերականգնել հոլովական շղթայի պակսած օղակները և նրանց օգնութեամբ ուրուագծել նախագրական հայերէնի ձեւաբանական կազմը :» (Նոյն տեղը, պրակ ԺԹ, 1940, էջ 119 . նախորդ էջերուն մէջ կը ցուցնէ մատնանշած կերպարանքներէն օրինակներ):

Իր վերջին աշխատանքին «Հայոց լեզուն» խորագրուած գլխուն մէջ («Պատմութիւն Հայոց Գրականութեան . Ներածութիւն», էջ 108-155

ի պաշտօնէ կը պարզէ երկու Դպրոցներուն տեսութիւնները մեր հոս շօշափած բոլոր խնդիրներու մասին։ Հնդեւրոպական լեզուաբանութեան սիստեմը ամուր կը նկատէ։ սակայն կը յաւելու թէ մեկնուած է մեր լեզուի հնդեւրոպական տարրը, բայց ոչ մեր լեզուն բովանդակ և իր ծագումով և իր ներքին կազմութեամբ։ Մառի տեսութեան մէջ, ձայնաբանական կառուցումէն աւելի, մարդախումբերու կենցաղի և մշակոյթի նկատառման վրայ շեշտը դնելով, բառերու իմաստաբանական զարդացման և փոխառութեանց մասին ապադային կատարուելիք նոր կառուցումներ կը յուսայ, եթէ մանաւանդ յարեթական լեզուներու մի յատուկ ամրիոն գոյութիւն ունենայ Հայաստանի համալսարանին մէջ։

Կը գոհանամ այս սեղմ ամփոփումով, յուսալով որ Աղբալեանի վերջին աշխատանքը կոկիկ հատորի վերածուած շատերու կողմէ կը կարդացուի։ Հոն ընթերցողը պիտի նշմարէ ի մէջ այլոց թէ Աճառեանի ցուցակագրած՝ իրաներէնէ փոխառեալ 1400 հայ արմատ բառերու հիման վրայ, ինչ տպաւորիչ կերպով, Աղբալեան կը պատկերացնէ Պարսկաստանի ազդեցութիւնը Հայաստանի վրայ։ Ահաւասիկ եղրակացութիւնը։

«Ես նկատի ունեցայ այն փոխառութեանց մէկ մասը, որ կատարուած էին նախ քան մեր գրերի գիւտը և որ ուրեմն կային այն լեզուի մէջ, որով մերոնք գրականութիւն ստեղծեցին։ Այս փոխառութեանց նայելով կարելի է տեսնել թէ ո՞րքան խոր ու լայն եղած է իրանի ազդեցութիւնը մեր կեանքի վրայ։ Այդ փոխառութեանց քանակը երկու անգամ աւելի է քան մեր բնիկ բառերը և վերաբերում է կենսական այնպիսի երեսոյթների, որ չունէր և ունենալ չէր կարող հովիւ հայը։ Աննախապաշտ մտքի համար պարզ է կարծում եմ, որ մենք քաղաքակիրթ ազգերու շարքն անցած ենք իրանական մըշակոյթի իւրացումով և պարսիկ ու պահլաւ գերիշխանութեան տակ։» (Նայն գիրքը, էջ 139)։

Տեղն էր հոս զետեղելու նոր ենթահատուած մը դասաւորելու և ամփոփելու համար Աղբալեանի բերած նպաստը հայ լեզուաբանական մարզին մէջ։ Անոնց թուումը կը յապաւենք Աղբալեանի մատենագիւտական ցանկին։

Գլուխ Բ. Հին ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ ՇՈՒՐԶ

Իր մահէն (15 օգոստոս 1947) քանի մը օր առաջ հրապարակ ելուծ Հայոց Դրականութեան Պատմութեան «Ներածութիւն» Անթախու-

բագիրը կրող հատորին յառաջաբանին մէջ (տպուած 1944ին), Աղքալեան մեզ կը հաղորդէ որ, երիտասարդութեան տարիքին, խիզախ մըտածումը ունեցած է գրելու Հայոց գրականութեան մի շաւած պատմութիւն։ Այս դիտաւորութեամբ կը լծուի գործի, այն կարծիքով թէ ամենք մի փոքրիկ «ածու» լինելով՝ մեր գրականութիւնն այնքան ընդարձակ չէ, որ ջանասէր մէկը չկարենայ ընդգրկել լայնքին ու երկայնքին։ Կը խոստովանի որ բնոյթին և կեանքին բերումով յարատեւ չէ եղած։ տարուած բաղմակողմանի հետաքրքրութեամբը, քաղաքացիական ըմբռնումովը և զգայուն բնաւորութեամբը չէ կարողացած սահմանափակուիլ։ Իր ծրագրին հրաժեշտ տուած էր, երբ Համազգային Ընկերութեան Պէյրութի մասնաճիւղը գինքը կը հրաւիրէ, չըսենք կ'ըստիպէ բարեկամաբար, դասախոսութիւններ տալու Հայոց Գրականութեան Պատմութեան վրայ, որոնք օրը օրին լոյս տեսան սեւագրութեան ձեւով գլխաւորաբար Պէյրութի Ալղդաբարա շորաթաթերթին մէջ։ Յետագային ԱԱկօսա պարբերագրքի հետապընդումին պատասխանելով, Աղքալեան ինք իր ձեռքովը վերամշակեց նոյն նիւթերուն առաջին շարքը, որ մաս առ մաս տպուելէ վերջ սոյն պարբերագրքին մէջ 1944 էն 1947 տարիներու ընթացքին, վերջին տարւոյս օգոստոս ամսուն հրապարակ ելաւ՝ հատորի վերածուած ԱՊամութիւն Հայոց Գրականութեան։ Ներածութիւնը խորագրով։ 210 խիտ էջերէ բաղկացած աղուոր գիրք մըն է ան։

Եթէ այս հատորին կցենք դասախոսութեանց մնացեալ շարքը, հայագիտական քանի մը զեկուցումները՝ կարդացուած Սէն Ժոզէֆ Համալսարանի Հայագիտութեան ամբիոնին կողմէ գրողիս կազմակերպած ասուլիսներու պահերուն, նոյնպէս քանի մը գրախոսականներ նման նիւթերու շուրջ, կ'ունենանք իրր Աղքալեանի գրչէն ելած՝ տեսակ մը Հայ նին դպրութեան պատմութիւն, իր ծագումէն մինչեւ Ժրդ դար, երեք բաժինով։ 1. Ներածական, 2. Մատենագրական, 3. Գրախոսական։

Այս ամենը դասաւորուած, զիրենք այժմ պարունակող տեղերովն ու բովանդակութեանց նիւթերովը կը հաղորդեմ Աղքալեանի մատենագիտութեան ցանկին մէջ։ Սակայն կը հրաժարիմ իմ նախնական ծրագիրէս, որ էր ներկայացնել հոս անոնց վերլուծումը լայն մէջընթերումներով և մանաւանդ բնորոշել Աղքալեանի հին հայ դպրութեան նուիրած ուսումնասիրութեան տեղը նոյն նիւթին շուրջ տարգ լոյս տեսած աշխատանքներու շարքին մէջ։ Գլխաւոր պատճառը սա է որ, շատ յապաղած ըլլալով մեր հանգուցեալին լեզուաբանական գրութեանց վրայ, որոնք քիչ ծանօթ էին մտաւորական լայն խաւերու և եւրոպացի գիտնականներուն ձեռքը չէին հասած բնաւ, ինձ յատկացուած էջերը շատոնց արդէն լեցուած են։ Կը միսիթարուիմ նկա-

տեղով որ Աղբալեանի վաստակին այս կտրուածը աւելի ծանօթ է և աւելի մատչելի չնորհիւ Պէյրութի պարբերական մամուլին և վերջին հատորին արտատպութեան:

Գլխաւոր դիտողութիւնս այժմ շօշափածս գրութեանց վրայ այս է որ անոնց մէջ աւելի զգալի է հմտութեան, մատենադիտական փընտըռտուքներու պակասը և ինքնատիպ տեսակէտները նուազ բազմաթիւ են, թէպէտ միշտ կը մնան ինքնատիպ՝ ինչպէս Աղբալեանի բոլոր արտադրութիւնները՝ իրենց յօրինուածքովը, ոճովը։ Անոր պատրաստած ճաշերը — մտաւորական — միշտ հաճոյ են՝ առնուազն իրենց ներկայանալու կերպովը՝ *présentation*-ովը պիտի ըսէի մտերմութեան մէջ։

Ուստի պիտի գոհանամ քանի մը մատնանշումներով։

1. ՆԵՐԱԾԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Այս բաժինին կը վերաբերի ռներածութիւնն հատորին մեծագոյն մասը։ Այս հատորին երեք առաջին գլուխները՝ Գրականութեան մասին ընդհանրապէս (գլ. Ա.), Գրական պատմութիւն և Գրականութեան պատմութիւն (գլ. Բ. և Գ.)՝ էջ 6-66, երկար թուեցան ինձ համեմատութեամբ մնացեալ նիւթերու և նոյնիսկ ներածութեան մը մէջ շօշափուելիք հայ դպրութեան պատկանող ուրիշ կէտերու։ Անոնք գրուած են կարծես իրը նախամուտ մը համաշխարհային գրականութեանց պատմութեան։

Աղբալեան լաւ կը բացատրէ թէ ինչպէս բառը որ ներքին բովանդակութեամբ պակեր մը կը ներկայացնէ նախապէս, երկարատեւ կիրարկութեամբ կ'ըլլայ հետզհետէ ուրուազիծ, այսինքն՝ գաղափարաթառերը իրարու միացած կը կազմեն խօսք, ուր կրնայ տիրապետել պատկերը կամ գաղափարը։ Արտատպենք հիմա քանի մը տող Աղբալեանէն։

Ական մարդիկ, որոնց ողեկան կառոյցն այնպէս է, որ արտաքին և ներքին աշխարհն իրենց գիտակցութեան մէջ իբրեւ պատկեր է ձեւաւորւում։ Բնական է, որ երբ նրանք խօսում են իրենց ներքին աշխարհից՝ նրանք յօրինում են պատկերների մի շարք։ Դրանք բանասեղծ են ծնուած, կան ուրիշ տիպարի մարդիկ, որ իրենց ներքին վիճակները և արտաքին աշխարհը իբրեւ գաղափար են ըմբռնում և ձեւաւորում։ Բնական է, որ երբ նրանք խօսում են իրենց ողեկան փորձից՝ անպատկեր խօսքեր են յօրինում։ Մրանք գիտութեան են։ Սակայն այս երկու տիպարները չեն հանդիպում անխառն կազմութեամբ։

ամեն մարդ մի քիչ բանաստեղծ է և մասամբ գիտուն։ Մէկ կամ միւս կառոյցի գերակշռութիւնն է, որ բանաստեղծի տիպարը զատում է գիտունի տիպարից։ («Ներածութիւն», էջ 14)։ (Այս մասին տես նաեւ Աղբալեանի դիտողութիւնը՝ Դուրեան Պատրիարքի մէկ դրքին առիթով։

Յետոյ կը փնտոէ թէ ի՞նչ է գրականութիւնը, այսինքն առենալ լեզուով մը գրուած մտքի այն արտայայտութիւնը։ որ պէտք է տեղ գտնի գրականութեան պատմութեան մէջ և շեշտելէ յետոյ թէ պէտք է նկատի առնել նախ անոր ձեւը, այսինքն ոնք, այսինքն՝ յօրինուածքը («Ոճը մարդն է») և բովանդակութիւնը՝ որ պէտք է հանրային արմէք ունեցած ըլլայ կամ ունենայ, կը սահմանէ թէ գրական գործին յատկանիշն է հանրային բովանդակութիւն ձեւաւոր յօրինումով։ Այս կարգի գործերն միայն տեղ գտնելու են գրականութեան պատմութեան մէջ։

Հարց կու տայ այն ատեն թէ ո՞րը գերակշիռ դեռ ունենալու է՝ ձե՞ւը թէ բովանդակութիւնը, այսինքն արուեստը արուեստի^թ համար թէ կեանքի համար։ և շատ յաջող բանաձեւեր կը հաղորդէ զոր կը ռնանք ամփոփել մէկ տողով՝ արուեստական յօրինում կը պահանջուի հանրարժեք բովանդակութեամբ։

Երկար՝ քիչ մը մանուածապատ Բ. և Գ. գլուխներուն մէջ կը սահմանէ Գրական պատմութեան և Գրականութեան պատմութեան կալուածները։ Պարզուած մեթոտն ու տեսակէտը լաւ են գոնէ տեսականօրէն։ պիտի նախընտրէի միայն խորագրեր որ շփոթութեան տեղի չտային և ուղղակի յոյտնէին ընդգծուած զանազանութիւնը, օրինակի համար՝ պատմութիւն Մատենագրութեան և Գրականութեան, կամ Գրովներու և Գրական շարժումներու։

Դ. գլուխը (էջ 67—107) կը պատկերացնէ «Հայոց ազգն ու աշխարհ», ուր երեւան կու գան հայրենասիրական խոր սէր՝ ի տես Հայաստանի լեռներուն ու ձորերուն, և ազգային արժանապատռութեան գիտակցութիւն՝ նկատելով որ հայը, վէս ու անձնապատան, յաճախ ըմբռոտ և անհնազանդ, նոյնն է մեացած հնագոյն դարերէն մինչեւ մեր օրերը։

Ե. գլուխին նիւթը՝ «Հայոց լեզուն» (էջ 108—155), որ արդէն ուսումնասիրուեցաւ մնը նախորդ հատուածին մէջ, կը վաւերացնէ
Ե. գլուխին եղբակացութիւնները։

Վերջին՝ Զ. գլուխը՝ «Գիրք եւ Գրիշ» (էջ 156—210), յիշատակարաններէ քաղուած շահեկան մէջքերումներով լաւ ծանօթութիւն կը հաղորդէ Հայոց գրչութեան արուեստի մասին։ Ամբողջ գլուխը մեկնութիւնն ու ապացոյցն է Փարագեցւոյ սա հաւաստումին թէ «Բազմացան

գրիչներուն դասերը՝ մէկը միւսին զերազանցելով : . . Պայծառացան եկեղեցիները, շքեղացան սուրբերու վկայարանները, միշտ ծաղկելով անոնց մէջ ուխտը՝ (գրչագիր) կտակարաններու ընծայ բերուելով . . . ։ Բայց աւաղ ոչ մի աղբիւր, եթէ ոչ հազուադէպօրէն մի քանի գըրչագրի թիւը, առանց յիշատակելու այդ թիւը կամ յիշատակարանները իրեն ծանօթացնող տպագիր ցուցակները։ Հ. Ա. Վարդանեան այս շահեկան նիւթին ուրուագիծը տուած էր Հանդիս Ամսօրեալի մէջ 1924ին (տես արտատպումը՝ Ազգ. Մատ. թիւ ՃԵ.), գիտական տարազով։ Աղբալեան ուզած է առաջներու հրամցնել նոյն նիւթը՝ ճոխացած, բայց ժողովրդականացած հանգամանքով։

Եթէ ընդունինք Աղբալեանի հետ թէ «գրականութիւնը գրի առնուած բանահիւսութիւն է . . . ։ լաւագոյն է տակաւին այս Շներածական բաժնին կցել Աղբալեանի բանախօսութիւնը նուիրուած նախագրական շրջանի «Բանաւոր ստեղծագործութեան» Հայոց. (տե՛ս Ազգաւոր, թիւ 11 և 12)։

2. ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՄԵՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Աղբալեանի մենագրական դասախօսութեանց նիւթ հայթայթած են կարգով հետեւեալ խորագրերը։ 1. Մրբախօսական գրականութիւն։ — 2. Ազարանգիղոս։ — 3. Փաւստոս։ — 4. Հայ գրերու գիւտք։ — 5. Ոսկեդարեան բարգմանական գրականութիւնը։ — 6. Կորիւն։ — 7. Եզնիկ։ — 8. Մ. Խորենացի։ — 9. Կանոնական գրականութիւն։ — 10. Ղազար Գարպեցի։ — 11. Յունաբան Դպրոցը։ — 12. Եղիշե։ — 13. Զենոբ Գլակ։ — 14. Յովհան Մամիկոնեան։ — 15. Շարականներ։ — 16. Յովհան Մայրագոմեցի։ — 17. Սեբեոս։ — 18 Մովսէս Կաղանկատուացի։ — 19. Գրիգոր Նարեկացի եւ Կորիւն. (աղերսը առաջինին հանդէպ երկրորդին)։

Այս ուսումնասիրութիւններէն քանի մը հատը տկար են ի հարկէ. լաւագոյն են անոնք որոնց համար Աղբալեան ունեցած է իր ձեռքին տակ նախորդ հետազօտողներուն քննական աշխատանքները։ Մասնաւոր յիշատակութիւն կը պարտինք Մովսէս Խորենացւոյ նուիրուած ուսումնասիրութեան։ Եթէ մեր բանասէրը կը դժկամակէր խորենացին փոխադրելու Ե. դարէն ասդին, համոզիչ չգտնելով այլ կերպ խորհողներուն ապացոյցները, ինք իր կարգին համոզիչ ապացոյցը տըւաւ։ Հայտգիտական Ասուլիսի մը պահուն, անկախարար ուրիշ բանասէրներէ որոնց գործը այդ Ասուլիսի ատեն իրեն մատնանշուեցաւ. թէ Մովսէս Խորենացւոյ պատմութիւնը կինդանի գրաւոր գրոյց մըն է երկու անձերու միջեւ. որոնցմէ մէկը ինքն է՝ ծերունի նիւանդկախ

պատմագիրը, միւսն՝ իր երիտասարդ մեկենասը՝ Սահակ Բագրատունին.

Ահաւասիկ Աղբալեանի տեսութեան ամփոփումը՝ իր զրչով կատարուած.

«Իսկապէս դա պատմութիւն չէ, այլ պատմական նիւթերին հըմուտ մի մարդու թղթակցութիւն է մի հարցասէր իշխանի հետ, որունի պատմական հետաքրքրութիւն։ Այս հանգամանքը մի անթառամ կենգանութիւն է հաղորդում գործին. ոչ թէ գրքի, այլ երկու բարձր իմացականութեան տէր մարդոց գրաւոր զրոյցին է, որ ունկնդրում ենք, ուր թէեւ խօսողներից մէկն է, միայն, որին լուսմ ենք, բայց երկրորդի ներկայութիւնը միշտ զգում ենք պատմահօր խօսքերի միջից և գիտենք թէ ինչ են նրա խնդրածները, հրահանգածն ու իմանալ ուզածը։ Նա ոչ միայն պատմահօր գրքի սահմաններն է ուրոշում, այլ և թէ ինչ չափով ու ոճով պէտք է գրել։ Այս թղթակցութիւնը անշուշտ Սահակ Բագրատունին պահում էր իր դիւանում և յաճախ կարդում էր . . . Նկատելի է սակայն, որ խորենացին ձգտում է իր նամակները շարայարեալ պատմութիւն դարձնել. թէեւ միշտ ստիպուած է այս կամ այն բացատրութիւնը տալ իշխանին և Պատմութեան գլուխները-դարձնել անձնական նամակ և գրաւոր զրոյց։» («Ակոս» Ժ. էջ 103)

Կրկին պատմաբաններու և գրասէրներու մասնաւոր ուշադրութեանը կը յանձնարարենք Աղբալեանի յօդուածը՝ «Ա. դարու գրական ըմբռնումը» Հայոց. որ զուգահեռն է Հայոց լեզուի շեշտադրութեան առիթով ըստ ինչպէս ինչ Հայոց ազգին ու աշխարհին նուիրաւած զլուխին եղբակացութեան, թէ այսինքն.

«Այսօր հայը նոյն ծաղկեցնող և չափախոյս միտքն է, ինչ որ կորիւն կամ Փաւստոս։ Հին դարերում թէեւ օտար ու եկամուտ՝ այդ ոճն արդէն աղգայնացած է. . . «Մեր զգայնաչափը շատ է նրբագաց, ամենանուրը ջերմաչափի պէս է, մեր նեարդերը շատ են առածիդ. շիւղը մեր հօգում դառնում է գերան. աննշան յաջողութիւնը մեզ հանում է մինչեւ երկինք և անյաջողութիւնը անդունդ է տանում։ Մեր երեւակայութիւնը իր իսկական չափերով տեսնելու կարողութիւնը մեզ պակասում է։ Դիտական ոգու երկարատեւ մարզանք պէտք է հային խելքի բերելու համար։ Մենք հարազատ զաւակն ենք մեր դասական պապերի։»

«Մաշթոց մեր վարդապետն է և Փաւստոս ու Կորիւն մեր դասըն. կերը։» (Հայեննիք Ամս. 1938 փետր. էջ 112):

Այս երկրորդ գլուխուն մանրամասնութեանց համար, տե՛ս մեր պատրաստած՝ Աղբալեանի մատենագրական ցանկը։

3. ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ

Հին հայ գպրութեան նիւթեր շօշափող գրքերու շուրջ Աղբալեան տուած է 1913-1914ի շրջանին և յետագային քանի մը գրախօսականներ։ Ստուար թիւ մը չենաներկայացներ անոնք, բայց քննադատական առողջ մտքով գրուած են և կարգ մը շահեկան կէտեր կը շեշտեն, որոնց կարեւորները կը հաղորդենք մեր ցանկին մէջ։

Գլուխ գ. ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ

Թերեւս քանի մը ընթերցողներ զարմացան, երբ նշմարեցին որ ուսումնասիրութեանս սկզբնաւորութեան, Աղբալեանի Բանասիրական վաստակին թուարկութեան մէջ զետեղեցի անոր՝ Սայաթ-Նովային նրւիրուած՝ գրութիւնները։ Պատճառը պարզ է. այս նիւթը — Աղբալեանի նախասիրած աշխատանքը — ամենէն աւելի կ'ապացուցանէ անոր բննադատ բանասէրի տաղանդը իր բոլոր երանգներով։ Հոն կը ցոլան անոր կրած՝ տղու և երիտասարդական տարիքին՝ ընտանեկան և թաղային միջավայրին տպաւորութիւնները, երգող՝ պարող՝ քէյֆ սիրող ընկեր աշուղի հոգերանութիւնը և խոհուն գեղարուեստատէրի նկարագիրը։ Այդ նիւթին նուիրուած ուսումնասիրութիւնները կը ժիշեցնեն մեզ Աղբալեանի կեանքին այն շրջանը, ուր կազմուած՝ հասունցած մտքով ու պաշարով սկսած էր ըլլալ հեղինակութիւն և գուրգուրանք վայելող գրչի և խօսքի մարդը։ Թիֆլիզի գրադէտ և գեղարուեստատէր ջերմ մթնոլորտին մէջ, ընդ հովանեաւ ռամենայն հայոց բանասեղծաբնին՝ Յովհաննէս Թումանեանի։

Վերջին տարիներս Երեւանի մէջ լոյս տեսած՝ մեծ Աշուղին վերաբերող գրքերէն մին կը պարունակէ Յ. Թումանեանի բոլոր յօդուածները, ճառերը և ելոյթները Սայաթ-Նովայի մասին՝ գրուած և արտասանուած 1912-1917 թուականներուն։ Կազմողը՝ Ն. Թ. (Նուարդ Թումանեան՝ դուստրը բանաստեղծին) կը գրէ։

«Սայաթ-Նովան Թումանեանի կեանքում գրաւում է բացառիկ տեղ։ Մեծ է Թումանեանի սէրը և հիացմունքը դէպի ԺԷ դարի մեծ աշուղը և քնարական բանաստեղծը։ Թումանեանն անսահման սիրում էր «Երգի ու երաժշտութեան թագաւոր», «Վէրքով ու սրով» գնացած Սայաթ-Նովային։ Սիրում էր կրքոտ ու խորը սիրով — ու գեւորուում ու ոգեշնչուում նրա երգերով։

«Թումանեան իր յօդուածներում ու ելոյթներում Սայաթ-Նովային որակում է որպէս արեւելքի մեծ բանաստեղծի, որպէս համակովակասեան մեծ երգչի, որպէս դժբաղդ սիրոյ բանաստեղծի։

«Թումանեանի բոլոր ասոյթները Սայաթ-Նովայի մասին պարուրուած են հարազատի ջերմ սիրոյ ածականներով ու բացականչութիւններով՝ մեր հոյակապ Սայաթ-Նովան, մեր վիթխարի, մեր արքայական Սայաթ-Նովան կամ ուղղակի ասում է՝ իմ սիրած Սայաթ Նովան . . .» (Յովհ. Թումանեան՝ «Սայաթ-Նովա», կազմեց Ն. Վ., Երևան, 1945, էջ 65)։

Յովհիաննէս Թումանեանի տեղ գրենք Նիկոլ Աղբալեան, եւ այս ամբողջ դատումը կը մնայ նոյնքան իրական։

* * *

Գէորգ Ախվերդեան Սայաթ-Նովայի ձեռագիր գդավթարաը վերածած էր տպագրի 1852 թուականին և ծանօթացուցած էր հայ հասարակութեան իր ազգէն ծնած մեծ Աշուղը։ Բայց ժամանակը մոռցնել կու տար զայն, երբ Թիֆլիզի մտաւորականութիւնը նախ ավերնաւտանց մէջ 1900 թուականներուն՝ և յետոյ՝ 1912—1914 թուականներուն՝ Հայ Գրողներու Կովկասեան Ընկերութեան շրջանակին մէջ վերաբարթեց հայ Աշուղին աննման տաղերուն յարգն ու համբաւը, յօդուածներով, գրական և երաժշտական երեկոյթներով, որոնց գազաթնակէտը եղան Աշուղ Հազիրի գլխաւորութեամբ Թիֆլիզի բոլոր ծանօթ աշուղներուն և սազանդարներուն իրագործած աշուղական շքեղ հանդէսները և ի վերջոյ՝ Թիֆլիզի Կաթուղիկէ Ս. Գէորգ անուն (Մէյտանի) եկեցնցւոյ բակին մէջ կառուցուած՝ Սայաթ-Նովայի մահարձանին հանդիսաւոր բացումը 1914ի Մայիս 15ին։ Այդ եկեղեցւոյ սեղսնին առջեւ է որ նահատակուած էր Սայաթ-Նովան աղօթքը բերնին։

Այս բոլորը ոգնեւորող գլխաւորներուն՝ Յովհաննէս Թումանեանի և Գէորգ Բաշինջաղեանցի մօտ ներկայ է գործօն Նիկոլ Աղբալեանը։ Քիչ առաջ յիշած գրքիս մէջ, հեղինակը կը գրէ. «Հայ Գրողների Ընկերութեան առաջին գրական երեկոյթը նուիրուած Սայաթ-Նովային կայացել է 1913 թուի մարտի 14ին Թիֆլիզի Բարեգործական Ընկերութեան դահլիճում, ուր մի ընդարձակ բանախօսութիւն է արւում Սայաթ-Նովայի մասին հասարակութեան լայն խաւերին ծանօթացնելու Սայաթ-Նովայի ստեղծագործութիւնը։» (Էջ 66)։ Օրուան Հորիզոնց թերթէն կ'օդտուի Ն. Վ. հաղորդելու համար այս շահեկան տեղեկութիւնը, յապաւելով մի կարեւոր կէտ բանախօսին անու-

նր, որ է Նիկոլ Աղբալեան. այդ առիթով՝ միայն խօսք առած են ինք Յովհաննէս Թումանեան, Լէօ, Դերենիկ Դեմիքնեան, Տիգրան Յովհաննէսեան և ուրիշներ:

Վստահ եմ որ Սայաթ-Նովայի մահարձանին բացման շքեղ հանդէսը Աղբալեանի կեանքին սիրով զեղուն օրերէն մին եղած է: Հայ Գրողներու Ընկերութիւնը կոչ ըրած էր թերթերու միջոցով որ հանդիսականները այդ օրը կրեն օրուան խորհրդանիշը՝ Սայաթ-Նովայի սիրած կարմիր վարդը: Այդ կոչը կարդալուն պէս, վարդի սիրահար՝ բժշկապետ Վ. Նաւասարդեան իր պարտէզէն, այդ՝ վարդի ամիս, Մայիսի օցուան համար, կ'առաջարկէր Յ. Թումաննեանին ուղղուած նամակով Ֆը, իրր նուէր իր սրտին ամենամօտ ընծան, ծաղիկներու թագուհին՝ հարիւր եւ մեկ տեսակի հազար հատ կարմիր վարդ՝ զարդարելու համար, վարդի երգիչ, Սայաթ-Նովային յուշարձանը:

Մայիս 15-ին առաւօտուն Հայ Գրողներու Ընկերութեան վարչութեան գրասեննեակին առջեւ գտնուող հրապարակը լեցուն էր երկսեռ խոռոշ բազմութեամբ, որ ժամը 11ին կ'ուղղուի դէպի Ս. Գէորգ եկեղեցին: Թափարը կը բանային ռէսնաֆանները իրենց դրօշակներով, առաջնարդութեամբ զուռնա-դհոքի, յետոյ կուգային զանազան ընկերութեանց և հիմնարկութեանց ներկայացուցիչները, ապա երկսեռ բազմութիւնը: Եւ ամենուն կուրծքին վրայ՝ կարմիր վարդ: Տուները պատշգամները, պատուհանները լեցուն էին դիտողներով: Փողոցի անկիաններէ դիմաւորելու կ'ելլէին բարձր դասարաններու դպրոցականներ՝ իրենց հոգաբարձուներով; տեսուչներով, ուսուցիչներով: Եւ տղոց երգերուն կը պատասխանէին ժողովուրդին ուռուանները: Ս. Գէորգ եկեղեցւոյ դրան առջեւ, նոյնանուն դպրոցին կողմէ պաշտօնական հիւրընկալութեան և շնորհաւորութեան ուղերձէն յետոյ, ներս կը մտնէ թափօրը, մինչ աշուզները թիֆլիզեցւոց հին տարազով կանգնած պատրաստ կը թնդացնեն օդը իրենց երգ ու նուագով: բայց արդէն պատ, պատշգամ, ամեն տեղ լի էր բազմութեամբ, և ոստիկանութիւնը հազիւ կարգ էր կարգը պահելու:

Ժամը 12¹/₂ ին պատարագը առարտած էր եկեղեցւոյ մէջ և կը կատարուի բացումը մահարձանին, զետեղումը դափնեայ պսակին, ճառեր և այլն և այլն: Ի՞նչ ոգեւորութիւն, և մանաւանդ ի՞նչ համերաշխ գործունէութիւն՝ առանց հատուածական և յարանուանական խըտրութեան: Զհաւատալս կուգայ այդպիսի պատմական իրականութեան, աչքիս առջեւ ունենալով մեր ազգին ներկայիս ցուցադրած կացութիւնը:

Քմբունելու համար թէ ի՞նչ կ'անցնէր կը դառնար Աղբալեանի հոգւոյն մէջ երբ իր վերջին տարիներուն կը ճառէր Սայաթ-Նովայի մասին և թէ որքան ակին մօտ աղբիւրէ ըմպած էր ան մեծ Աշուղին

խորաթափանց իմացութիւնը, աւելի ետ երթանք՝ Աղբալեանի մանկութեանն ու պատանեկութեանը։ Սայաթ-Նովային պէս Թիֆլիզեցի էր ան և անոր պէս բանուոր դաստկարգէն՝ հնամենի բարեպաշտ ընտանիքի մը զաւուկը։ թեպետ իր տանը մէջ Արարտանեան բարբառը կը խօսուէր, բայց պղտիկուց՝ ազգականներու միջավայրին մէջ վարժըւած էր Հաւլաբար թաղին մէջ ուրիշներու գործածած Թիֆլիզի հայ բարբառին՝ այսինքն Սայաթ-Նովայի լեզւոյն։ Տեսած էր նոյն փողոցները, նոյն եկեղեցիները։ լսած էր Աշուղին պէս ջուլհակ՝ արհեստուորներուն երգերն ու սազերը։ Դիտած էր նոյն կատարները, կուրգետին ոլորտներն ու կամուրջները։ Ինքն ալ ճաշակած էր՝ Աշուղին նման՝ կուր գետին ձռւկը, կախէթի գինին, Վրաստանի համով հացը, թուշի պանիրը, կանաչն ու խորովածը։ Ան՝ Սայաթ-Նովային պէս ապրած էր Թիֆլիզի ուրախ զուարթ հայ-վրացի բարեկամ միջավայրի մէջ և օժտուած էր համապատասխան նկարագրով։

Կարծես նախախնամօրէն պատրաստուած էր Աղբալեան ըլլու համար՝ բանաստեղծ հայ Աշուղին բանիմաց մեկնիչը։

* * *

Այս թափառումս զիս չեռացուց իմ նիւթէս։ իրօք Աղբալեան մօտեցաւ մեծ Աշուղին ո՛չ միայն իբր թաղեցի գաղափարակից, հապա նաեւ իբր բննադատ բանասէր։ Ըրաւ Սայաթ-Նովայի տաղերուն համար ինչ որ կ'ընեն իրենց նիւթին խորը թափանցող բանասէրները՝ ուսումնասիրեց անոր բնագիրը, սրբագրեց հրատարակիչին անյաջող ուղղագրութիւնները։ տրանումները՝ արդիւնք սխալ ըմբռանումի, ճշդիւ բացատրեց անոր բառերն ու նախադասութիւնները՝ որոնց համաբարբառն ու բառարանը կազմած է ան։ Մանաւանդ կարծես շօշափելի դարձուցած է այդ բոլորին մէջէն Սայաթ-Նովային և ժամանակին հոգին։ Մեկ խօսքով Ն. Աղբալեան հմուտ, խորաբափանց եւ համեղաբան մեկնիշն է հայ անզուգական բանասեղծ աւուղ Սալար-Նովային։

Զարմանքով և ցաւով նկատեցինք որ Խորհրդային Հայատանի մէջ՝ մեր Աշուղին նուիրուած ուսումնասիրութեանց և հաւաքածաներուն մէջ չէ յիշուած, նոյն իսկ դիտումնաւոր կերպով յապաւուած է Աղբալեանի անունը։

Մեր բանասէրին բերած ճռխ նպաստի մասին, ընթերցողէն կը խնդրինք դիմել յետագայ մատենագրական ցանկին։

* * *

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Ի Ւ Ն

Շատ կարճ պիտի ըլլայ եզրակացութիւնս, որպէսզի չըլլայ չափազանց երկար։ Հանգուցեալ մեծ մտաւորականին բանասիրական վաստակը վերլուծեցի, համադրեցի, քննադատեցի պատճառաբանելով, փաստացիօրէն, բայց միշտ համակիր, անկեղծ ու անաչառ ռորչափ էր կարս իմ։ և որքան որ կը ներէին յօդուածի մը սահմանները, միշտ աչքի առջեւ ունենալով իր սկզբունքը՝ Եղիշէ Զարենցի առիթով բանաձեւուած ռէիացումս պէտք չէ հասնի կուրացման։ կայ մի աւելի բարձր ու մեծարծեք բան բան նիացումը։— գրականութեան եւ հանրային տահի։ Բայց իրեն հետ պիտի յարեմ։ «Ինձ քւում է որ Տեսութիւններս հումոզական են։ Նրանք կարող են հաստատուիլ, լրացուիլ կամ մերժուիլ։ Դրանից ես չեմ տուժի, իսկ նեմարտութիւնը կը տանի։»

Թող բարեկամիս հոգին ընդունի ներկայ համեստ ձեռնարկը իբր յիշատակ մը անթառամ։



F. Մամ

ՆԻԿՈԼ ԱՂԲԱԼԵԱՆԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

(BIBLIOGRAPHIE)

Աղբալեանի բազմազան գրութեանց ստուար մեծամասնութիւնը ցրուած կը մնայ օրաթերթերու կամ պարբերականներու կոյտին մէջ թաղուած և մասամբ անմատչելի: Մեր հանգուցեալ մտաւորականը գրութիւններ տուած է մինչեւ Ռուսիոյ համայնավարական յեղափոխութիւնը՝ կովկասեան «Ալիք», «Յառաջ» և ապա «Հորիզոն» օրաթերթերուն, և երկու մեծ պատերազմներու միջանկեալ շրջանին՝ արտասահմանի մէջ՝ «Ազգակ», «Յուսաբեր» և «Յառաջ» օրաթերթերուն: Չունենալով ձեռքի տակ օրաթերթերու լիակատար հաւաքածոներ, Աղբալեանի գրութեանց այդ մասը մեր ցանկին մէջ չենք առած: Կը միսիթարուինք յիշելով մեր բարեկամին մէկ գաղափարը զոր կ'արտայայտէր ըսելով թէ օրաթերթեր. նոյնիսկ մեր մօտ լոյս տեսնող կարդ մը պարբերաթերթեր. օրը օրին կարդացուելիք բաներ են.— գիտակից ենք թէպէտ այն աղդային իրականութեան թէ հայ մատենագրութեան վերաբերող բազմաթիւ տեղեկութիւններ և գիւտերնոյնիսկ գեղարուեսատական գրութեաններ օրաթերթերու մէջ միայն լոյս տեսած են և յետադային աւելի գիւրութեամբ մատչելի պայմաններու չեն արժանացած:

Կովկասեան թէ արտասահմաննեան պարբերաթերթերու բերած է Աղբալեան իր մասնակցութիւնը, և Թիֆլիզի մէջ 1913 և 1914 տարիներուն վարած է խմբագրութիւնը «Նոր-Հոսանք» ամսագիրին: Աղբալեանի այս կարդի գրութիւնները փնտուած ենք ըստ կարելւոյն. մանաւանդ այս ամսագիրին և արտասահմաննեան բոլոր հանդէսներուն և շաբաթաթերթերուն մէջ լոյս ընծայած յօդուածները ցուցակագրած ենք ամբողջովին:

Գալով իր գրութեանց սեռին, «Նոր Հոսանք»ի մէջ (1913, էջ 436) գրտխօսականի մը առիթով ըսածէն կը հետեւցնեմ որ Աղբալեանի բանասիրական՝ մտանաւորաբար լեղուաբանական գրութիւնները այդ թուականէն ասդին սկսած են, նոյնիսկ աւելի ուշ ինչպէս երեւան պիտի կայ մեր ցանկէն: Այդ թուականէն առաջ Աղբալեան տուած է

գրախօսականներ, և կամ գրքերու առիթով քանի մը գրական-քննագատական ուսումնասիրութիւններ, որոնք իր տաղանդին յատկանշական գիծը ցայտուն կերպով ապացուցին:

Այդ իր կեանքի առաջին շրջանին — Հայաստանի պետութեան խորհրդայնացումէն առաջ —, Աղբալեան ձեռնհասօրէն և ճշգրտօրէն բնորոշած է, արդի գրականութեան անդաստանին մէջ, բուն արժէքն ու տեղը լաւատուր Աբովեանի, Աւետիք Իսահակեանի, Յովհաննէս Թումանեանի, Վահան Տէրեանի և Եղիշէ Զարենցի. յանձին այս գըրողներուն՝ Աղբալեան մատնանշած է հայ արդի գրականութեան մէկ ինքնատիպ գիծը. կը միտէր նոյնիսկ տեղ մը տալու այդ շարքին մէջ Արմենուհի Տիգրանեանին (Մենուհի): Ան խորապէս ուսումնասիրած էր Լեւոն Շանթը, որ արդէն պարտադրած էր ինքինքը ամենուն ուշադրութեան, և կոահած էր ապագայ փայլը Դերենիկ Դեմիրճեանի և Ստեփիան Զօրեանի:

Կենացը երկրորդ շրջանին՝ արտասահմանի մէջ անցուցած 25 տարիներու ընթացքին (1921—1947), այդ սեռը մշակած է հազուադիպօրէն, միշտ բանախօսութիւններու առիթով. նոյն հեղինակներու մասին, սակայն աւելի հիմնաւորեալ դատումով: Մի քանի ուրիշ գրագէտներու հանդէպ ալ պատեհութիւն ունեցած է նոյն արժանաւոր դործը կատարելու. (տե՛ս անունները մեր ցանկին մէջ): Յիշատակենք միայն ժամանակի կարգով վերջին երեւան հանածը (1943 ին)՝ մատղաշագոյններէն՝ Ժագ Յակոբեանը, «որ — ըստ Աղբալեանի — մի նոր բողբոջ է մեր մշակոյթի բազմադարեան ծառի վրայ և ունի մեծարծէք կարողութիւններ այդ մշակոյթը գունազարդելու և նոր տարրերով հարստացնելու...»:

Այսքանը գոնէ ըսելու պարտաւոր էի, ընթերցողին ուշադրութիւնը հրաւիրելու համար ցանկիս այն շարքերուն վրայ, որոնց մասին լըռած եմ բոլորովին աշխատութեանս մէջ, ընտրած բաժինիս («բանտարական վաստակ») հետեւանքով: Տեղւոյ սղութեան պատճառով կը յապատեմ նուև դիտողութիւններս միւս գրախօսականներուն և բազմատեսակ նիւթերու շուրջ կարգացած բանախօսութեանց մասին:

ԳԼՈՒԽ Ա. — ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆՔ

I. ՀԱՅԱՅ ԼԵԶՈՒԻ ՇԵՇՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ինը յօդուած, «Դիտողութիւններ հայ լեզուի մասին» ընդհանուր խորագրով, «Հայրենիք Ամսագլուր»ի մէջ 1928ին և վերջինը՝ 1929ին: Ահա այդ ուսումնասիրութեան գլխակարգը.

Ա. Յառաջարան. — Բ. Հայոց լեզուի շեշտը (1928, Փետրուար, էջ 79): — Գ. Աճառեանի կտրծիքը Հայոց բարբառների շեշտադրութեան մասին (Մարտ, էջ 67). — Դ. Եղակի սեռական հոլովի կտրմութիւնը (Ապրիլ, էջ 144). — Ե. Նորից շեշտի մասին (Յունիս, էջ 87). — Զ. Միջարկութիւններ և նրանց շեշտը (Սեպտեմբեր, էջ 138). — Թ. Չեւերի շեշտը (Հոկտեմբեր, էջ 145). — Ժ. Պարզ խօսքերի շեշտը. Տեսութիւն շեշտադրութեան (1929. Մարտ, էջ 157):

II. ԲԱՆԱՍԵՐԻ ՅՈՒԽԱԳԻՒՐԸ

Այս վերնագրով Աղբալեան հրատարակեց ի Պէյրութ (Տպարան «Յոյս» որ իրենն էր այն ատեն) Ա.Ի. պրակներ (1937—1942), որ կը կազմեն՝ Ա. հատոր (պրակ Ա.—ԺԲ), 228 էջ, և Բ. հատոր (պրակ ԺԳ-ԻԲ), անաւարտ, 175 էջ։ Զուտ լեզուաբանական խնդիրներ կը պարունակեն անոնք։ Ցուցնելու համար անոնց ճոխութիւնն ու մասնագիտական հանդամանքը, կ'արտատպեմ գլխացանկը։

Ա. հատոր. — Տեսութիւն ձոյլ բաղաձայների. Ց, Չ, Ճ, Ծ, Թ, Փ, Ւ, Ջ (էջ 1). — 2. Տեսութիւն լծորդութեան (էջ 53). — 3. Տեսութիւն ի և ՈՒ կազմութեանց (էջ 107). — 4. Տեսութիւն ԻԱՒ և ԻԱՀԻ կտրմութեանց (էջ 127). — 5. Տեսութիւն Խ և ՀԻ կազմութեանց (էջ 145). — 6. Տեսութիւն ԱԻԱ. կազմութեանց. ճանաչել—ծանօթ (էջ 155). — 7. Գործիական բուներ և ՆԻ սեռական (էջ 165). — 8. Ուղղում և լրացում (էջ 187). — 9. Օդն, տւագ, անաւագ, աւագանի, ա՛ւա, —ա՛ւ, —օ (էջ 189). — 10. Շառայլ և շառաւիզ (յ—ւ դ—ւ) էջ 194). — 11. Գործիական մակրայների տարբերակները (յ—ւ) (էջ 196). — 12. Յոյնի է օՏ վախճանները (յ—ւ) (էջ 201). — 13. Լուրջ — լուրջ (լ—լ) (էջ 203). — 14. Տեսութիւն համատարած թլուատութեան (էջ 205):

Բ. հատոր. — 1. Թէ, եթէ (էջ 1). — 2. Բուկ, բուծ, բուտ (կ—ու—ծ) (էջ 12). — 3. Գոմ (ո—իաւ) (էջ 17). — 4. Այտ (օ=աւ, ո=աօվ) (էջ 34). — 5. Pic, Petit ֆրանսերէն բառերուն համար, որոնց ձագումն անյայտէ ըստ լեզուաբաններու, Աղբալեան կ'առաջարկէ ստուգաբանութիւն մը՝ մերձեցումով հայ արմատներու (էջ 37). — 6. Յախ, Յաքի (կհ—ք էջ 49). — 7. Յերեկ-Յորեկ (ե—իաւ, ո—իաւ) (էջ 53). — 8. Շերտ, Շուտի (ե—ո) (էջ 73). — 23. Լծորդական կշիռներ (բ-պ-ֆ) (էջ 88). — 9. Միւնոյն հոլովի տարտառակ ձեւերը (կտրան, կտուրի, կտեր) (էջ 108). — 10. Հաւատարիմ, Ոխերիմ, Մտերիմ (էջ 120). — 11. Ժամանակ (էջ 124). — 12. Հոտաւէտ, Յեխոտ, Տանձուտ (էջ 130). — 13. Միեւնոյն բոռի տարբեր ձեւերը (լոյս-լուս) (էջ 140). — 14. Դէս ու Դէն (էջ 156). — 15. Ահաւասիկ (էջ 167):

«Մանրության խորագրին տակ՝ Ա. հատորին մէջ՝ 1. Ոսկերիչ (էջ 102). — 2. Զոջեխէթի-դժոխք (էջ 105). — 3. Հաց-մաց (էջ 119). — Բ. հատորին մէջ՝ Հոռոմել (էջ 70).

III. ԼԵԶՈՒԱԿԱՆՔ-ԲԱՌԱՔՆԱԿԱՆՔ

«Հանդես Ամսօշեայք մէջ»:

1. Խաչ բառի մասին (1926, էջ 265). — 2. Զեկոյց և Զրոյց, Օ'ք-մին և Ի'մքին (1926, էջ 397). — 3. Հարազատ (1927, էջ 406). — 4. Անսալ, Բիւր, Գանըմպել, Զոյգ և կենտ, Թօն և իր ընտանիքը (1928, էջ 69). — 5. Լայն, Զայն (1928, էջ 182). — 6. Իցեմ (1929, էջ 121). Ալլել-Անթիւ (էջ 251). Սպիտակ (էջ 552). — 7. Հնչաբանական դիտողութիւններ (1930, էջ 425, 578, 695. — 1931, էջ 352, 517. — 1932 էջ 293, 433):

IV. ՈՒՐԻՇ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ՏԵՍՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. — Բառեր. 1. Կողովոցք և յարակից բառեր (Հայրենիք Ամսագլ. 1927 Մարտ, էջ 56). — 2. Հանդերձ և Ամօթ (1928. Մայիս, էջ 127). — 3. Զիւն Զմեռն (1928, Դեկտեմբեր, էջ 134). — 4. Պաշտօն, պաշտել (Սին, 1927, էջ 126). — 5. Միսիթարել (1930, էջ 351). — 6. Անալի (Ազդարար, թիւ 19, 1943 Մարտ 6):

Բ. — Ճանաչ-ճանանչ. համարել-համբարել. Պոռւնք, պճեղ (պըճ-դակ), կճակ. Տոկան, տուկատ. (զեկուցում այս բառերու կրկնակ ձեւերուն ծագման և իմաստի տարբերացումը. (Այս բառերու կրկնակ ձեւերուն ծագման և իմաստի տարբերացման մասին զեկուցում կարգացուած Սէն Ժոզէֆ համալսարանի Հայագիտական Ասուլիսի մը պահուն 1948 Դեկտեմբեր 22ին. Ամփոփում «Մասիս» շաբաթաթերթի մէջ, Ա. տարի, թիւ 2, 1947 Յունուար 8. — Ամբողջական՝ «Ակոս» պարբերագրքի մէջ, գիրք ԺԶ, էջ 101):

Գ. — Հատ և հաց, ինչպէս և նունս և նունցել (հնձել) բառերուն նախնական նոյնութիւնը լեզուարանօրէն ապացուցանելէ յետոյ, դիտողութիւն թէ անոնց արդի իմաստաբանական զանազանութիւնը արդիւնք է մեր նախնաց տնտեսութեան սիստեմի փոփոխութեան (Բանասերի Յոււագիրը, հատոր Ա. էջ 14, 41):

Դ. — Նոյնպէս՝ հին բառի մը տարբեր ձեւերով մշակուած գոյութիւնը նոյն լեզուի մէջ կամ փոխանցումը ուրիշ լեզուի մը, տարբեր երանգներով (նոյն զիրքը, էջ 63, 68-86, 102):

Ե. — Տեսութիւն համատարած թլուատութեան, և այս առիթով՝ դիտողութիւն հնագոյն թափառական ցեղերու գաղթի ճամբաներու մասին (նոյն տեղը, էջ 205, 219):

Զ. — Միեւնոյն հոլովի տարատեսակ ձեւերուն կարեւորութիւնը, (նոյն գիրքը, հատոր Բ. էջ 108 ևայլն):

Է. — Լեզուական քանի մը երեւոյթներու առիթով, տարբերութիւնը Հայուն և Ծուսին. Հայը ժամանակը կը չափէ դէպքերու ընթացքով, իսկ Ծուսը՝ իր ընթացքի տեւումով. ինչ որ մեզ համար ռառաջ» է, Ծուսին համար այստօք, ևայլն: (Նոյն գիրքը, հատոր Բ. էջ 128):

Խանօթ. — Քանի մը հատ միայն յիշեցի հոս Աղբալեանի անցողակի կերպով մշակած տեսութիւններէն: Հայ լեզուի շեշտադրութեան նուիրած յօդուածարքին մէջ ևս, ինչպէս այլուր, Աղբալեան յայտնած է շահեկան տեսակէտներ, որոնց կարեւորագոյնները մտանանշեցի ուսումնասիրութեանս ընթացքին:

ԳԼՈՒԽ Բ. — ՀԱՅ ՀԻՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Պէյրութի մէջ աւանդած դասախոսութիւններն են որ կը կազմեն տեսակ մը հայ հին դպրութեան պատմութիւն սկիզբէն մինչեւ դար:

I. «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԴՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ. ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ»

Պէյրութ, 1947, 212 էջ, արտատպուած «Ակոսի հետեւեալ գըրքերէն՝ Ա.-Զ., Ժ.-ԺԴ., Ժէ-ԺԹ. 1944-1947: Հրատարակութիւն Համազգային Ընկերութեան. երկու էջ վրիպակէ զատ, ցանկ չունի. գլխակարգերն ես կը թուագրեմ:

Խօսք ընթերցողին (Յառաջաբան), էջ 3:

Ա. — Դրականութեան մասին ընդհանրապէս, էջ 6.

Բ. — Դրական պատմութիւն, էջ 34.

Գ. — Դրականութեան պատմութիւն, էջ 59.

Դ. — Հայոց Աղդն ու Աշխարհը, էջ 67.

Ե. — Հայոց Լեզուն, էջ 108.

Զ. — Գիրք և Գրիչ, էջ 156.

Վրիպակ, էջ 211-212.

Սանօթ. — Զանց կ'առնեմ մատնանշլելէ «Ազդարար» շաբաթա-
թերթի այն թիւերը, որոնց մէջ նախապէս լոյս տեսան վերոյիշեալ
գլուխները, ամփոփ սեւագրութեան ձեւով, իւրաքանչիւր դասախո-
սութենէ յետոյ։ Յառաջարանը կ'ըսկսի «Ազդարար»ի թիւ 5-ով, 21
Նոյ. 1942։ Այս հատորը կը պարունակէ ներածութիւնը միայն։ Աղ-
բալեանի մնացեալ դասախոսութիւնները լոյս տեսած են մասամբ «Ազ-
դակ» շաբաթօրեակին մէջ։ բայց կանոնաւոր կերպով և աւելի ըն-
դարձակ «Ազդարար»ի մէջ։ ուստի վերջինիս թեւերն է որ կը նշա-
նակեմ հետեւեալ հատուածին մէջ։

II. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ. ՄԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

(Սկիզբէն մինչեւ ժ. դար)

Ա. Նախագրական շրջան. Բանաւոր ստեղծագործութիւն. Ազդա-
րար, թիւ 11 և 12 (1943, Յուն. 9 և 16)։

Բ. Նախագրական շրջան. Սրբախոսական գրականութիւն. թ.
13 (Յուն. 23)։

Գ. Ագաթանգեղոս. թ. 14 (Յուն. 30)։

Դ. Փաւստոս Բիւզանդ. թ. 15 (Փետր. 6)

Ե. Հայ գրերու գիւտը. թ. 16 և 17 (Փետր. 13 և 20)։

Զ. Ոսկեդարու թարգմանական գրականութիւնը. թ. 18 և 19
(Փետր. 27, Մարտ 6)։

Է. Ոսկեդար. կորիւն և Եղնիկ. թ. 21 և 22 (Մարտ 20 և 27)։

Ը. Կանոնական գրականութիւն. թ. 59. (Դեկտ. 18)։

Թ. Ղազար Փարպեցի. թ. 60 և 61 (1943 Դեկտ. 25 և 1944
Յունիւար 1)։

Ժ. Ղազար Փարպեցի և Յունաբան Դպրոցը. թ. 63 (Յուն. 15)

ԺԱ. Յունաբան Դպրոցը. թ. 64 և 65 (Յուն. 22 և 29)։

ԺԲ. Եղիշ. թ. 67 և 68 (Փետր. 12 և 19)։

ԺԴ. Զենոբ Գլակ և Յովհան Մամիկոնեան. թ. 69 և 70 (Փետր.
26 և Մարտ 4)։

ԺԴ. Մովսէս Խորենացի. թ. 71-74 (Մարտ 11, 18, 25. Ապրիլ 1)։

ԺԵ. Շարականներ. թ. 76 78 (Ապրիլ 15, 22, 29)։

ԺԶ. Յովհան Մայրագոմեցի. թ. 79 և 80 (Մայիս 6 և 13)։

ԺԷ. Սեբէոս. թ. 113-116 (1945 Դեկտ. 30 և 1945 Յուն. 13, 20)։

ԺԸ. Մովսէս Կաղանկատուացի. թ. 121-123 (Փետր. 24, Մարտ 3, 10)։

III. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա. Ա. Գրոց զանազան մասերուն հայ թարգմանիչները : «Կողով», ռասկառ» և այս կարգի բառեր բաղդատելով Ա. Գրոց յոյն բնագիրին համապատասխան բառերուն հետ, թարգմանիչներուն նոյն անձը կամ տարբեր անձեր ըլլալնուն շուրջ եզրակացութիւններ . (Սիոն, 1927, էջ 90)։

Բ. ռԱՆԼԻՄԱՓԻՌԴՈՐՈՍ, Գորգի, Բանան և Դաւիթ, Տարբան, Տարօնա, յօդուած՝ երեք մասով Խորենացւոյ մէկ հատուածը բացատրելու համար . (Սիոն, 1927 էջ 376 և 1928, էջ 26, 52)։

Գ. «Գողթան երգերի մասին» . որուն առիթ տուած է Լուի Հ. Գրէյի յօդուածը՝ «Հայաստանի հեթանոսական երգերու տաղաչափութիւնը» լոյս տեսած ի հանդէսին՝ *Revue des Etudes Arméniennes*, VI, 1926, էջ 159. (Հայրենիք Ամսագիր, 1927 Յուլիս էջ 46, Օգոստոս էջ 48)։

Դ. «Բանասէրի յուշատետրից . Համայնական հոգատիրութիւնը հին Հայաստանում» . Փրոֆ. Յ. Մանանդեանի՝ «Ֆէոդալիզմը հին Հայաստանում» գրքին առիթով գրուած : (Համազգային Տարեգիրք, Ա. տարի, 1936, Գահիրէ, էջ 229-240)։

Ե. «Ե. դարու գրական ըմբռնումը» . (Հայրենիք Ամսագիր, 1938 (սխալմամբ պրակին առաջին էջին վրայ տպուած է 1918), Փետր., էջ 104-112, տրտատպուած ռԱկոսաի մէջ, ԽԱ-ԽԲ, էջ 202-214)։

Զ. «Աղաթանգեղոսի մի տեղիքը, Ղեւոնդէսի թղթէն առ Տրդատ թագաւոր» . զեկուցում 1943 Փետրուար 14ի . տե՛ս Ազդաբար, թ. 18 (1943 Փետր. 27)։

Է. «Մովսէս Խորենացւոյ մասին դիտողութիւններ» . զեկուցում 1945 Դեկտեմբեր 16ի . քաղուածներով Աղբալեան կ'ապացուցանէ Խորենացւոյ պատմութեան բնոյթը . իսկապէս պատմութիւն չէ ան, այլ պատմական նիւթերու հմուտ մի մարդու թղթակցութիւն հարցասէր իշխանի մը հետ, որ ունի պատմական հետաքրքրութիւն : (Ակոս, ԺԲ (1946) էջ 103)։

Ը. «Գրիգոր Նարեկացի և Կորիւնք, Գ. Նարեկացին ոչ միայն կարդացած է կորիւնի գործը, այլ և մեծապէս ազգուած է անօր բառաբարդութեան՝ եղանակէն . զեկուցում նոյն օրեւան» : (Սեւան, պարբերագիրք, Հալէպ 1946, Ա. պրակ, էջ 75)։

Մանօք .— Աղբալեան այս երեք զեկուցումները կարդացած է Պէյրութ Աէն Ժողէֆ համալսարանի Հայագիտական բաժնի վարիչ՝ Հայր Յ. Մըսըրեանի կազմակերպած Բանասիրական Ասուլիներու պահուն :

IV. ԳՐԱԽՈՍՏԱԿԱՆՆԵՐ ՀԻՆ ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ ԱՌՆՁՈՒԹԵԱՄԲ

1. Հ. Աղ. Մատիկեան՝ «Անանունը կամ կեղծ-Աէքէռս, քննական ուսումնասիրութիւն» (Ազգ. Մատ. Հ), Վիեննա, 1913, (Նոր Հոսանք 1913, էջ, 436):
2. Յ. Մանադեան՝ «Մեկնութիւն ստորագրութեանցն Արիստոտելի, ընծայեալ էլիասի իմաստասիրի» . Ս. Պետերբուրգ, տպ. Դիտութեանց ճեմարանի, 1911, *Bibliotheca Armeno-georgica*, № 1. (Նոր Հոսանք 1913, էջ 617):
3. Գուրեգին Վ. Ցովսկիեան՝ «Խոտակերաց Ս. Նշան. մի նմուշ ժող. դարու հայ ոսկերչութեան. 1912. հրատարակութիւն «Գեղարւեստ հանդէսի. Նոր Հոսանք, 1913, էջ 924):
4. Պրոֆ. Դկտ. Յ. Մարկուարս՝ «Պատմութիւն հայերէն նշանագրերու և վարուց Ս. Մաշթոցի», թրգմ. Հ. Ա. Վարդանեանի (Ազգ. Մատ.) Վիեննա, 1913, (Նոր Հոսանք, 1913, էջ 1100):
5. «Մովսէս Խորենացի» (Մատենաշար «Պատմագիրք Հայոց», Հատ. Երկրորդ, Գիրք Առաջին), Թիֆլիզի քննական հրատարակութիւնը, 1913. (Նոր Հոսանք 1913, էջ 1513):
6. Կ. Կոստանեան՝ «Վիմական տարեգիր» (Նոր Հոսանք, 1914, էջ 302):
7. Հ. Ն. Ակինեան՝ Եղիշէ վարդապետ և իւր Պատմութիւնն Հայոց Պատերազմի. Ա. հատոր Վիեննա 1932 (Սին, 1933, էջ 220):
8. Հ. Ն. Ակինեան՝ Դասական հայերէնն և վիեննական Մխիթարեան Դպրոցը. Վիեննա 1932. (Հայրենիք Ամսագիր 1933 Յուլ. էջ 164 171):
9. Ն. Մառ եւ Մ. Բրիեր՝ Վրացերէն լեզուի քերականութիւն (N. Marr et M. Brière, *La Langue Géorgienne*, Paris, 1931. Վեմ, Գիրք ԺԲ. 1935, էջ 114):
10. Աղիչե Պատր. Դուրեան՝ Պատմութիւն Հայ Մատենագրութեան. Երուսաղէմ, 1933 (Հայրենիք Ամսագիր, 1936 Յունուար, էջ 166-176):
Այս գրախօսականին, Նոտար ծածկանունով, Թորգոմ Պատր. Գուշակեան անդրադարձած էր Սինի մէջ (1936 Մարտ) Աղբալեան կը պատասխանէ Յուսաբիր օրաթերթին մէջ՝ 1936, Մարտ 28, 30, 31 և Ապրիլ 1:
11. Պրոֆ. Յակոբ Մանանդեան՝ Թէովնեայ յաղագս ճարտասանական կրթութեանց, հանդերձ յոյն բնագրաւ. Երեւան, 1938 (Հասկ, 1943, էջ 254-258):

ԳԼՈՒԽ Գ. ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

1. Ն. Աղբալեան ուսումնասիրած է Սայաթ Նովայի տաղերը գլխաւորապէս 1912-1914 տարիներու ընթացքին։ Մեծ Աշուղին նըւիրած բանախօսութեանց համար, առև «Հորիզոն»ի այն ատենուան թիւերը, ուր խօսած է նաև Աշուղին տաղաչափական թերիներու մասին։

2. Աշուղին տաղերուն երկրորդ տպագրութեան համար (Թիֆլիս, 1914, տալ. Ն. Աղանեանի), որ բնագրական տեսակէտով պարզ արտատպութիւնն է Ախմէրդեանի հրատարակութեան, Աղբալեան պատրաստած է բառացանկը։ Կ'իմ'անանք որ իր անտիպներու ծրարին մէջ ունի պատրաստ մեծ աշխատանք մը՝ Սայաթ Նովայի բառարանը։

3. «Դիտողութիւններ Սայաթ-Նովայի մասին» խորագրով երկու յօդուած «Հանդէս Ամսօրեալ»ի մէջ, 1924, էջ 259 270, 360-368։ Ենթատիտղոսներն են. — Ա. Նոյն բառի տարբեր գրութիւններ. — Բ. Բառերի և մասնիկների կից և բաժան գրութիւններ. — Գ. Պակասորդ տառեր. — Դ. Բնագրի սխալ ընթերցում. — Ե. Տաղաչափութեան խախտումներ. — Զ. Կէտագրական ուղղումներ։

4. Սայաթ-Նովայի տասը առաջին տաղերուն մեկնութիւնը, յառաջաբանով. 24 յօդուածի բաժնուած «Ազդակ» շաբաթօրեակի մէջ՝ 1944 և 1945 տարիներու ընթացքին. (Ա. տարի, թիւ 1-7, 9-11, 13-16, 18, 20, 22, 43, 48, 49. — Բ. տարի, թիւ 1-3 (52-54), 10-11 (61-62))։

5. «Սայաթ-Նովայի սէրը» (Ազդարար, թիւ 71 և 72, 1944 Մարտ 11 և 18)։

6. Աշուղին մահուան 150 ամեակին առիթով բանախօսութիւն. (Ազդակ, Գ. թիւ 6 և 7 (109 և 110), Ապրիլ 1946. — Ազդարար, թիւ 179-181, 1946 Մարտ 6, Ապրիլ 13 և 20)։

7. «Սայաթ-Նովայի հետ զուգահեռ» (Ազդակ, Գ. թիւ 13 (168), 1947 Մայիս 23)։

ԳԼՈՒԽ Դ. ԱՐԴԻ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋ

1. ԳՐԱԿԱՆՔ, ՔՆԵԱԴԱՏԱԿԱՆՔ ԵՒ ՑՈՒՇԵՐ
(ԱՐԴԻ ԳՐԱԴԱՐ ԵՒ ԱՆՁԵՐ)

1. Աղբալեան «Մուրհի մէջ 1897ին, Յուլիս-Օգոստոսի թիւ, ունի յօդուած մը» (արտատպուած «Ակոս»ի մէջ, գիրք ԻԱ.-ԻԲ, էջ 159), ցուցնելու համար «գիւղացի»ին բռնած տեղը հայ աշխարհիկ գրականութեան սկզբնաւորութեան շրջանին։

2. Լեւոն Շանթի «Երազ Օրեր» և «Լեռան Աղջիկը» գրքերն աւքննուած են Աղբալեանի կողմէ «Մուրհի մէջ, նոյն տարին» ?։

3. Աւետիք Խսահակեանի «Երգեր ու Վէրքեր», Աղեքսանդրապոլ, 1898 (Մուրն, 1898, թիւ 6 և 12).

4. Աւետիք Խսահակեանի «Բանաստեղծութիւնները», Բագու, 1903. ուսումնասիրուած «Երգ ու Վէրքից յետոյ» խորագրով ի պարբերականին՝ «Բանբեր գրականութիւն եւ Արուեսի», Բ. գիրք, 1904, էջ 189. կրկին տպուած «Ակօսի մէջ, իԱ.իԲ, էջ 162. 171).

5. «Անտոն Զեխով» մահուան առիթով «Մօակոի մէջ 1904ին. արտատպուած «Երիտասարդ Հայունի» պարբերաթերթին մէջ, թիւ 11 (29), 1947 Նոյեմբեր 1, էջ 7-12.

6. Վահան Տէրեանի «Մթնշաղի Անուրջներ», 1908ին լոյս աեսած, գրախօսուած ո՞ր պարբերականի մէջ.

7. «Երազ և մեկուսացում». մեծ ուսումնասիրութիւն Լեւոն Շանթի «Հին Աստուածներ» գրամայի հրատարակութեան առիթով (Նոր Հոսանք, 1913, էջ 167-180, 416-431, արտաապուած «Ակօսի իԱ.իԲ և իԳ. հատորներուն մէջ).

8. Թիւ 7ի նիւթին շուրջ, աե՛ս Աղբալեանի գրախօսականը ի գիրքըն Գր. Տէր-Պօղոսեանի «Լեւոն Շանթի Հին Աստուածները և Ստեփաննոս Վահականի յիշատակարանը», Շուշի, 1913, 60 էջ. (Նոր Հոսանք, 1913, էջ 432-436).

9. «Ստեփաննոս Նազարեանի երկերը, հատոր I. կենսագրական ակնարկով», Թիֆլիս, 1913, էջք ԾԱ. + 428. Ն. Աղբալեան գրած է կենսագրական ակնարկը, 51 էջեր. որ կը կտզմեն յառաջաբանին ԺԵ.ԾԱ. էջերը. աե՛ս այս մասին Արտաշէս Արեղեանի գրախօսականը (Նոր Հոսանք 1913, էջ 1517).

10. Աւետիք Շահխաթունեան. բնութագիր՝ մահուան առիթով՝ գրուած Ն. Աղբալեանի կողմէ («Հորիզոն», 27 Հոկտեմբեր 1918. արտատպուած «Ա. Ա. մէջ, գիրք Ա. 1933, էջ 127, կրկին տպուած «Ազգարարի մէջ».

11. Արմենուհի Տիգրանեանի (Մենուհի) «Բանաստեղծութիւններ», 1914: Թիֆլիս. (Նոր Հոսանք, 1914, էջ 642-651).

12. «Գիւտ Եպիսկոպոս». (Ցուշեր և բնորոշում). (Հայրենիք Ամսագիր, 1937 Մայիս, էջ 75-79. արտատպուած Ակօսի մէջ, իԱ.իԲ. էջ 195-201).

13. «Յառաջաբան» գրուած Ն. Աղբալեանի կողմէ ժաղ. Ա. Յակոբեանի գրքին՝ «Կապոյտ Աշխարհ Երազի. քնարավէպ. Մեղրալուսինց Գահիրէ, 1943.

14. Հ. Ա. Այտընեանի մասին ըրտծ բանախօսութեան շատ կարճ ամփոփում մը (Ազգարար, թիւ 11, 1943 Յունուար 9).

15. Լեւոն Շանթի «Հին Աստուածները, Համազգայինի թատերասէրնեւուն կողմէ ներկայացման առիթով» (Ակօս, Բ. 1944, էջ 128).

16. Մանուկ Արեգեան, մահուան առիթով. Ազդարար թ. 110, 1944
Դեկտեմբեր 9):

17. «Եղիշէ Զարենցն ու հս», նիւթ Հայոց գրապատմութեան համար. հին յարաբերութիւն և թղթակցութիւն, (նկարագրուած Ակոսի մէջ, Զ. 1945, էջ 93-105):

18. Աւետիք Խաչակեանի 70 ամեակը. (Ազդակ, Բ. 51(102), 1946 Փետրուար 15.— Ազդարար, թիւ 170 և 171, 1946 Փետր. 2 և 9):

19. Աւետիք Ահարոնեանի 80 ամեակը. (Ազդակ Դ. թիւ 10 (165), 1947 Մայիս 2.— Ազդարար, թ. 235, 1947 Մայիս 3):

20. Լ. Շանթ, յարգանքի երեկոյթին առիթով. (Ազդակ, Դ. թիւ 16 (171) և 17 (172), 1947 Յունիս 13 և 20.— Ազդարար թ. 241, Յունիս 14.— Մասիս, Ա. թիւ 25. Յունիս 18):

21. Յ. Թումանեանի «Աղաւնու վանքը» (Ակոս, ԻԱ-ԻԲ, էջ 215-225):

22. Քանի մը չափածոյ գրութիւններ. տես երկու հատ՝ Ակոսի մէջ ԻԱ-ԻԲ, էջ 193, 194:

23. Ինազիր կամ ամփոփում չունիմ Աղբալեանի հետեւեալ դասախոսութիւններէն՝ Ֆիրտուսին և իր Շահնամէն (1934), Միք. Վարանդեան՝ զրագէտ-հրապարակագիրը (1935), Հայագէտ Պրոֆ. Ն. Մառ (1936), «Հանգէս Աժաօրեայ» ուսումնաթերթի յիսնամեակը (1938), Հայր Յ. Տաշեան՝ մահուան առիթով, Արշակ Զօպանեան (1938), Ակոսէլ Բակունց (1939), հայ Աշուղներ (1941ին). շատ կարճ ամփոփում Զարքօնիք օրաթերթի մէջ, Մարտ 7ի (թիւ):

II. ՊԱՐԶ ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ ՆՈՐ ԳՐԱԴՆԵՐՈՒԻ ՎՐԱՅ

1. Սիլրի՝ «Ծիլ ու ծաղիկ», 7 Նովելլաներ և տրձակ բանաստեղծութիւններ, 96 էջ. (Թիֆլիս ?) (Նոր Հոսանք, 1913, էջ 181):

2. Գրական Ասուլիսներ. Հրատարակութիւն Էսայեան Սանուց Միութեան, կ. Պոլիս. Ա. Հին Աստուածները, 39 էջ, 1913.— Բ. Գրիգոր Զոհրապի նորավեպերը, 32 էջ, 1913 (Ն. Հ. 1913, էջ 620):

3. Աբգար Պայազա՞ս՝ «Էսքիզներ», (Ն. Հ. 1913, էջ 918):

4. Ար. Խնկոյեան՝ «Ծիտն ու որբերը», հէքեաթ, 1912 (Ն. Հ. 1913 էջ 920):

5. Աւրալես՝ «Ճկաններն ու Վամպիրը», առակ, 1912 (Ն. Հ. 1913, էջ 921):

6. Ա. Զանեան՝ «Լիլի», Բագու, 32 էջ (Հ. Ն. 1913, էջ 922):

7. Վարդան Քամալեանց (Խարբերդցի)՝ «Հառաչանք», 1912. (Ն. Հ. 1913, էջ 923):

8. Զարուհի՝ «Կամքի ոյժը», 1912 (Ն. Հ. 1913, էջ 923):
9. Օր. Շուշ. Տիկողայոսեան՝ «Առաջին հիասթափութիւն», 1912 (Ն. Հ. 1913, էջ 924):
10. Անատոլ Ֆրանս՝ «Երեք դար ու կես յետոյ. ծննդեան տօնի ֆանտազիա» (թրգմ.) (Ն. Հ. 1913, էջ 1104):
11. Գ. Մեսեան՝ «Բաւոր Գարրիէլը»՝ հէքեաթ. (Ն. Հ. 1914, էջ 651, ստորագրուած *Und Doch=ն. Ա. որովհետեւ այս գրախօսականին ճիշդ նախորդը Աղբալեանին էր*):
12. Գր. Քան. Գորգեան՝ «Կարկուտ», արտատպուած «Հասկեր»ից (Ն. Հ. 1914, էջ 651, ստորագրուած *Und Doch, նոյն պայմաններու մէջ*):

ԳԼՈՒԽ Ե. ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ

(Ն. ՀԱՆԳՈՅՅ ԾԱԾԿԱՆՈՒՆ Է Ն. ԱՂԲԱԼԵԱՆԻ)

1. «Բալկանեան Դաւնակցութիւն», Nicol ստորագրութեամբ (Ն. Հ. 1913, էջ 219-225, 658-661):
2. Ն. Աղբալեանի Հայաստանի Հանրապետութեան իորհրդարանին մէջ 1919-1920ին արտասանած ճառերուն համար, տե՛ս Ս. Վ. Վրացեանի հատորը՝ «Հայաստանի հանրապետութիւն» 1928. Փարիզ:
3. «Լեւոն Թադեոսեանի յուշերը», գրի առաւ Հանգոյց. (Հայրենիք Ամսագիր, 1923 Մայիս, 1925 Նոյեմբեր):
4. «Մ. Շարիրեանի յուշերը», գրի առաւ Հանգոյց (Հայրենիք Ամսագիր, 1923 Մարտ, Ապրիլ, Մայիս, Սեպտեմբեր):
5. «Սամսոնի յուշերը», գրի առաւ Հանգոյց (Հայրենիք Ամսագիր, 1923 Օգոստոս, 1924 Փետրուար-Օգոստոս):
6. «Մտածումներ Հ. Յ. Դաշնակցութեան մասին», Փոքրադիր 120 էջնոց: Հրատարակութիւն Հ. Յ. Դաշնակցութեան, 1930 (Մատենաշար «Դրոշակ», թիւ 68):
7. «Մեր կանոնագիրը» (Այսինքն Հ. Յ. Դ.): Փոքրադիր գրքոյկ 16 էջնոց. տպ. «Արագ» Ս. Բախտիկեանի, Պէյրութ, 1937 Մայիս: (Ընկերական Զրոյցներ, N^o 1): — Տե՛ս այս մասին Ս. Վրացեանի գրախօսականը՝ «Վեմ», գիրք ԺԹ. 1937, էջ 108):
8. «Կրկին մեր կանոնագիրը», 16 էջ. նման նախորդին և նոյն նիւթին շարունակութիւն. նոյն տպարան և թուական. (Ընկերական Զրոյցներ, N^o 2):
9. «Մտածումներ» Ազգի և Դաւանանքի մասին». (Վեմ, գիրք իբ. 1938, էջ 1-7):

ԳԼՈՒԽ Զ. ԲԱԶՄԱՋԱՆ ՆԻՒԹԵՐՈՒ ՇՈՒՐՋ

(ՄԵԾ ՄԱՍԱՄԻ ԲԱՆԱԿՈՍՈՒԹԻՒՆՆԵՐ)

1. «Յարդանքի խօսքեր» Թորգոմ Պատրիարք Գուշակեանի մահուան առիթով, քաղուած Աղքալեանի ցաւակցական նամակէն (Սիոն 1939, էջ 113):
2. «Հին ու նոր ապրումներ», Վասպուրականի հերոսամարտին ամեակին առիթով (Հայրենիք Ամսագիր, 1940, Մայիս, էջ 4):
3. «Մի՛ կոնդէ», մեկնութիւն ժողովրդային երգի մը (1943 Մարտ 13, Ազդարար թիւ 20):
4. Հ. Մ. Բ. Մ.ի մասին (1943 Յունուար 12 Ազդարար, թիւ 33):
5. «Սասունցի Դաւիթ» (1943 Դեկտեմբեր 18. Ազդարար, թիւ 59):
6. Հ. Մ. Բ. Մ.ի 25 ամեակը (1944 Յունուար 15. Ազդարար թիւ 63):
7. «Օգնութեան իշաչի բարերար դերը» (1944 Մայիս 20, Ազդարար, թիւ 81):
8. «Մանուկ Ասլանեան», մահուան առիթով (1944 Դեկտեմբեր 16. Ազդարար, թիւ 111):
9. «Զատկական զրոյց» (1945 Մարտ 30. Ազդակ, Բ. թիւ 5 (56):
10. «Վանի հերոսամարտը» (1944 Մայիս 19, Ազդարար, թիւ 133):
11. Հ. Յ. Դաշնակցութեան մասին (1945 Նոյեմբ. 2. Ազդակ. Բ. թիւ 36 (87):
12. Տարելից Մ. Ասլանեանի մահուան (1945 Նոյեմբ. 17. Ազդարար, թիւ 159):
13. «Ես ծեր եմ արդէն և ասում եմ երիտասարդ հոգիներին», ամավերջի պատգամ. (1945 Դեկտեմբեր 29. Ազդարար, թիւ 165):
14. «Մայիս 28». (1946 Մայիս 26. Ազդակ, Գ. թիւ 13 (116):
15. «Բարսեղ կանաչեան, որպէս մարդ». էջ 9-10 հետեւեալ գըրքոյկին մէջ. «Բառասնամեայ յորելեան Բարսեղ կանաչեանի երաժշտուկան գործունէութեան (1906-1946). կենսագրական նօթեր». հրատարակութիւն «Բ. կանաչեան Յորելինական Յանձնախումբի», Պէտրութ, 1946:
16. Ռւզերձ յորելեար Բ. կանաչեանին (Ազդարար, թիւ 188. 1946 Յունիս 8):
17. «Մտածումներ Հ. Յ. Դաշնակցութեան մասին» (Ազդակ, Գ. թիւ 38 (141), 1946 Նոյեմբեր 17):
18. «Մի քանի մտքեր հայ մշակոյթի մասին» (Ազդակ, Գ. թիւ 40 (143). 1946 Նոյ. 29.— Ազդարար, թիւ 213. 1946 Նոյմ. 30):
19. «Վարդանանք» (Ազդակ, Գ. թիւ 52 (155). 1947 Փետր. 21):
20. «Մայիս 2» (Ազդակ, Գ. թիւ 14 (169). 1947 Մայիս 30):

ՅԱԿԵԼՈՒԱԾ

1. «Քեռին», ճառ յուղարկաւորութեան առիթով. (Թիֆլիսի Հորիզոն, 1915 Մայիս 29.— Արտատպուած Հայրենիք Տարեգիրքի մէջ, 1943, էջ 75—86, երկու նկարով):
2. «Ներսէս Արքեալ. Մելիք-Թանգեան», անձնական տպաւորութիւններ. ճառ յորելեանի առիթով արտասանուած Գահիրէի մէջ. (Յուսաբեր, 1926 Յունիս 12):
3. «Մի կարճ խօսքի երկար մեկնութիւն», սահեղծադործ հոգեբանութեան մի էջ. լ. Տոլստոյի՝ «Պատերազմն» ու խաղաղութիւնը վէպը պատրաստած ատեն՝ ձեռնարկին դժուարութիւնը արտայայտող խօսքի մը մասին. (Յուսաբեր, հինգ յօդուած, 1927 Մայիս 20, 21, 23, 24, 25):
4. «Անդրանիկ», ճառ մահուան առիթով արտասանուած Աղեքսաննդրիոյ մէջ (Յուսաբեր, 1927 Հոկտեմբեր 18.— արտատպուած Ակոսի մէջ, իԱ.—իԲ (1947)՝ էջ 189—192):
5. «Ստեփան Եսայեան», մահուան առիթով դրուած (Ազդակ օրաթերթ, 1940 Մարտ 31):
6. «Դէյրութի մէջ ներկայացուած» լ. Շանթի «Օչին Պայլ»ի մասին վերլուծական դրութիւն և Գ. Իգիէկեանի «Արա Գեղեցիկ և Շամիրամ»ի մասին յօդուած Յուսաբերի մէջ, 1932 տարւոյն շուրջ:
7. «Նայիրի» ամսագրին մէջ, Գ. տարի (1947), արտատպուած է լ. Շանթի գործերուն մասին Աղբալեանի կարդացած բանախօսութիւնը (էջ 308) և տպուած են երեք պատառիկներ՝ էջ 433, 440, 537:
8. Ն. Աղբալեանի ինքնակենսագրութիւնը մինչեւ 1928 թուականը, և գրչի խաղերէն նմոյշներ. «Հայրենիք Տարեգիրք», 1948, էջ 204-8,



ՎԵՐՋԱԲԱՆԻՑ ՏԵՂ

Մեր կարելին ըրինք, ունեցած միջոցներովնիս, ցուցակադրելու համար հանգուցեալ մտաւորականին ամենակարճ գրութիւններն իւղի, մասնաւանդ իր կեանքին վերջին տարիներէն։ Եթէ իր գրութեանց թողօնը բացուած ըլլար, այս աշխատանքնիս աւելի լիակատար կ'ըլլար հնագոյն շրջաններուն համար ալ և կրնայինք կցել իր Մատենագիտութեանը՝ իր անտիպներուն ցանկը, որ ձոյս կը թուի ըլլար։

Ընթերցողիս մաքին մէջ կը ծաղի անշուշտ հարցում մը թէ ի՞նչ է ինքնատիպը, անձնական «գիւտ»ը ։ Աղբալեանի՝ մանաւանդ իր կարեւորագոյն աշխատանքներուն մէջ, որոնք լեզուաբանութեան և հին Հայոց դպրութեան կը վերաբերին։ Այդ մասին ակնարկութիւններ ըրինք մեր ուսումնաօիրութեան մէջ. ամբողջական պատասխանի մը համար երկարագոյն պրատումներ և մանաւանդ էջեր պէտք էին, որովհետեւ Աղբալեան յարատեւ ընթերցող և կարդացածին վըրայ որոճացող, աղբիւրներու նշանակումին համար ալ մասամբ անհոգ ըլլալուն, ինք իսկ գժուարաւ կը զանազանէր ուրիշինը. իր մէջ ենթագիտակիցին բաղադրածը և իր անձնական համագրութիւնը։ Ամեն պարագայի տակ առ նուազն արտայտութեան տարազը անոր քով էր միշտ ինինատիպ և շատ հաճելի։



ՆԻՒԹԵՐՈՒ ՑԱՆԿ

Ա. Մ Ա Ս

Ն. ԱՂԲԱԼԵԱՆԻ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԵ


	<i>էջ</i>
ՅԱՌԱՋԱԲԱՆ	3
ԳԼՈՒԽ Ա. ԼԵԶՈՒՄԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	5
1. Հայ լեզուի ըետագրութիւնը	5
2. Աղբականի լեզուաբանական մեքուր	21
3. Լեզուաբանական դպրոցի խնդիրը	43
ԳԼՈՒԽ Բ. ՀԻՆ ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՉ	50
1. Ներածական բաժյն	52
2. Մատենագրական մենագրութիւններ	54
3. Գրախոսականներ	56
ԳԼՈՒԽ Գ. ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆԸ	56
ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ	60

Բ. Մ Ա Ս

Ն. ԱՂԲԱԼԵԱՆԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ

ՅԱՌԱՋԱԲԱՆ	61
ԳԼՈՒԽ Ա. ԼԵԶՈՒՄԲԱՆԱԿԱՆՔ	62
ԳԼՈՒԽ Բ. ՀԱՅ ՀԻՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ	65
ԳԼՈՒԽ Գ. ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ	69
ԳԼՈՒԽ Դ. ԱՐԴԻ ԴՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՉ	69
ԳԼՈՒԽ Ե. ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍՏԱՐԱԿՈԳԻՏԱԿԱՆ	72
ԳԼՈՒԽ Զ. ԲԱԶՄԱՋԱՆ ՆԻՒԹԵՐՈՒ ՆՈՒՐՉ	73
ՅԱՒԵԼՈՒԱԾ	74
ՎԵՐՋԱԲԱՆ	75
ՆԻՒԹԵՐՈՒ ՑԱՆԿ	76






ԳԱԱ Դիմնարար Գիտ. Գուադ.



FL0590651

Mr.
Bgn



Արտատպուած «ԱԿՈՍ» Պարբերագրքէն
Թիւ ԻՍ.-ԻԲ եւ ԻԳ. (1948)